յետ դառնալոյ ժամանակը երեւելի պարզեներ: Կնեազ
Մատաթովը ժողովրդեան մէջ կարգ ձգելով յանձնեց
նորա կառավարչութիւնը Տարկովու Հասխալին փեսայ
Երդուլ-Շաղախ-Բէկին, որին և Գաատի (գատաւոր
Տաճկաց) նշանակելով դօրքով թողեց այնտեղ բնա-
կիչներին պահպանելոյ համար, և ինքն զօրագնդովը
վերադարձ դէպի Մարադա զիւղը:

Եւ այսպէս մի վճռողական և վստահ հարուածով,
և որ ամենիցն առաւել է փառաւորիցնում յաղթովին
համարեալ թէ առանց արին թափելոյ, նուաճուեց ամ-

բողջ Տարասարանը:

Գիներալ Աքմոլովը այս մասին 1819 ամի Օգոստոսի 22-իցն աեղեկութիւն ստանալով, Անեադ Մատաթուփին զբեց 'ի միջի այլոց. «Դուք արիք այն ամենը, ինչ որ ես կարողէի սպասել, և որն՝ ինչպէս ես գիտեմ, այնքան հեշտ չեր կատարել: Արգուլլա-Բէկին խորտակումն պէտք է անշուշտ լաւ ներգործութիւն ունենայ մեր գործերի վերայ, պատճառն որ թշնամիները կ' տեսանեն, որ առանց մեր զօրքը բանեցնելոյ, նոյն իսկ բնակիչներն են քաջութեամբ պատերազմում ձեր խոհեմ Ըստաջնորդութեան ներքյ: Քաջ զիաելով ձեր գերազանց ծառայութիւնը, ձեզ վերայ յանձնարարութիւններ գնելիս, յայտնի էին ինձ արգեն և նոյն իսկ հետեւանքներն,,,: (12)

Այս մասին Գիներալ Աքմոլովը ամենախոնարհ յայտարարութիւն առաքելով Տէ՛ՅՈՒՆ ԿԱՅՍԵՐ ի միջի այլոց ասումէ. «աւելորդ եմ համարում այն օֆիցիերի քաջութեան գովիստները, որ բաղդ ունեցաւ յայտնի լինել Զերդ Մնծութեան, բայց պէտքէ արդար ասել, որ թշնամոյ խորտակումն առաւել, քան երբ որ լեռնասուն ժողովուրդները երդուեցին միանալ մեր դէմ, ներգործութիւն ունի մեր գործերի վերայ, և Գիներալ Մայիօր Անեադ Մատաթուփին արած յառաջադիմութիւնը պատկանումէ նորա յատուկ մտածողութեանը և իւր գործառնութիւնը արագութեամբ կատարելուն: Համարձակիմ յուսալ, որ Զերդ Կայսերական Մնծութիւնը կ' բարեհաջածէ ընդունել, որ Գիներալ Մայիօր Անեադ Մատաթուփը Զարդեց թշնամոյն միայն թամբարի զօրքովը, և չկայ մի Որուս սպանեալ կամ վիրաւորեալ,,,: (13)

«Զօրքը մինչև Սեպահմբերի 1-ը բանակեց Մարտ-

զա գիւղի մօտ, և էն ժամանակը Անեադ Մատաթովը
համոզուած լինելով, որ Տարասարանու բնակիչները
կատարեալ խոնարհութիւն ունին, անցաւ Դէրքենատի
միւս կողմը և բանակը զրաւ Դարրախ ամրոցի մօտ,
դէպի Տարկի տանող մեծ ճանապարհին վերայ: Եորա
աջ թեր Ասպից ծովեղերքին էր հասնում և այսպէս
կարողանումէր պաշտպանել ՚ի նորոյ ձեռք բերեալ Տա-
քասարանը և սպառնալ զեռ ևս չնուածեալ Թարաքա-
մաների, Բաշեցւոց և Պարաղայդաղցւոց գիւղերին,
որ մերձաւոր դրացի էին Ակուշեցիների հետ: Թարա-
քամաների գիւղերը բանակիցը մօտ էին. և ամէնքն էլ
ընկած էին թանձր անտառներով ու այգիներով՝ և մի
քանիսն էլ գիտութեամբ փորուած փոսերով, շրջա-
պատած գաշտերի վերայ: Մեր գօրագնդի լանկարծ
այդքան մօտ լինեն մեծ զարհուրաների մէջ ձգեց նրանց:
Ապստամբ Շէկերից շատերը զօրաժողով լինելով Խմբ-
ամզի իշխանութեան ներքոյ եղեալ Ուլու Թարաքա-
մա և Գիմիւքէնա զիւղերումը և Խրահ-Շէկին պատ-
կանեալ Իներկէյ զիւղաքաղաքումը աշխատումէին խռո-
վել Պարաղայդաղը:

Ուցմէյլ՝ այս բազմամարդ և պատերազմական գաւա-
ռի իշխողը, չնայելով՝ որ ինքն է ինչը իւ Ուուսաց
պաշտպանել իւր տէրութիւնները վրդովող ապստամբ-
ներիցը՝ և ազգականների այն զրկանքիցը, որ վիճումէին
նորա Ուցմէյնան արժանաւորութեան վերայ ունեցած
իրաւանց վերայ, պատրաստ էր, ինչպէս վերջը յայտ-
նուեց, առաջին յարմար զիպուածումը իւր հալատակ-
ներին Ուուսաց դէմ յարուցանել: Անեադ Մատաթովը
Թարաքամաների զիւղերիցն մօտենալով պահանջեց,
որ Ուցմէյլ օդնէ իւրեան, ընդ որ և համաձայնուե-

ցաւ նա: Սորս որդին, որ մինչեւ այս՝ տպատանդ էր պահուած Դիրքենառումը, հօրը ևնդպիսվը հրաման ըստացաւ գանուիլ բանակի մէջ և երդուեց հաւատարիմ հպատակ լինիլ:

Ըստ սրտնից յետոյ Վնեազ Մատաթովը իմացաւ, որ բոլոր Բնէկերը զօրաժողով են եղել Թարաքամաների գիւղերումը: Եւ որպէս զի նոցա գիտաւորութեան առաջն առնու և միանգամայն ոչնչացնէ, նա 500 մարդ հետեակ վեր առաւ երկու թնդանօթներով, 150 Պատրիարք մասն ինչ ձիաւոր երկը խանութիւնիցը, նոյնպէս և Արքիցը ու Տարասարանիցը, և բոլոր ծանրոցքը թողելով բանակումը ընդ հովանաւորութեամբ բաւական հեծելազօրաց, ինքն զիւերը՝ յորում պէտք է լուսանար Վեպտեմբերի Կ-ը եւազաց դէպի Թարաքամաների գիւղերը: Չօրը զնումէին արագընթաց, բայց անընդ միջահատ արգելքներ էին պատահում նրանց, այն է Դաշտերը ջրելոյ համար փորած փոսեր, որք էին տանց կամքջի և անթիւ բազմութեամբ կարումէին նաև նապարհը, բայց Վնեազ Մատաթովը չնպիրով սրան, լուսարացին հրամայեց Պօդպոլիսինի Միշէնիին, որ առնելով իւր հետ հետեակ զօրքը և զայախները՝ յարձակուի շուտով Բնէրիքէյ գիւղի վերաց, իսկ ինքը Թաթար ձիաւորովը պատելով Բաշլիցւոց կողմից եղալ դժուար տեղերը՝ յարձակուեց մի վայրկենում Ուլու Թաթարացամա գիւղին վերաց, և հետեակ զօրքին հետ եւ միասին Լեզիններին հետ պատերազմ մտաւ, ջարդեց նրանց ամէն ժամանակ, զուրս հալածեց փոսերով տիւքացած գիւղերիցը և ցանուցիր արաւ մերձակայ անանցանելի Տմակներին մէջ, և Պաղախներին հրամայեց հետապնդիլ այդ չարախորհուրդներիցը զիսաւորին Խրահ-Բնէկին նորա զօրեղ խումբին հետ, որոյ կողը

տիգակոց լինելով՝ թաղկացաւ անտառների մէջ և
Մինչև Անեազ Վատաթովի հասնելը, բնակիչները
իւրեանց ամէն կայքը 500 սայլերով (արճա), և 3000 սնա-
սուն (շոտր) ընդ հովանաւորութ երեկի հեծելազօրաց
ձանապարհել էին դէպի Շաշի քաղաքը, բայց պյտ
ամէնը Պարագաղցի ձիաւորները և մասամբ ինչ Առւ-
րեցիք սաստիկ կոփւ անելից յետոյ վերջապէս եղեցին
Շաշլի քաղաքին մօտ: Որպա հնո՞ւ ՚ի միասին բռնուե-
ցան և շատ կանաչը ու երեխայք, որոց ամէնին էլ
Անեազ Վատաթովը յետ դարձրուց վերստին դէպի
իրանց աները, կամենալով ցոյց տալ, թէ Ուուաք որ-
քան մեծահողի են, ազատեց նա և դերիներին բաց ՚ի
24 Ռէկի Նիւքերներ, որոց ուղարկեց Դէկրենտի բեր-
գաշնութեան համար մշակութիւն անել, բայց նրանց
էլ աղատութիւն խոստացաւ միայն այն ժամանակը,
երբ որ իւրեանց տէրերը հաւատարմութիւն ցոյց տան-
իսկ աւար առած անասունների մէկ մասը տուաւ զօր-
քին, և միւս մասն ուղարկեց Պուրա շարժական կա-
րաւանին համար: Այս կովումը թշնամոյ կողմիցը վի-
րաւորուածների և սպանեւածների թիւը հասնումէր մին-
չև 200, իսկ մէր կողմիցը երկու զազախ էին վիրաւոր-
ուել, այն էլանվանդ և ըոլոր թաաթար ձիաւորների-
ցը միայն 25 մարդ էր, թէ սպանուածը և թէ վիրա-
ւորուածը: Այս միջոցումը Ուցմէյը, ոչ թէ միայն
ինքն նենդաւոր գտնուեց, այլ իւր որդւոյն ևս յօ-
ժարեցրուց փախչել, որ մէկ քանի օր առաջ Դէկ-
րենտումը երդուել էր հաւատարիմ հապտակ մնալ:

Ծարագամի բնակիչներին Անեազ Վատաթովը հչ
թէ միայն մի փոքր զրկանք էլ չեր հասցնում, այլ
և դիտելով նոցա սովորութիւնները ու կարօտութիւն-
ները, այնպիսի քաղցրութեամբ էր վարվում նոցա հնու,

որ գլխաւորները միաբան մատղեցին հեռանալ Ուցմէյի
իշխանութիցը և խոնարհութեամբ գալ բանակը ու ցոյց
տալ, որ պատրաստ են երդուիլ վան հաւատարմուշ
թեամբ ծառայելոյ Թարգաւորին: “Եսքա մտնելով Ուու-
սաց Տէրութեան տակ, խնդրեցին՝ որ իւրեանց միջիցը
մէկին կառավարիչ նշանակին Տարասարանու ամեն գիւ-
ղերին վերայ: Ատաթուին այդ պաշտօնը յանձնեց
Ուցմէյի մարձաւոր ազգական՝ Խմբը ~ Համզա ~ Բէ-
կին:

«Օօրը յետ դառտւ իւր բանակը և Թարգարամա-
ները՝ ի նշան դէպի իւրեանց ցոյց տուած խնայողուելը,
զոհեցին շատ անասուն և հաց, այնպէս որ՝ զօրքին
ամսից էլ աւելի առատ բաւականութիւն տուաւ: Վ.յ.
միջոցումը Անեազ Ատաթուվը տեղեկանալով, որ թշշ-
նամիները՝ ի թիւս որոց և կային Ուցմէյի կողմիցը
3000 մարդ, Հերսինի Երգուլլա-Բէկի առաջնորդու-
թեան ներքոյ, հաւաքուելեն Բաշլի քաղաքը և Բաշ-
լեցիք մտալրիլ են ընդդէմ կալ Ուուսաց, Հոկտեմբերի
Ա-ին խաղաց գէպի այն տեղ:

Անեազ Ատաթուվը իմանալով, որ այդ քաղաքը
կսնվումէ մէկ կիրճի ծայրում, որոյ մուտքը Բաշլեցի
պահապանների նկատողութեան տակն էր, և որ անկա-
րելի է յանկարծակի յարձակմունք առնելը, այնպէս
վճռեց, որ զօրքը երկու անցքով տանէ և չնեղացնէ
նրանց արագընթացութեամբ: «Օօրը առաջին գիշերը
անցկացրուց յիշեալ կիրճի մուտքին մօտ, 16 վերսա
հեռու Բաշլի քաղաքիցը: Թաշնամեոյ պահապանաց
կրակը պարզ երեսումէր մէկ քանի վերստ հեռու բա-
նակիցը, վասն որոյ և գիշերը ինչ զգուշութիւն որ
հարկաւոր էր ի գործ դրին, որ թշնամին անակնկալ
յարձակմունք չ'անէ, թէպէտ և լեռնարնակ ժողովը-
դեան մէջ սովորութիւն չէ:

Այսու օրը լուսաբացին զօրքը յառաջ խաղաց դէպի
Բաշլի. առաջաւեր հեծելագուղն յետս փախցրուց
կիրճի մուտքումը զանուած պահապաննեին, և զօրքը
շարունակեց հետեւ անվրդով՝ ՚ի Լեռաբնակաց,
որք չկարողացան օգուտ ինչ քաղելանապարհը շրջա-
պատող ժայռոտ լեռներիցը, ուստի մեծ յարմարութ
կարող էին մեզ երեւելի վնասներ հասցնել:

Քաղաքիցն երկու վիրսա հեռու այդ կիրճը լայնա
նալը մէկ բայնատարած ձոր է կազմում այս տեղ Ալ-
նեադ Ամատաթովը հրտմայեց իւր զօրքին պատերազմա-
կան կարգ կազմել և կէս ժամ հանգստանալ, որ բաւական
միջոց է անհամբերութեամբ պատերազմի սպասող զօրքց
համար, իսկ ինքն սյս միջոցումը այրուձիոյ մի մասն
առած զնաց նկատելթէ քաղաքի և թէ նորա շրջակայից
գիրքը, որ ըստ այնմ և հրաման տայ յարձակուելոյ:

Բաշլի քաղաքը շինուած է ինչպէս ամֆիթէատրոն
մի լերան դարուփար զաթիվայրի փերայ, որոյ մինչեւ
ցդադաթնազառաժուտնեղուցներ են: Այդլերան դադաթի
փերայ սփռուած էին մի քանի հաղարաւոր զինավա-
ռեալ Բաշլեցիք, բայց որովհետեւ այդ գագաթը քաղաքի
փրայից շատ էր բարձր, վասն որոյ նոքա չէին կարտղաւ-
նում յարձակողներին մեծ վնաս հասցնել: Նոցա տները
և փողոցները թափուր էին, բայց քաղաքի արեւելեան
կողմի երկարութեամբը ընկած փոքր պատնիշի քամակին
երեւեմէին մի քանի դինավառեալ խումբներ, որք պատ-
րաստ էին պահպանել մուտքերի, իսկ քաղաքի միւս
հակաղիր կողմիցը մի փոքր դետակից դէն, ձգվումէին
անտառապատ լեռներ, իսկ դէպի այդ դետը և քաղաքը
ցցուեալ մի բարձրութեան փերայ կար ըերդանման
մի մեծ քարե շինութեան, ուրանօր նոյնպէս երեւեմէին
սպառազինեալ խումբեր, և անտառի թփապատ եղբնե-

ըումը ծփծփումէին շատ երփներանդ դրօշակներ, որոց շուրջը հաւաքուած լեռնարնակները վայրենի աղաղականներ էին արձակում և հայշոյում։ Սոցա բազմաթիւ լինելը պարզ ապացոյց էր, որ առաջիկայ պատերազմ բոլոր դրացի բնակիչներն էլ հաղորդակցութիւն պէտք է ունենան։

Անեաղ Մատաթովը վերջացնելով իւր նկտազութիւն, ու ըում ժամանակի մեր կողմիցը թարթարի հեծելազօրքիցը մի քանի մարդ վերաւորուել էին հրացանութեան ժամանակը, հրամայեց պատերազմ տալ յետագայ կարգաւու։ Թնդանօթաձիգ զօրքի մէկ մասն պէտքեր հրացան արձակելով մօտենալ գէպի քաղաքը և կարտեչների արձակմամբը ստիպէր թշնամւոյն ՚ի փախուսա դառնալ, և եթէյամառ ընդդիմակացուի պատահէր, երեք կալօննա հետեւակներ պատրաստ էին դուրս հալածել նրանց պատնիշեցը հրացանների սլաքներովը։

Երկու րօտ և երկու թնդանօթներ նշանակուեցան յարձակիլ այն բերդակալ բարձրութեան վերայ և խորա տակիլ զթշնամին կարտեչներ արձակելով, կամ գննէ մինչև այն աստիճան թուլացուցանել, որ հետեւակաց վստահ ու վախճանական յարձակմունքն կատարուէր առանց նշանաւոր արիւնչեղութեան։ Այս միջոցումը քաղաքի վերայ զտնուող լերան գագաթի վերայ քցուեց երկու թնդանօթներից զրանատ և գնդակներ, որպէս զի այն աեղ դաստորուած ահաղին խումբերը շփոթուին։ Խոկ այլուձին լեռների ու անտառների պատճառաւ մնաց պատրաստապահաչութեան մէջ։ Յարձակմունքն մի միջոցում սկսուեց իւրաքանչիւր նշանակիալ ժամանակներումնէլ։

Քաղաքը պաշտպանող թշնամին սկսաւ սաստիկ հրացանութիւն անել գէպի մերձակայ բատարէան և գէպի թնդանօթաձիգ զօրքը պաշտպանող հետեւակաց կալօննան, բայց մեր կարահչների յաճախսակի և

յաջող արձակումն, ստիպեց նրան դադարիլ շռտով, այնպէս՝ որ թողեց նա պատնիշի պաշարումը և հլչութաւ սելով հետեակ կալմնայի յարձակմունքին, որք սաստակաբար դիմումէին դէպի իրանց հրացանի սլաքները, սկսաւ թագ կենալ խռումք խռումք քաղաքի փողոցների մէջ։ Այս տեղ էլ գինի միմեանց հրացան արձակելոյ, փախաւ թշմամին բազմաթիւ նեղուցներով դէպի սարի գլուխը։ Եւ այս տեղ էլ կանգ առաւ հետապնդութիւնք, որ 'ի զուր արիւն չ'թափուի։

Աերդը պաշտպանուեց երկար ժամանակ, պատճառն որ նորա պատերը պահպանումէին լեռնարնակներին թնդանօթաձակիդ զօրաց աւերիչ զործողութիւնիցը։ Անեազ Վատաթովը առանց մի փստահ յարձակմունք անելոյ, որ անպատճառ շատ մարդ կ'փշացնէր, մի բատալիոն հետեակ ուղարկեց չորս թնդանօթներով անցնել բերդի քամակը, որ շրջապատեն պաշարեալներին։ Աշշեցիք, քանի որ դիտէին, թէ կարողուի ունին փախչելոյ, քան ջութեամբ պաշտպանուելով դիմադրաւ եղնն թնդանօթաձակիդ զօրքի հրացանութեանը, իսկ իրանց քամակը անցնող Բատալիոնը տեսնելով, սկսան փախչիլ։ Եւ այսպէս մեր հետեակ զօրքն առան նոցա քաղաքն ու բերդը։ և լեռնարնակները սկսան թագչիլ անտառների և քարանձաւների մէջ, ուրանօր նոցա հետապնդելը դըժուար էր և անօդուտ։ Այս յաղթութիւնը, յորում Որուսաց կողմիցն երեք մարդ էին սպանուել և 20-ը վիրաւորուել, մի ժամ միջոց քաշեց։ Այսպիսի փայլուն ու դիւրազին եղեալ յառաջադիմութիւնը յայտնի ապացոյց էր զօրավարի խոհեմութեանն և անխար դիտողութեանը, որ Արաստանի վերայ խօսիլիս շատ անգամ կրկնումէր, Արաստանի մէջ զինուորը թանկ է, չպէտք է նրան 'ի զուր տեղը կորցնել, կամ թողուլ պարա-

պորդ ֆնալ : , Ուշմէջն ինքն էլ մասնակից եղեւ այդ
ընդհանուր փախուստին , և նորա ու իր զվասաւոր համա-
խոչների աները հրոյ ճարակ դառան : Վնեալ Աստա-
թօվը սպառնումէր , որ կայրէ ամբողջ քաղաքը , եթէ
նոյնժամայն բնակիչները հնագանդութիւն չ'ցոյց տան :
Վասն որոյ մինչեւ մէկ ժամ զվասաւորները յառաջ
գալով երդուեցին հաւատարմութեամբ հպատակել Կայ-
սերն ամենայն Ուստաց և սպառանդներ (ամառատ)
տօւին տգնիւ ցեղերից , վճարեցին այն ամեն հարկն , որ
երկու տարի արդէն չ'էին հատուցել և յանձն առին
հասցնել բանակիը զօրքին բաւականացնելոյ համար հար-
կաւոր անասունը և հացը : Արանից յետոյ Վնեալ Ա-
ստաթովը հրամայեց զօրադնդին յետ դառնալ զիշերել
առաջին բանակեալումն , այն մաքով՝ որ Բաշլեցւոց
ընաանիքը , որ երկիւղիցը թագչուելով անտառներէ մէջ
շտա ցուրտ և քաղց էին կրել , հանդստութիւն ստա-
նան :

Չնայելով մեր զէնքերի այդպիսի փայլուն յաջողու-
թիւններին , որով Պարաղայդադի Ուշմէջը զրկուել
էր իւր ստորագրեալ ժողովրդի մեծ մասիցը և ար-
դիւնաւոր զաշտավարիցը , էլինա միսիթարումէր զինքն այն
յուսովը , որպէս թէ մեր զօրագնդի հեռանալուց յե-
տոյ՝ հպատակներն էլի իւրեան կ'հնագանդին , ուստի
և 'ի նորոյ մինչեւ կ' հազար մարդ ժողովելով բանա-
կեցաւ մեծամուր Ախմուտմբ , որ Ամենջալիսից մօտ էր , և
սկսեց զրգուել յընդդիմութիւն և խռովել վերին Պա-
րաղայդադի զիւղօրէից բնակիչներին , որ զեռ ևս հնա-
գանդումէին իւրեան , բայց նրանք՝ որ մտել էին Ուսւ-
սաց իշխանութեան տակը , ոչ թէ միայն հաղորդա-
կից չէին լնում նորա խորհրդներին , այլ և իջևանե-
լոյ տեղի էլ չէին տալիս նրան , որ ինայցողութիւն

ոտանալով՝ ի Ուուսաց հպատակ դառնալոյ ժամանակը,
նոյն երդմամբ խոստացեալ գլխաւոր պայմաններից մէկն
էր:

Հոկտեմբերի 20-ին դեռ արեգակն նոր էր արձակել
իւր առաջին ճառագայթները, որ մեր զօրագունդը ար-
դէն սրբնթաց խաղումնէր գէտի Ուցմէյի վերջին ապաս-
տանարան՝ Անկիքենդ քաղաքը, յորում զինքն ան-
յազթ էր կարծում նաև Այս ուղեղնացութեան մէջ
Անեազ Մատաթովը ոչ թէ միայն հաստատեց իւրեան
բնական վստահութիւնն և անխար դիտողութիւնը, որով
նա միշտ գուշակումնէր իրան առաջադրեալ պատերազ-
մական գործողութեանց վախճանը, այլև ցոյց տուաւ
նուրբ քաղաքականութեան (ուստի) օրինակը, ընդնմին
և խոհեմուր կառավարուելոյ ձիրքը։ Յայտնի է, որ
ըսոնաբնակ ժողովրդների նուածու մն ընդհանրապէս շատ
հաստատ չէ, և չունի հաստատուն հիմն մինչեւ այն ժա-
մանակը, քանի որ յաղթուածների հնագանգութիւնը
չ'ամրապնդուի կամ բազմամեայ սովորութեամբը, կամ
յաղթողի բնաւորութիւնը, ծէսերը և նոյն խոհ հաւատը
ընդունելովը և կամ վերջապէս խստութեան միջոցնե-
րովը, որ յաղթուածներին անդադար երկիւղի և հսկա-
տակութեան մէջ են պահում։ Առաջին երկու հնարքը
չ'կարողացան տեղիք ունենալ այս տեղ, և վերջինը՝ այ-
սինքն խստութեան իրաւունքը շատ տկար էր, համեմա-
տելով այն միջոցների ու զօրութեանց հետ, դորս թըշ-
նամին կարող էր անօրինել այն լեռնային և մեծաւ
մասամբ անմատչելի տեղումը. — միայն յաղթողին յաղ-
թուածների մէջ հանապազօքեայ լինելը կարող էր ապա-
հովիցնել այդ նուածումն, և ժամանակաւ նրանցից ակն-
կալեալ օգուաները հասցնել։ Չնայելով Պարագայ-

դաղցւոց սովորութեանը, որք տեմնումէին Ուցմէջզ
ձեռքի տակ մի քանի դար շարունակ ինքնիշխան և
անսահման տիրատեսութիւն, չ'նայելով և նոցա աղ-
դութեան ու հաւատի միութեանը, որ սերտ կապումէ
հպատակնալ գիւղերի բնակիչներին այն գիւղերի բնակ-
չացը հետ, որ գեռ Ուցմէյի իշխանութեան ներքոյ էին,
իննազ Մատաթովը կարողացաւ յօժարեցնել նուա-
ճեալ Պարաղայդաղի բնակիչներին տալ մի քանի հա-
րիւր զինափառեալ մարդիկ, որ մարատակից լինին զօ-
րագնդին՝ մնացեալ մասն էլ նուաճել: Այս պատերազ-
մական գործոյ մէջ եղեալ յաջողութիւնը հաստատեց,
որ Պարաղայդաղի ձորերի բնակիչքն ունին լիակատաք
գնահատել իւրեանց Որուսաստանին հաւատարիմ հպա-
տակ մնալոյ համար տուած երդումը և անփոփոխ կա-
տարել իւրեանց խոսամունքն, և մի և նոյն ժամանակը
նրանց յաւիտենական թշնամի առնելով մնացեալ լեռ-
նաբնահներին չետ՝ բաժանեց նոցա ցեղը միմեանցից
դարաւոր արիւնահնեղ լիրէժիննդրութեամբ, որ մշտ հեշ-
տացնումէ վայրենի ազգաց նուաճումն: Արանից տէրու-
թիւնը վերջումը մեծ օդուա քաղեց: Ուցմէյն ինքն
համոզուեցաւ, որ զրկուած է ՚իյաւիտեան իւրեան հպա-
տաներիցը, և վերջապէս վերին Պարաղայդաղի բնա-
կիչներն չենց տեսնելով իւրեանց եղբայրակիցներին
ու հայրենակիցներին մեր շարքումը, չեին կարողանում
պատշաճաւոր ընդդիմութիւն ցոյց տալ:

Բանակիցը մինչև Խնկիքէնդ 50 վերստ էր. այդ տա-
րածութեան կէսը համարեա թէ զօրքը պէտք է անց-
նէր ապառաժուա նեղուցներով՝ այն էլ թշնամոյ երկ-
րումը: Այս հանգամանքը Գրեներալին ստիպեց այս ձա-
նապարհորդութիւնը անել երկու անցքով՝ ըստ օրինակի
Բաշլիցւոց էկսպետիցիային: Այս պատճառաւ դօլքը

առաջին գիշերն անց կացրին դէպի Խնկիքէնդ տանող կիրճի մուտքումը։ Անեազ Մատաթովը անցնելիս՝ ամենայն ուրեմք սիրոյ բարե էր ստանում ուրախական աղաւ զակներով՝ 'ի նորոյ նուածեալ Թաւրաքամի գիւղերի բնակիչներիցը, որք դուրս էին եկել նորա առաջը հաւցիւ և աղով։

Օօրքը գիշերելուց յետոյ սկսան շարունակելիւրեանց ճանապարհը այդ կիրճովը դէպի Խնկիքէնդ, իւր առաջաւոր դօրաց զլիւն ունենալով թարաքամի գիւղերի բնակիչներիցը նոր կազմուած զօրքը։ Օօրագունդը մինչեւ ցնոյն քաղաքը հասնելը, ոչ մի տեղ ընդդիմութիւն չտեսաւ թշնամուցը, որն երեսում էլ չէր։ Այսպիսի բաղդաւոր սկզբմունքն բոլորովին համապատասխան էր Անեազի ակնկալութեանը։ Խնկիքնեղեցիք ձեռք չ'բարձրացին իւրեանց հոյրենակիցներին վերայ, և փոխանակ արիւնաչեղ պատերազմի, հոյրենակիցներն և աղգականներն զրկաթառնումին դմբմեանս սիրով։ Այսպիսի յաղթութեան տեսարանը 'ի գութէր շարժում բոյոր ներկայացողների սիրան։ Ուժմէյն իւմանալով զօրաց այս շարժողութիւնը, շատպատմուա Խնկիքնեղը և պաշարեց նորա մօտ եղեալ ամուր բարձրութիւնները. իսկ Անեազ Մատաթովը ամսի 22.ին յարձակուեց նորա վերայ և Տրօյիցկու հետեւակ գնդի բատալիոնը խորտակեց զթշնամին հրացանի սլաքներով և ապա թնդանօթաձիգ զօրաց յաջող դորձողուրն Խնկիքէնդն էլ առան մեր զօրքը։ Այսյամառ պատերազմիցյետոյ, թշնամին 100 մարդ կորցրած լինելով, սկսաւ դէս ու զէն փախչելով տղատել զինքն, իսկ մեր կողմիցը և մարդ սպանուել էին և 7.ն վիրաւորուել։ Ժողովուրդը դուրս հալածեց Ուժմէյն իւր վիրջին աղաստանարանիցը և մի քանի տուն ոք նրան

ու այդ պաշարողութեան մէջ իւրեան հետ մարտակից եղողներին էին պատկանում, այրուեցան։ Ա երին Պարաղայդաղի ամէն գիւղերի գլխաւորներն՝ որ Խնկիքենդումն էին գտնվում, երդուեցին հաւատարիմ հպատակ մեալ։ Արանից յետոյ զօրագունդն էլ յետ դառաւ դեպի բանակն, որ էր Դարրախ ամրոցի մօտ։

Եւ այսպէս Կնեազ Մատաթովը՝ իւր ոակաւաթիւ, բայց քաջագործ զօրքովն, բոլորովին անծանօթ և ըստ մեծի մասին անմատչելի տեղերում պատերազմելով, նուածեց ամբողջ Տարասարանը և Պարաղայդաղը, ոչնչացրուց ՚ի յաւիտեան Ուցմէյի տիրապետութիւնը, ուրով և Դաղստանի ամենահեռու ցեղերին մէջ էլ սարսափ քցից։

Գեներալ Արմօլովը Տեառն Այսեր առաջին վկայելով Կնեազ Մատաթովի յառաջադիմութեանց համար, գրեց. “Չեմ կարող, ով Տէր, գովաբանել ըստ արժանւոյն Գեներալ Այլիօր Կնեազ Մատաթովի գերազանց ծառայութիւնը, որոյ ամէն մէկ գործողութիւնը ապացոյց է անսահման հաւատարմութեան, գործունէութեան և քաջութեան։ Կա և պէտք է ծանուցանել ամենախոնարհարար Զերդ Այսերական Անծութեանը, որ նա լաւ ծանաչելով տեղւոյս ժողովուրդը, այս տեղ Անելովը մի առանձին օգուտ է հասցնում, վասն զի ընդունակութիւն ունի ազդել Տաճիկների մէջ ջերմեռանդն ծառայութիւն առ Զերդ Այսերական Անծութիւնն,։ (14)

Կնեազ Մատաթովը համելով իւր առաջին ու գրլիսաւոր նպատակին, որոյ համար և հինց կապմուած էր նորա զօրագունդն, Ցնաց բանակի մէջ Դէքրեհնտի մօտ սպասելով Գեներալ Արմօլովի ուրիշ հրամանացը, որն՝ այս մի ջոցումը վերջացնելով Անդրէեան ղազախաց աւանումն

Անեղապնից (յանկարծ—Թհութառան) անուանեալ բերդի
շինութիւնն, մտազրել էր արդէն առանց յետաձդու-
թեան գնալ նուածել Եկուշեցւոց, յորում և պէտք է
մարտակից լինէին Անեազ Մատաթովի զօրագունդն:

Գնեներալ Արմօլովի զրութեամբն, Անեազ Մատա-
թովը Կոյեմբերի 11-ին դուրս եկաւ իւր զօրագնդովն,
և երեք անգամում մեծ և փոքր Բուզամով ու Օղեն
գետաբերանների ամենազդուար անցքերովը. 120 վերստ
Ճանապարհ գնալով, բանակեցաւ Եկուշեցւոց երկրին
սահմանակից Պարաբռւդաքէնդ գիւղումը, որ պատկա-
նումէր Մեհտուլեցւոց հասարակութեանը, որ համարեան
թէ յայտնի անհնազանդութիւն էին ցոյց տալիս իրանց
իշխող Տարկովու Համսալին: Վաներալ Արմօլովն էլ
այս միջոցումը մեծաւ զօրութեամբ եկաւ մտաւ Տարկի
քաղաքը, որ 50 վերստ հեռու է Պարաբռւդաքէնդիցը,
ուրանօր հրաւիրուեցաւել Անեազ Մատաթովը պատերազ-
մական գործողութեանց ուրիշ ձեռնարկութիւնների
վերայ խորհուրդ անելոյ համար: Բայց յանկարծ ձիւն
եկաւ մէկուկէս կանգունից (արտօն) առաւելքարձուր,
որ ծածկեց Ճանապարհները, կարաւանները և ճնշանո-
թաձիգ զօրաց գործիքն, այնպէս որ մի քանի օր արդելք
դառաւ զօրաց շարժողութեանը: Շուրումը՝ որ գտնը-
վումէ Տարկովու Համսալի տէրութիւնները Եկուշեցւոց
հողերիցը բաժանող բարձր լեռնազօտինների ստորոտւ-
մը, Անեազ Մատաթովի զօրագունդն միացաւ Գնեներալ
Արմօլովի զօրաց մէկ մասին հետ: Անեազ Մատաթովին
յանձնուած էր կառավարել յառաջապահ զօրքն և
Ուրումա գնալոյ ժամանակը՝ պատուիրած էր նրան առնուլ
Պալանտառույր և թնդանօթաձիգ զօրքն այնտեղ հանել:
Եւյտ լեռնագօտինների վերայ առաջին անգամն պէտք ըն-
բարձրանալ այնպիսի զառիվերով, որոյ մինչև ցգագակիցն:

6 վերստից առաւելէր: Այս մարդկանց օգնութեա մբն կարելէ էր թնդանօթները և ամէնահարկաւոր ծանրոցքները հանել ի վեր, որոյ համար և մի ամբողջ օր բան արին:

Թաշնամին ոչ մի տեղ չ'էր երեսում և յառաջապահ զօրքը բանակեցան գիշերը՝ հէնց այդ սարի միդապատ գագաթին վերայ, ուրանօր նոքա կրակ արին քարանձաւ ների միջից դժուարութեամբ ժողոված ցախերովն և վայրենի խտերովն, և այնակս սասաթիկ ցուրտ էր, որ ողջ գիշերն անցկացրին անքուն, անհամբերութեամբ սպասելով արեգակի ծագմանը, որովհետեւ ցուրտը ոչ մէ ին թոյլ չ'էր տալիս աչքը Խփել, Առարացին յառաջապահը յառաջ խաղաց այդ սարովն, որոյ ստորոտումը գտնվումէր Ակուշեցւոց առաջին գիւղն, որ էր Ուրուման՝ 18 վերստ հեռի գագաթիցը: Ար և նոյն օրը զլսաւոր զօրքն էլ պարտաւոր էր Ծուրիցը զնալ մինչեւ յառաջապահ զօրքի գիշերելոյ տեղն, յիշեալ Ծուրումը թողլով ամէն աւելորդ ծանրոցքը և թնդանօթածիդ զօրքի պատրաստապահ պարկն՝ ընդ հովանաւորութեամբ մի բատալիօն հիտևակ զօրաց: Յառաջապահ զօրքն քանի մօտենումէր Ուրումա գիւղն, եղանակին էլ սպարզումէր, և գիւղի այն կողմումը՝ համարեած թէ 10 վերստ հեռու գանվումէր մի բարձր լեռնագօտի, որ մի ամֆիթէատրոն էր կողմում երք բարձրուեց՝ որը աստիճան առ աստիճան ցածանումն դէպի գիւղի կողմը: Այս սարերը ծածկուած էին անթիւ բազմութեամբ ժողովրդեան, որ հաւաքուել էին այն փոքր ամրոցների մօտ, որոց մէջ ծփծփումէին հարկաւոր դոյն զգոյն զբոշակներ: Այս էր Ակուշեցւոց 20 հաղարի զօրաց ամբացեալ բանակավայրն: Դնկանմբերի 12-ին յառաջապահ զօրքն առան Ուրումա գիւղը պատասց հրացանութեան:

Գևերալ Արմօլովն էլ 16-ին հասաւ այն տեղ մեծ
զօրքով, որում և ներկայացան Ակուշեցւոց ժողովրո-
դեան լիակատար իրաւունք ունեցող զլսաւորները: Ար-
մօլովը նրանց ընդունեց սիրով և այս անակնունելի ըն-
դունելութիւնը նոցա վերայ բոլորովին ուրիշ ներգոր-
ծութիւն արաւ, ամենեին հակառակ՝ ինչ որ կարող
էր անել լուսաւոր ժողովրդից ներկայացողների վերայ:
Գևերալը որ քաղաքավարութեամբ էր վարփում, նո-
քա կարծումէին, թէ վախումէ և ուզումէ խաղաղու-
թեամբ վերջացնել ամէն կուները: Այս էլ պէտք է
ասած, որ տեղի դիրքին դժուարութիւնները, որով զօր-
քը պարտաւոր էին անց կենալ տարուայ վերջին ժամա-
նակը, և այն անմերժելի նեղութիւններն, որ դեռ
կային Ոչուսաց առաջին՝ ինչպէս բազմաթիւ զօրաց
պաշտպանութեան ներքոյ եղեալ ամուր բանակավայրի
վերայ տիրելոյ ժամանակը, նոյնպէս և այս տեղիցը 80
վերստ հեռու գտնուող Ակուշա քաղաքը գնալիս, ու-
րանօր համնելոյ համար պէտք էր անց Անալի չափա-
զանց լեռնոտ և շատ մարդարանակ ու բոլորովին անձա-
նօթ տեղեր, զլսաւորներին շահճր առիթ բդուած տա-
րակուսելոյ այս դործոյ յաջողութիւնումը: Եւ եթէ
յաւելունք առ այս այն անյաղթութիւնը, որ ՚ի սկզբա-
նէ վերաբերվումէր այդ ժողովրդին Պաղստանումը, մա-
սաւանդ բոլոր Ասիայի մէջ զարհութելի եղած աշխար-
հակալ Ասղիբ-Շահի զօրքը ջարդելուց դէսը, էն
ժամանակը Ակուշեցւոց ժողովրդեան զլսաւորների յանձ-
նապաստանութիւնը կ'յայտնվի շատ պարզ եղանակաւ:
Գևերալ Արմօլովի չափաւոր առաջարկութիւնները,
որ էին համաձայնութիւն հաստատելոյ և արիւնչե-
ղութեան առաջն առնելոյ համար, մերժուեցան ամբար-
հաւաճութեամբ:

Ակուշեցի զլսաւորներին յամառութիւնը, որ բոլոր
ժողովրդեան միտքն էլ այն էր, Գևներալ Երմօլովին
արտմութիւն պատճառեց, պատճառն որ թշնամեոյ
տարօրինակ զօրեղ բանակավայրն՝ որ թէ բնական և
թէ արհեստական ձեռվ ամբացածէր, շատ մարդիկ
պէտք է փչացնէր, եթէ հարկաւորութիւնը ստի-
պէր յարձակուել նորա վերայ առաջիցը. և բա-
նակավայրի շուրջը պտտելոյ համար, ինչպէս բա-
նակիցը նայելով կարելի էր եղբակացնել, տեղի գիրքը
ոչ մի հնարք չ'էր առաջադրում, և բաց յայդմանէ
որովհետեւ բոլորովին անյարմար էր յաջողուք պատերազ-
մել թնդանօժաձիգ զօրքովն, որոյ մէջ էլ կայանումէ
մեր զօրութեան գերազանցութիւնն ընդդէմ լեռնարնակ-
ներին, վասն որոյ Գևներալ Երմօլովը հաստատ վախեց,
որ չ'լինի թէ մի քանի հազար մարդ կորցնէ: Այս տ-
մէն պատճառները ստիպեցին նրան վարուիլ այդ պա-
տերազմական զործումը մի առանձին զկուշութեամբ և
խոչեմութեամբ: Երկու օր շարունակ շուտ լրտե-
սուի արին նորա թշնամեոյ այն բանակավայրի բոլոր
ֆրոնտովն, որ գտնվումէր մէկը միւսից զուզահեռական
բարձրացած երեքլեռնագօտիների վերայ, և մօտ 10 վերստ
երկարութիւն ունենալով, երկու թեռնի էլ կպած էր
անմատելի ժայռերի: Այդ բանակավայրի աջ թեկի
տակովը (լեռնազօտուոյ ստորոտումը) փրփրալով հո-
սումէր Մանաս գետը, այդ տեղովն էր ընկած և դէ-
պի Ակուշան ուղղող ձանապարհը. այս ժայռոտ ու
բարձր լեռնագօտին, որ կարծես թէ ուղղաձիգ բաժան-
ուած էր այդ գետովը, թշնամին չ'ը պաշարել, շատ
կարելի է նորա համար, որ նա՝ գետի միւս կողմումը
գտնուած լեռնոտ տեղերը ամենելին անառիկ էր հա-
մարտում: Այս հանդամանքն իւր վերայ դարձցրուց

Գաներալ Ազրմօլովի ուշաղրութիւնն, որ զօրել զօրք
առած անձամբ անձին գնաց լրտեսելու։ Թաշնամին կար-
ծելով՝ թէ նա ուղաւմէ մի վստահ յարձակմունք անել,
ամենեին արդելք չդառաւ Գաներալի շարժողութեանը,
ոյլ բարձրաձայն աղաղակներով սպասսւմէր նրան իւր
ամրոցներումը։

Ամենեին երկմտութիւն չկար, որ կարելի է թշնամ-
ոյ բանակավայրին տիրել առանց մեծ կորստի, եթէ
միայն գտնուե ը զոնէ մի փոքր նեղուց, որով կա-
րելի լինէր անցնել զետի միւս կողմումը գտնուող բարձ-
րութիւնները և քարշել թնդանօթները։ Բայց ցերե-
կըն անկարելի էր մանրամասնաբար քննել այդ տեղերը,
պատճառն որ ամէնն էլ թշնամոյն ակներել յայտնի էր,
և այդ դիտաւորութիւնն էլ նրանից պէտք է ծածուկ
մնար, որ նա գետիմիւս կողմին ընկած դառիվայր բարձ-
րութիւնները չառնէր և չնչնչայնէր վերջին յոյսը
միջոցներ որոնելոյ բանակավայրն ըրջապատելոյ համար։
Ա ասնորոյ կամենալով խարել թշնամոյն և թոյլ չտալ
նրան մտածել, որ նկատողները ուշաղրութիւններին, զօրքը թշնամոյ
պաշարեալ իռնագոտոյ ստորոտովը յետ դառան իւրա-
եանց բանակը և ամէն մէկ կիրճից դուրս գալոյ ժա-
մանակը կանդնումէին, իբր թէ յարմար տեղեր են որո-
նում յարձակմունք անելոյ համար։ Հետո միթնեց, թէ չէ,
մի քանի թաւթար և զազախներ ուղարկուեցան ձանա-
պարհ որոնել դէպի յիշեալ բարձրութիւնները, որ և կէս
գիշերից մօտ յետ դառան նոքա բերելով՝ ուրախական
համբաւ, թէ գտել են մի նեղ ձանապարհ, որ թէպէտ
շատ դժուար է, սակայն մարդկանց օգնութեամբն կարելի է
թնդանօթներն էլ հանել այն բարձրութիւնները։

Դեկտեմբերի 19-ին, երկու ժամին զօրքը հրաման ստացան յառաջ խաղալ:

Մի թնդանոթ արձակելոյ հեռաւորութիւն էր մնացել, որ բոլոր զօրագունդը հասնէր թշնամեոյ ամրոցներին, որոյ կրակն շեջած էր արգէն. նոցա առաջաւրը պահպակներն՝ (ուստե՛) ինչպէս երեւումէր, խոր քնածէին, պատճառն որ ոչ մի բանով չիմացրին Ուուսաց մօտենալը: Այս բարեյաջող հանդամնքը ոչ թէ միայն Գևեներալ Երմօլովին միջոց տուաւ իւր զլիսաւոր զօրքին պատերազմական պատշաճաւոր կարգ տալոյ , այլև Կնեազ Մատաթովին՝ որ պարտաւորուած էր գիշերը շրջապատել թշնամեոյ բանակավայրի աջ թևն, կարողութիւն տուաւ այն խոչընդոտ արգելանաց առաջն առնուլ, զորս բնութիւնն առաջալրումէր թնդանոթաձիգ զօրացն՝ այն նեղ ճանապարհով կնալոյ ժամանակը, որով հազիւ թէ հետիւնները միայն կարող էին անցնել: Երբ որ բոլորովին լուսայաւ, թշնամին մնաց զարմացած, իւր առաջին տեսներով Գևեներալ Երմօլովի զլիսաւոր զօրքն և բանակավայրի աջ թևն էլ պաշարուած Կնեազ Մատաթովի զօրագնդովն:

Գևեներալ Երմօլովն առաջինն թնդանոթ արձակեց, միայն թէ անկարելի էր հետեակ զօրքովն պատերազմ անել, վասն զի թշնամեոյ բանակավայրն բոլորովին անմատչելի էր և բաց յայսմանէ ամրացեալ էր և երեք շարագաս բերգերով: Բազգաւորապէս Կնեազ Մատաթովի զօրքն կարողացան արդէն նուածել զլիսաւոր բարձրութիւնները տուանց հրացանութեան: Եւ թշնամւոյ անթիւ խումբերը՝ տեսնելով աջ թևի փունզը, շատ աշխատեցին անց կենալ գետի միւս կողմը, և զարհուրելի աղաղակներով ու հայհոյանքներով յարձակուեցան նորա զօրքին փերայ; որք հանդիպեցան նրանց

կարտեներով, իսկ բոլոր հետեւակ դօրքն՝ երկք կալօննառ
բաժանուելով, յարձակմունք արին հրացանի սլաքներով և
Ա ամ որոյ և թշնամին՝ չկարողանալով զիմադրաւ
մինիւ այս յարձակմունքին, մէկ բանակավայրից միւսն
էր փախչում, որոց միջոցն 5 փերստ էր. և յայնժամ
Կնեազ Մատաթովի գօրագունդն՝ տեղի դիրքին նայեա
լով, արդէն գտնվումէր թշնամւոյ բանակավայրի թե-
ռումն, յորմէ բաղդաւորապէս շատ քիչ էր հեռու
թշնամւոյ ունեցած բարձրութիւնները, թէ և բաժան-
ուած էին անանցանելի ձորով, որոյ միջովն հոսումէր
Մանաս գետն: Լեռնաբնակները չնայելով, որ Գեներալ
Երմօլովի թնդանօթաձիգ զօրքիցո վնաս են կրում,
ամենելին չշարժեցին իրանց բանակավայրիցը, հենց մի-
այն աշխատումէին թաղչել ամբոցների քամակին, բայց
երբ որ Կնեազ Մատաթովի թնդանօթաձիգ զօրքն
սաստիկ հրացանութիւն բացան դէսի նոցա շարտաս
ամբոցներն, էն ժամանակը նոքա էլչկարողանալով ընդ-
դէմ կենալ նոցա զօրեղ կրակին, սկսան այնպիսի շատ-
պաւ փակչել, որ շատերը վիր ընկնելով այն բարձր
ժայռերիցը սպանվումէին, իսկ կարճ միջոցում փրր-
կութիւն գտանողներն էլ թաղչումէին սարերի անթիւ
քարանձաւների մէջ: Յաշնամեացյատուկ ասելով՝ նոցա
զօրքը թուռվ մինչեւ տասն ու հինգ հազար էին, որոց
մէջ էին և այս նենդաւորներն. Գերբենակ Շեն-Վլե-
նանը, Վարագայդաղի Ուցմէյը, Վագիդումուխու Խա-
նին որդի Սուրբիսը և այլք՝ որ այնքան իշխանու-
թիւն չունէին: Բացի Վկուշեցւոց զօրքն, այն տեղ
կային և նրանց զրացի Վազատանի ժողովուրդն էլ:
Եյս փառաւոր պատերազմից յետոյ բոլոր զօրքը զի-
շին անցկացրին Լաւաշա ղիւղին մօտ, որոյ անտւամբը
և կոչեցաւ այս պատերազմը, յորում մէր (Ուու-

սաց) կողմանէ սպանուել կամ վիրաւորուել էին միայն
28 մարդ: (15)

Լաւաշա զիւղիցը մինչև Ակուշա քաղաքը զօրքը
երկու օրուայ մէջ երեք ձանապարհորդութիւն արին,
ամենեւին ուշ չգարձնելով այն փժուարութեանցը,
կամ հէնց բնութիւնիցն առաջադրեալ ամէն մէկ
քայլում հանգիպող արգելքներին, մանաւանդ որ տար-
ուայ վերջին ժամանակն էր: Անեաղ մատաժովը Ակու-
շա քաղաքը մանելուց յետոյ, Գաներալ Երմոլովի հրա-
մանաւը Ակուշու բոլոր գիւղերի գլխաւորներին և դա-
տաւորներին (կաճի) նոյն քաղաքի մեծ մզկիթումը
երգում տուեց, որն նոքա այնպիսի սրբութեամբ պա-
հեցին, որ 6 տարուց յետոյ երբ որ Պարսիկք թափ-
ուեցան Արաստանը, Ակուշեցիք՝ ոչ թէ միայն կցորդ
չէին լինում նոցա ապստամբութիւններին, այլև Գլ-
խաւորհրամանատար Գաներալ Երմոլովին փերայ էին
ուղարկում նոցա ամէն նամակները որոց մէջ նոքա
խոստանալով հարուստ ընծաներ և մեծ գումար դրա-
մոց, յորդորումէին նրանց Ոտուաց դէմ վեր կե-
նալ:

Լաւաշի մօտ արած յաղթուիլ ունէր և այս հարկաւոր
հետեանքը. Պաղիղումուխու Սուրխայ-Խանը՝ որ մի
և նոյն օրը մեծ զօրքով մտել էր արդէն Զիրախու
մօտ գանուող Քիւրախու գաւառը, ուրանօր՝ ինչպէս
և Պուրի գաւառումը շատ քիչ զօրք էր մնացել,
լոելով Ակուշեցւոց հարուածը, վաղվաղակի վերադար-
ձաւ դէպի Պաղիղումուխը, որով և ազատուեցաւ այն
կողմն անթիւ ձախորդութիւններից, որք միշտ կից են
լինում կիսավայրենի Վովկասեցիների յաջող ասպա-
տակութեանցն:

1820 թուումը կրին սկսուեց պատերազմաչու դեպի Հիւսիսային Դաշտանն և այս էկսպէտիցիայումն զօրավարը նշանակուեց Անեազ Մատաթովը։ Այս պատերազմ գնալոյ պատճառը եղեւ Սուրբայի ապստամբութիւնն, որ երդմնազանցութիւն անելով Աշենցւոց կողմն էր անցել։

Յետագայ հետաքրքիր տեղեկութիւնները ըստ մեծի մասին քաղուած են Ա ան-ալենի զրուածներիցը, որ գտնվումէր Անեազ Մատաթովի զօրաց մէջ Մայիօթի աստիճանում։ Այս զրուածների ճշտութիւնը հաստատվումէ պաշտօնական (օֆիցիալ) թղթերով և ականատեսների ցուցմունքներով։

“Անեազ Մատաթովի պատերազմական բնութիւնը, զրումէ Ա ան-ալեն, նորագործունելութիւնը, տեղական լեզուների և սովորութեանց հմտութիւնը, նորամէջնշմարելի երկու պազաց՝ (յ) Եւրոպացւոյ և Ասիացւոյ բնաւորութեանց խառնուրդը, այս տմէնը նրան անսահման օգտակար էին առնում իւրեան կառավարելի նաշհանգներումն,,”

“Այս քանի մի խօսքերովը նկարազերով նա՝ Անեազ Մատաթովին, ցոյց է տալիս, թէ՛ որպիսի խոհեմութեամբ և զգուշութեամբ էր վարվում նա այն Խաներին հետ, յորոց Գեներալ Շրմծովի հրամանաւը պետք է օդնական զերք պահանջէր, այնպիս որ՝ թագավորի այս բուձիովն զօրեղանար Պաղիղումուխն գնացող Ոտւսաց գորագունդներ։

“Այս իշխողներիցը մէկին հետ նա վարվումէր իրեւ պարզ բարեկամ, միւսին յոյս էր տալիս Ոտուսաց Կնքնակալի խնամակալութեամբը, խոստանալով նրան և իւր հպատակներին ցանկալի պարզեներ, երրորդին իրաւունք էր տալիս արդարադառւթեան, միով բանիւ նորատմե-

նայն վարվողութեանց մէջ տեսանելի էր սր ամսութիւն, ամենայն հանգամանաց ու սովորութեանց վերսց խորին դիտութիւն և այնպիսի մի նուրբ իմաստութիւն, որ հարկաւոր էր անշուշտ Ասիացւոց ժողովրդեան հետ յարաբերութիւն ունենալիս,,:

“Անեալ Սատաթովը ձիաւոր հաւաքեց 500 Պարաբաղցի, 300 Վարիցի նա և 400 Երփանցի, չնայելով, որ Երփանու Պուստաֆա-Խանը Սուրբիսայ-Խանի աղքականն էր: Այս ձիաւորներին վերահայեցողութիւն անելուց յետոյ, ուղարկեց նրանց դէպի հարաւային Դաղստանը, ուրանօր ինքն էլ Երփանիցը գնաց կարծ բայց շատ դժուար ճանապարհաւ, Կովկասեան սարերի միջովն,,:

“Երփանից գուրս գալով, ճանապարհը՝ չեռնոտ նետուցների միջով լինելով, չափագանց դժուար էր, սաստիկ անձրեից յետոյ մրրկածուփ հեղեղներ թափուելով, սարերիցը լցրել էին ճանապարհը ահազին քարերով և այս սարերի սառուտն ու գառիվեր տեղերը ծածկուած էին այնպիսի թահնձը անտառներով, որ կարծեն երբեք կացին (երկաթ) չ'էր դիպչել նրանց: Այդ ճանապարհի ամենաբարձր տեղումը գտնվում էր մի զարհուրելի անդունդ, որոյ լայնութիւնը մծա 6 սամէն էր և խորութիւնը առաւել քանի դ. 200: Ասրավերայ քցած էին երեք կաղնի ծիւղաւոր ծառեր, որ երեք ոտնաչափ (Փյուր) լայնութեամբ կամուրջ էին կազմում առանց վանդակների: Անեալ Սատաթովը՝ միշտ առաջին լինելով, անյապաղ առաջ ինքն անցկացաւ այդ կամրջով և մեք, շարունակում Անալէն, ակամայ պարտաւոր էինք հետեւլ նորա օրինակին: Եթէ այլուձին մի քիչ ծռուէր, կամ թէ ձին փոքր ինչ կանգնէր, արդէն կորուստ էր անդառնալի: Եթէ որ

ամենքն անցան միւս կողմը, օֆիցերնելից մէկը հաբցրուց
Անեաղին այդ կամրջի անուան համար, «որ «սափանայական»
անուանելով, ասաց. ևս չ'կարծեմ, որ այդ կամուրջը
բաց 'ի այս մի ուրիշ անուան արժանի լինէ: Այս
կամրջովն անցնելը՝ թէպէտ և արագնթացութեամբ էր,
այսու ամենայնիւ երկու ժամից առաւել տեսեց: Այս
Ճանապարհն երկու կողմիցն էլ պատաժ էր մի զժուա-
րակով ու մէկը միւսից մօտ ժայռերով, և այն կիրճը՝
որով զօրքը պէտք է անցնէին, ծածկուած էր մի այն-
պիսի ամայի ու թանձր անտառով, որ մէք ստիպուե-
ցանք իջանել ձիիցը և գնալ հետիւսա: Թէպէտ կէս
օր էր և արեգակն ալայծառ փայլումէր, բայց մէք այն
բաղմածիւղ ծառերի ստուերի տակովը այնպիս էինք
քնում, որպէս թէ՝ մի մթին կամարի տակով: Այս ա-
հազին սարերի ստորոտումը Ճանապարհը աւելի լայն
էր, բայց նորա երկու կողմիցն մի այնպիսի անտառա-
խիտ ծմակ կար ընկած, որոյ ծառերն մի տարօրինակ
բարձրութիւն և գեղեցկութիւն ունեին, :

Պուրի գաւառը մտնելոյ ժամանակը, ձիաւորների փայլուն
ու ուրախ գունդը շտապեցին Պուսաց առաջը զուրս դալ:
Պուրումը Անեազ Վատաթովին մօտ եկու Պուրի (Կո-
րանցի) հաւատարիմ և քաջ Գնդապետ Ասլան-Խանը՝
իւր եղբայր Մայիօր Հասան-Աղին հետ, ընդ նոսին և
ութ հարիւր ստպատակաւորներ: Հուառվ քաղաքի
շրջակալքը մտան Հարուայ, Պարաբաղու և Հերվանի
ձիաւորներն՝ որ Ասլան-Խանի մարդկանց հետ 'ի միա-
սին 2300 հոգի էին: Թանդանօթաձիգ գորքն սպասու-
մէին Օխաքուրի մօտ, ուրանոր պէտք է անցնէին Շա-
ղըստանի մէջ անուանի Սամուր գետովը, որ յայտնի է
իւր արագահոսութեամբը և ջրերի առատութեամբը:
Այս գետը՝ որ աաքութիւնը սկսվում, մի այնպիսի երե-
ւոյթ է առաջադրում, որ նոյն կողմերի գետերի մէջ էլ

Կ հաղուադէպ, այսինքն՝ երեք վերստ ափիցը դուրս
գալով և մէկ քանի կողմնական գետեր, կամ լաւ ևս
ասել, մէկ քանի լայնատարած գետեր, բաժանելով, նա՝
հալած ձիւներովն առաւել զօրեղացած, վագումէ
սրբնթաշաբար իւր չափազանց զառ՝ ի վայր յատակովը՝
անմիջապէս ջրի ժներ կազմելով, և քարշումէ իւր հետ
տփերիցը պոկած ոչ թէ միայն դարաւոր ծառեր, այլ
և քարեր ու ժայռերի ահագին կտորներ, որ ալիքներիցը
գեր՝ ի վայր լինելով բաժանուել էին շրջակայ լեռներիցը։
Սամութ գետն անցնելը 5 ժամից առաւել տեսեց և զօրքը
յաղթելով այդ ամէն արգելքներին, մտան Առուրի Խօս-
նութիւնը։ Պուրիցը ղէն երկու անցք ելգնալուց յետոյ,
Վարիր սարի գլխին կննդրոնացան բոլոր զօրագունդն,
որ բաղկացած էին Առուրի 2 և 3 բասալիօնիցը, Վ-
շառանու 3 բատալիօնիցը և Եզերաց 41-րդ զնդի 2 բա-
տալիօններիցը, հանդերձ հարիւր զաղախներով և 14
թնդանօթներով։ Բայց այս բատալիօնների թիւը պա-
կաս էր և նոցա մէջ համարվումէր միայն 2500 մարդ։
Բանակը Վարիր սարին վերայ եր՝ ամենազեղեցիկ տե-
զում զրած, այնպէս որ՝ առատ էր գեղեցիկ արօտնե-
լով, ընտիր որսերով, լաւ ջրերով։ և այն տեղեց
պարզ երեւումէր՝ ի հեռուստ Դէրբենտը և Ասսպից
բոլոր ծովներն։ Այս տեղ Անեազ Մատաթովը՝ զա-
նազան զնդերի գլխաւորներին իւր մօտ ժողովեց մէկ
ձիւղերը տարածած շագանակի ծառի ստուերի տակ և
սկսաւ կարգազրութիւն անել վաղուեան նշանակեալ
Ընդհանուր զօրախաղացութեան համար։

Ալօննաների գլխին գանվումէր թնդանօթաձիւք դօրքը,
իսկ միւս կողմին Թաթարաց հեծելագորքն՝ որ դասա-
ւորուած էին կանոնաւոր կարգաւ՝ որն անսովոր էր
Վսիացւոց համար։ Նոցա ղէմքին վերայ վայլումէր

ուրախութիւն, որն պատճառուած էր մելրակայ պատերազմի յուսովը և նոցա վառվուուն երեակայութեան վերայ զօրեղ ներգործութիւն անող դինուորական նուագարանի ձայներովը : Եւ զօրախաղացութեան տեղի գեղեցկութիւնն ու պարզ եղանակը տեսարանի հանու դէսը էլ առաւել էին շքեղացնում:

Երեելի էին մանաւանդ Շաքեցւոց հեծելազօրքն, առաւել ևս Առան-Խանի ձխաւորներն՝ որ գեղեցիկ էին հասակաւ, գերազանց իւրեանց վայելակազմութեամբը և ասպետական սպառազինութեամբ՝ որ բաղկացած էր երկար նիզակներից, զբահներից, սաղաւարտներից և վահաններից: Այս վահանները նոցա մէջ մեծ արժանաւորութիւն ունեին և նոցա սովորութեանը նայելով, յանձնվումէին յորդւոց որդի: “Այցա վերայ գանուած հարուածոց նշանները վկայ էին իրանց աերերի աներկիւուղունը, և մի քանի հետերի զէնքեր էլ, ինչպէս նոցա վերնազրերը ցոյց էին առալիս, խաչակիր զօրաց ժամանակիցն էին:

Ի թիւս այդ քաջագործներին համարվումէր և ասան-Աղան. սա այնքան ինքնահաւան մարդ էր, որ միանգամ իւր քաջութեանց վերայ խօսելիս, յանձնապաստանութիւնիցը հպարտացած, ասաց ընկերներին. “Եթէ Աստուած(Առա) ինձ ասէր, որ աշխարհում ինձանից առաւել քաջ էակ կայ, յայնժամ ևս ամաչելուց կսպանէի ինձ,,:

Այս է լունաբնակներին որոշիչ յատկութիւնն. եռանդնուա քաջութիւն, ամբարտաւանութիւն և ամենափոքր՝ նաև և անզիտութեամբ պատահեալ զրկանքի համար, վրէմինողրութեան ծարաւ: Անեղ Առասաթովը գիտաց ներգործել նոցա վերայ հեղութեամբ և նոցա տկարու-

ԲԵՒՆՆԵՐԸ 'ի զործ դնել յօզուտ ծառայութեան։ Ասրա
օրինակը կարողեմք տեսնել Հասան-Ազի հետ նորա
փարզողութեան ժամանակը։

Հասան-Ազին իմանալով, որ իւր մեծ եղբայր Աս-
լան-Խանը հրամանատար է նշանակուել թաւաթարաց
բոլոր հեծելազօրքին վերայ, գինքն անպատճեալ հա-
մարեց, կարծելով թէ՝ միայն ինքն է արժանի այս կոչ-
մանը, ուստի և չնայելով աղջականութեան կապին,
կատաղաբար մտաւ իւր եղբօր վրանը և սկսաւ բաւա-
կանութիւն պահանջել նրանից իւր ստացած պատուին
համար։ Հասան-Ազի կատաղութիւնը այնքան սաստիկ
ու զօրեղ էր, որ Փիցերները չեին կարողանում նրան
պահել։ Ասրա եղբայրը հեռացաւ իրան առաջարկեալ
կոռուիցը, իսկ նա պատառելով իւր հազուստը, բացարաւ
կուրծքը և աղաղակեց գէպի Ասլան-Խանն։ « Ավ-
երկշմտ, երկշմտ, գոնէ վատահութիւն կունենան սպա-
նել ինձ,, : Եշկու եղբարց կիրքն էլ մինչեւ այն առ-
ախճան էր բորբոքուած, որ պէտք էր սպասել արիւնա-
հեղ փախճանի։ Բայց Անեազ Առատաթովի միայն մի
խօսքը հանդարանցը նրանց։ Հասանին նա զօրավար
նշանակեց Տաճկաց բոլոր այրուձիոյժառաջապահ գնդին
վերայ, և այսպէս մի փայրկենում Առւրի ասպատակաւո-
րաց դնդապետին սե աչքերը սկսան փայլիլ շնորհա-
կալ հպարտութեամբ և նորա հոգեկան ուբախութիւնը
ցոլացած երեսումից իւր սեորակ գէմքին վերայ։ և ար-
համարհանաց աչօք նայելով եղբօրը ասաց։ « այժմ ցոյց
կամ քեղ, թէ՝ ես ով եմ,, , և զուրս եկաւ հաս-
տատ մտալրած արժանանալ Անեազի բարերարութեանը
կամ շնորհացը և արդարութեամբ 'ի կատար ածել իւր-
եան յանձնած պաշտօնը։ Ա երջերումը, երեք յարձակմանց
մէջ հրաշալի քաջութիւններ արաւ, սա, և ապա անձ-

Նույնացութեամբ զինքն մասնեց թշնամիները հետապրն գեղջն, յորում ինչպէս կտեսնենք սպանուեցաւ գնդակահայր:

Թաշնամեոյ շարժողութեան համար ստացած տեղեւ կութեանցը նայելով, յայտնի էր, որ Սուրխայշանը՝ լսելով Ոռուսաց զօրքի մօտենալը, 'ի զուր աշխատումէր տիրել Շիրախ բերդին վերայ, նա զօրքովը գնաց իւր տէրութիւնների մէջը և մտադրած լինելով սաստիկ ընդդիմակացութիւն ցոյց տալ, ամենայն խանութիւններից էլ ընդհանուր զօրք հաւաքեց, որ՝ իրան օգնութիւն հացնող ազատ Լեզիների հասարակութեանը հետ ՚ի միասին, մինչեւ 20,000 հոդի էին:

Սուրխայշանը ամրացրուց իւր խանութեան մէջ բոլորովին անմատչելի տեղում գտնուող լազ գրեկ զիւղը Յունիսի 5-ին մեր զօրքը դուրս դալով սկսան մի նեղ կիրճով գնալ դէպի Պաղիզումուխը: Քարուտ և դժուարակոխ սարերն՝ իւրեանց ձեղջուածներովը, համարեած թէ ստիպումէին թնդանութեները և ծանրոցքները մարդկանց շալակին տանել: Բայց զօրքն յաղթերով այդ ամէն արդենքներին, ամսի 10-ին առաւօտանց մտաւ Շիրախը: Աարի զաղամին վերայ շնած այս փոքր ամրոցն, որ նորերումն զիմազրաւ էր լինում լնունաբնակների յարձակմունքներին, լքուեցաւ Ոռուսաց ինժեներներովը և սկսաւ պահպանուիլ երեք թնդանօթերով ընդ հովանաւորութեամբ հարիւր մարդոց: Խակ զիշերը Ոռուսաց պարկագունդն (ավաստէ) արդէն գտնվումէր թշնամեոյ երկրումը՝ Շիրախից 3 վերատ դէնը: Կողան խանի հեծելազօրքին և բոլոր թնդանօթաձիգ զօրքի կէսն էլ զօրագունդը պահպանումէին զօրաց թեւերի անակնկալ յարձակմունքիցը: Եւ զօրագունդը հաստատ չիմանալով թըշնամեոյ զրութիւնը, բանակեցաւ այս տեղ մինչեւ ամսի

12-ն: Բայց միւս օրը Խօզբեկը՝ որ 26 վերստ հեռու
էր, պէտք է թատրօն դառնար պատերազմական կործո-
ղութեանց, ուրանոր առաջուան պատերազմումը ոչ ոք
չէր մտել և որն՝ ինչպէս թռաթարաց գունդն պատ-
մումէր, պէտք է շատ ամուր բանակափայր լինէր:

Անեազ Անտաթովը, Վահենբուրկը պաշարո-
ղութեան մէջ թողլով՝ Զիրախու պօստին մօտ,
ինքն Յունիսի 12-ին լուսանալիս՝ որ մի մառախլա-
պատ օր էր, խաղաց իւր զօրքովը դէպի Խօզբեկ դիւզը:
Այս ժամանակը, ինչպէս երկու դերեվարեալ Լէռկիներ
ցոյց տուին, թշնամոյ բոլոր այրուձին գտնվումէր բա-
նակիցը մի քիչ հեռու Սուրխայ-Խանի որդւոց մէկի
առաջնորդութեան ներքոյ, իսկ Սուրխայ-Խանը ինքն
բոլոր զօրքովը բռնած ունէր Խօզբեկի առաջին շինած
բոլոր շարադաս ամրոցներն, զորս պահպանումէին ընտիր
հետեւակաց զօրքն: Զիրախից Խօզբեկի տանող ճանա-
պարհը ընկած էր Առվասու սարերիցը բաժանեալ երկու
ճիւղերի միջում, յորոց ձախակողմեանն քանի առաջ է
գնում՝ ցածանումէ, բայց աջակողմեանն՝ որ քիչ դիւրա-
մատոյց էր, ձգվումէ մինչև Խօզբեկի նոյն իսկ բարձրու-
թիւնները:

Անչեւ այդ դիւզը դեռ եօթն վերստ չ'գնացած, ա-
ռաւօտեան 6-րդ ժամին, երբ որ մառախուղը դէս ու դէն
ցրուեցաւ, զօրագունդն պարզ տեսնումէր այն բարձրու-
թեանց վերայ թշնամոյ ձիւաւորների խումբերը, յորոց
մէջ ծփծփումէին զրօշակներ: Անեազ Անտաթովն ինքն
անձամբ անձին նկատելով թշնամոյ բանակափայրը, մտա-
զրեց տիրել նրան: Սուրխայ-Խանը՝ բռնած ունելով
այն սարերի դադաթն, որոց ստորոտովն պէտք է բոլոր
զօրագունդն գնային, կարող էր հեշտութեամբ արգելու-
մեր զօրքի ընթացքը: Ուստի զօրագնդի ընթացքը այչ

կիրճով ապահովացնելոյ համար կամ թշնամեոյ զօրաց
մեծ մասը հեռացնելոյ համար, որ կարող էին օգնու-
թիւն հասցնել Խօղրիկին, Անեազը հրամայեց Մայիօր
Հասան-Աղին, որ Թամարաց ձիաւոր զօրքիցը մի մասն
առնէ և Ճեղքերով մտնէ անպատճառ թշնամեոյ զօրաց
ձախ թեւն, և նրան ձնչէ դրուելով այն սարերի երկա-
րութեամբը Թամարաց ձիաւոր զօրքը գարմանալի ա-
րագութեամբ հասան այդ սարերը, բայց հանդիպեցան
մեծ կրակի թշնամեոյ հեծելազօրքիցը, որ բաղմաթիւ լի-
նելով ընդդէմ կացան առաջին երկու յարձակմանցը:
Իսկ երրորդ անգամ յարձակուելով մեր զօրքը մտան
թշնամեոյ եսումբերի մէջ, որք այս վստահ գործողու-
թիւնը տեսնելով, ստիպուեցան փախչիլ: Բայց այս
միջոցումը Հասան-Աղան մի մահցուցիչ վերք ստա-
ցաւ, որով և նորա զօրքը մեծ շփոթութեան մէջ ան-
կան: Ուստի թշնամին էլ նորիդ տաքանալով, յարձակ-
մունք արաւ և Պուրլցուց մէկ մասը յետ դարձցրուց
Անեազ Մատաթովը՝ տեսնելով մեր զօրքի շփոթու-
թիւնը, ինքն թռաւ պատերազմի տեղը, որոյ ներկայու-
թեամբն էլ Ասիացիք ողերոււած սասակաբար դիմե-
ցին թշնամեաց վերայ, և հեռացնելով նրանց բանակա-
վայրիցը՝ ցիրուցան արին շրջակայ լերանց մէջ:

Սուրենայ-խանի ուղարկած երեք արկղ վառօղի ճայթ-
մունքը փչացրուց բոլորովին Պաղիղումուխու հետեակ
զօրքը, բայց այս միջոցումը Մայիօր Մարտինենկօն՝
պատուեր ստացած լինելով շուտով յօդնութիւն հապ-
նել ձիաւոր զօրքին, Աշշառանի գնդիցը երեք բօտ առ-
նելով, խաղաց թշնամեոյ ուղղաձիգ զօրաց ձախ
թեւին կպած առաջին ամրոցի վերայ և սլաքների հա-
րուածով առաւ զայն ու ամրացաւ նորա մէջ,
այնպէս՝ որ թշնամին էլ ուժ չունենալով վերստին

տիրել առաջին բանակավայրին, ստիպուեցաւ քաշուիլ գեպի երկրորդ ամրոցն։ Այս միջացումն զօրագունդն հասաւ Խօղբեկայ առաջին եղեալ դաշտավայրը։ Անեագ Մատաթովը՝ սպասելով վերջապահի և թռաթարի այրուեկոյ միաւորութեանը, այնպէս կարդազրեց, որ երեք կալօննայով յարձակուին ամուր Խօղբեկ զիւղին վերայ և Աոլան-Խանին հրամայեց, որ թռաթարաց այրուձին վերառած շրջան տալով դնայ դէպի Աիւլուլի զիւղը, այն մտքովը, որ կտրէ թշնամոյ Պաղիղումուխի ճանապարհը։ Բոլոր երեք կալօննաներն էլ հրացաններ արձակելով մօտեցան դէպի ամրոցներն, իսկ թնգանօթաձիգ զօրքը՝ մի ժամ միջոցում յաջող ներդորձութիւն անելով, կարողացաւ մեծամեծ վնասներ տալ պատնիշ ների մէջ, զկնի որոյ և ուրա աղաղակելով, բոլոր երեք կալօննաներն էլ սկսան հարուած տալ հրացանի սլաքներով։ Այս յարձակմունքի ժամանակը Անեալ Մատաթովը այնքան մօտացել էր թշնամոյն, որ գնդակները նորա շուրջն էին թափիում, և երբ նրան ՚ի զուր ինքրումէին, որ չեռանայ և չենթարկուի այն յայտնի վտանգին, նա պատասխանումէր. «Կթէ ես այն տեղ չկինմ, ո՞վ կառնե Խօղբեկը,,»

Սաղինով քաջ Պօտպօլիովնիկը՝ որ կառավարումէր Աշշառանու մի բատալիօնը, առաջինն յարձակուեց պատնիշ վերայ և վերաւորուեցաւ, ինչպէս և Վայրօր Ա ան-ալէնը։ Բայց կալօննաները ՚ի միամին զիւմելով թափուեցան թշնամեաց մէջ և արտաքս վանելով զնոսա ամենայն ամրոցներիցը, քշած տարին մինչեւ իւրեանց մզկիթն։ Այս տեղ նոքա ուզումէին միյուսահատ ընդդիմութիւն ցոյց տալ, Բայց Ոսուաք մի կարճ միջոցում տիրեցին մզկիթին էլ, և աշտարակին վերայ հաստատեցին Աշշառանու գնդին զրօշակը, որ հռչա-

կումբը խօղւեկայ առումնն թաշնամին փախչումը, բայց
Որուաք ձերբակալ տանելով այն ծածուկ ճանապարհ
ները, որովք Սուրբսայշ-Խանի բանակին հետ հաղթրդու
թիւն ունեին, յարձակուեցան այն բանակին զերայ էլ և
տիրելով նրան, հետապնդեցին փախստական թշնամ
ոյն:

Եսանաբնակները ամենայն կողմից ճնշուած գոլով և
տեսնելով, որ հեռացել են Պաղիղումուխուճանապարհիո
ցը, հարկադրեալ սկսան յետ դառնալ այն զառիվայր
կիրճովն, որ թնդանօթաձիգ զօրաց հրաձգութեան տակ
լինելով, մեծ վնաս հասցրուց նրանց, յորոց գերի վա
րեցան 603 մարդ և մինչեւ 1,500 մարդ սպանաւեցան, ՚ի
թիւս որոց կային Վարի Վաղինդապարի եղբօրորդին և 12
մարդ Պաղիղումուխու երեկի ցեղերիցը: Խակ մեր կողա
միցը սպանուեցան: Վալման-Խանի եղբայր՝ Այշիօր Հա
սան-Ղան, 17 մարդ ստորին աստիճանի և թաթա
րաց ձիւորներիցը 44 մարդ. վիրաւորուած էին երկու
Շտար-օֆիցիւներ, 81 մարդ ստորին աստիճանի, և
թաթարաց ձիւորներիցը 61 հողի: Թաշնամոյ բոլոր
բանակը, Սուրբսայշ-Խանի վրանը, աւելի քան 2 հա
զար հրացաններ, և 11 դրօշակ, որոց միջիցն մէկն
պատկանումէր Սուրբսային, և միւսը նորա որդի՝ Կու
խին, յաղթողների ձևոքն անցան:

Այս միջոցումը Խօղեկի բնակիները՝ որ զտնապան
խորշերի կամ այրերի մէջ թագ էին կացել, կամաց
կամաց գուլու գալով երեսումէին և տեսնելով Որուաց
հեղութիւնն ու քաղցրութիւնը, նորա յետ դառան
վիրստին իրանց տները: Վերաւորեալ Լեռնաբնակներն
կամուղարկվումէին իւրեանց կանանց մօտ կամ յանձ
վումէին Վուլաններին՝ Որուաց բժիշկներից մէկի վե
րահայեցողութեան ներքոյ: Վէս զիշերին յայտնուեցաւ

ազատութիւն գերեվարեալներն, յորոց ամէն մէկը հանդիսաց իւր տունը:

Այս ամէն հանդամանքը բոլորովին համողեց Պաղպաղումուխու բնակիչներին, որ պատերազմը՝ ոչ թէ նրանց հետ է եղել, այլ նրանց ուխտազրուժ հարստացարողին հետ:

Սուրխայ Խանը՝ կէս գիշերուայ մօտ, պատերազմի գաշտիցը փախաւ զէպի Պաղիղումուխու քաղաքական դռները, մի քանի Կուքերներով և հաւաստարիմկողմնաւկիցներով: Քայցնորակրած հարուած համբաւք իւրեանից առաջ էր հասել, վասն որոյ և նա զտաւ քաղաքի դռները փակած: Քաղաքի զլսաւորները բերդի պատերի վերայ դուրս գալով, ժողովրդի անուամբը խորհուրդ տուխն նրան հեռանալ, և թէ չ' ուզում, որ իրեւ թշնամի ընդունուի: Ահա այսպէս վերջացաւ այդ Խանի իշխանութիւնը, որ իւրեանից յետոյ թողեց միայն անսահման ինքնակամութեան յիշատակ:

Պաղիղումուխումը սահմանուեցաւ ժամանակաւոր կառավարութիւն քաղաքի Պալսաւորներիցը, որ՝ համաձայն ընդհանուր ժողովրդեան կամացը, յայտնեցին, որ Սուրխայ Խանը զրկուած է իւր տէրութիւնիցը, և անսելով, որ էլ ուժ չհւնին ընդդիմութիւն ցոյց տալ, Ազան Խանին մօտ երեք զլսաւորներ ուղարկեցին, որ նորա միջնորդութեամբը խաղաղութիւն խնդրեն ու յայտնեն իւրեանց հնազանդութիւնը Ուուսաց Տէրութեանը:

Ուուսաց զօրագունդը, Խօղբեկի միջումը զօրել զօրք թողլով հանդերձ երեք թնդանօթներով, ամսի 14-ին դուրս եկաւ զէպի Պաղիղումուխը, և ճանապարհը զետերի ու սարերի միջով լինելով, այնքան դժուար էր, որ զինուորները պարտաոր էին թնդանօթները ու

Հրացան նիւթերի արկղները իւրեանց շալակին տանել :
Վ ասնորոյ Անեաղ Մատաթովիր ստիպուած գոլով զօրագն-
դիցը թողել մի բատալիօն՝ հանդերձ 8 թնդանօթներով ,
ինքն մնացած 4 թնդանօթներովն և երկու բատալիօններով
խաղաց դէպի . Պ ազիզումուխը , որոյ Գլխաւորները կա-
մենալով , որ Ոչուսաց զօրքը շուառվ գան , շրջակայ
զիւզօրէից բնակիչներին հրամայեցին , որ զիշերը ուղ-
ղացնեն ճանապարհները , և միւս օրը օգնեն Ոչուսաց
հետեւակ զօրքին՝ քարշել թնդանօթները և ուրիշ ճան-
բոցքները : Բնակիչները շատ զարմանաւմին , տեսնելով
մեր թնդանօթների հաստատումն անիւների վերայ (Ճա-
փեր) և երկար սայլերը , (Փյոր) որ պարզ ապացոյց էր ,
թէսրանից առաջ՝ այդ կողմումը այդպիսի բաներ չէին տե-
սել , բայց նոցա մօտ գտնուած թնդանօթները , որ եր-
բեմն նույն էին պարսիկներիցը Պ ազիզումուխու սահ-
մաններումը , բերուած էին սահմանների վերայ : Զօրքը
Պ ազիզումուխին մօտենալով , անցան Պօյսու գետը ,
որ ընկած էր մի խոր լիռնաձորի միջով և ունէր
միակամար ու չափազանց նեղ քարէ կամուրջ : Կիա-
զաքիցը 10 վերստ հեռու , Անեաղ Մատաթովի առաջնէին
գուրս եկել հացիւ և աղով բոլոր Գլխաւորներիցը և 8
Մահալների հասարակութիւնիցը ընարեալ պատգամաւոր-
ները : Խսկ քաղաքը մանելիս , բերդի բանալիքը բերեն
նորա առաջը՝ դրած մի սկուտեղի վերայ : Եյս բերգումը
առուած է 7 թնդանօթ , 3 պղնձեայ ծօլուի և Եա-
գիր - Շահի երկու չուզունի թնդանօթները :

Անեաղ Մատաթովը դէպի քաղաքի զլխաւորներն
մի ճառ խօսեցնոցալեզուովը , յորում յայսանց ԱՊՀՔ
ՍԵՆԴԻ ԱԾՅԱՆԵՐ բարեխորհուրդ դիտաւորուիը և
թէ նորա զօրքն եկել են Պ ազիզումուխը՝ յատուկ նորա

Համար, որ վերնախնամը տնաշութիւնիցը սահմանեալ նոր Խան կարգեն ժողովրդի բարօրութեան համար, որք ուրախութեան աղաղակներ արձակելով հաստատումին, թէ ինչպէս քաղցը է թուում նրանց այս արևելեան ճառը և թէ ինչպէս հաճելի է նրանց նորա առաջարկեալ փոփոխումն։ Ապան-Խանը հռչակեցաւ եշխող Պաղիղումուխին և նորա կառավարութիւնը իւր ձեռքի տակն առաւ։ Շատ վաղուց արդէն ոչ մի օտար զօրք չէր երևեցած երբեք այդ նահանգի մէջ։ Պարսիկներն անդամ, որ շարունակաբար աիրումին Առվկասու հարաւային մասումը, չկարողացան նուածել Պաղիղումուխու քաջ յեղն։ Ուսւաց այս տեղ մնալն Պալսաւորներին տարակուսանաց մէջ էր բերում, թէ և Կնեազ Սատաթովի խաղաղութեան վերաբերեալ ասած խօսքերը՝ բերանից բերան անցնելով, հասել էին մինչեւ այն գաւառի ծայրն էլ։ Զօրագունդը քաղաքը մտնելուց 24 ժամ յետոյ, Պաղիղումուխու մնացեալ զօրքն թողին իւրեանց զէնքը և բոլոր բնակիչները սկսան արերիցն ու ձորերիցը խումբ խումբ թափվել քաղաքը՝ իւրեանց նոր Խանը ճանաչելոյ համար։

Այն օրը՝ յորում Ապանը Պաղիղումուխու Խանութեան վերայ հանգիսաւոր ամբարձումն ստացաւ, առաւտօտեան 10 ժամիցը սկսած, բաց էին մզկիթի զըռները, ուրանօր մտաւ Ապան-Խանը շրջապատուած բազմաթիւ և փայլուն ուղիկցօք։ մզկիթի մէջ տեղը զրած էր Պուրանը մի թմբէկի (ճարածահ) վերայ, յորոյ վերայ և հաստատուած էր Աւշաւանու գնդի 2-րդ բատալիօնի դրօշակը։ Պաղիղումուխու բոլոր 8 Մահալների Պալսաւորները, որք հրաւիրուած էին ներկայանալ Խանի այս ամբարձման հանգիսին, մէկ մէկ գաղվ գնումին իւրեանց աջ ձեռքն Պուրանի վերայ և

Երդվում հաւատարմութեամբ հպատակիւ ԿԱՅՍԵՐԻ ամենայն Որուսաց և հնազանգիւ Ասլան-Խանին:

Եւշառանու գնդին բօաը զրօշակին մօտ էր, իսկ Որուսաց մնացեալ գօրքը հրացանները ուսոին՝ կանդնած էին քաղաքի պատերիցը քիչ հեռու։ Այս հանդիսի վերջանալուց յետոյ, Ասլան-Խանը դուրս եկաւ պատի գլուխը կարմիր հագուստով, զոր Խանելը հագնումէին այսպիսի հանդիսաւոր զիսլուածներում, և զայն ները՝ սարերի մէջ որոտալով, շնորհաւորումէին ժողովրդեան աղաղակների հետ ՚ի միասին նոր Խանի իշխանութիւնը։ Դրիկունը բոլոր քաղաքը լուսաւորուեցաւ հանդիսաւոր հրավառութեամբ։

Անեազ Մատաթովը ներկայ զգանուեցաւ Խանի ամբարձման այս հանդիսումը, այն մաքովը՝ որ ցոյց տայ, թէ ամէնը ժողովրդեան յօժար կամքովն է եղել՝ առանց որ և իցէ օտար ներգործութեան։ Բայց Ասլան-Խանը բաղմաթիւ ուղեկիցներով գնաց շուտով Անեազի մօտ, որ ընդունեց նրան՝ մինչև իւր վրանի մուտքը նորա առաջը դուրս գալով։ Ասլան Խանը իւր խօսակցութեան մէջ յայտնեց պարզաբար իւր նոր տէրութեան կարողութիւնը, նորա զինուորական միջոցները և այն հնարքները, զորս մտազրել է նա ՚ի զործ զնել ժողովրդեան բարեկարգուել համար։ Արանից յետոյ յայտնեց իւր կամքը, որ ուղումէ շուտով պայմաններ դնէ Որուսաց Տէրութիւնիցը նշանակեալ Պաղիղումուխու Խանութեան զերաց համար և հարկին համար, զորայս նահանգը պէտք է հատուցաներ ԿԱՅՍԵՐՈՒԹԵԱՆԻ ընդ սմին յարելով և այս խնդիրը, որ շու-

տով հանէ այս Խանութիւնիցը Ոռուսաց դօրքը, առեւ
լով որ Տէրութիւնը կարող է յուսաւ Պազիղուա
մուխու ժողովրդոց աննենգութիւնն և հաւատարմուա
թեան վերայ: Այս խօսակցութիւնը, որ եղեւ համաշ
րեա թէ բոլոր Գլխաւորների ներկայութիւնումը, նոցա
վերայ շատ ազդու ներգործութիւն արաւ: Ասլան. Խան
նը՝ փոխանակ Սուրբայի խստասիրտ հարստահարուա
թեանցը՝ չափաւոր հարկ նշանակելով մինքն զրաւեց
բոլոր Պազիղուամուխուց սիրտն:

Անեազ Մատաթովը պատամիանեց, որ Ոռուսաց գօր-
քը դուրս կ'գան Խանութիւնիցը, եթէ բնակիչները չու-
տով հաւատարիմ երաշխաւորներ առաջադրեն, որ էլ
իւրեանց կողմիցը թշնամական գործողութիւններ չ'իւ-
նին, և երբ որ Ասլան. Խանը հաւատացրուց, որ ինքն
երաշխաւոր է այդ մասին, էն ժամանակը Անեազ Մա-
տաթովը էլ յայտնեց Պազիղուամուխու Գլխաւորներին,
որ ինքը քաջ գիտելով նոր Խանի բարի դիտաւորու-
թիւնը, նոցա հաւատարմութեան համար զրաւ չ'է
պահանջում և կ'հրամայէ գօրքին դուրս գալ նոցա
նահանգիցը, եթէ միայն գիւղականները գան շուառվ
երդուիլ:

Անեազ Մատաթովը տեսնելով, որ ինչ որ վերա-
բերգումէ էկապետիցիսյինն, ամէնը լիովին կատարուել է,
զօրագնդին հրամայեց դուրս գալ: Եւ այսպէս ամսի
19-ին իրիկունը Ոռուսաց բանակը վեր առուաւ այն տե-
ղից, և Ասլան. Խանը իւր հանգիստականօքը ուղեկից
դառաւ զօրացը, որք դուրս գալով Պազիղուամուխիցը՝
չորս վերստ հեռու բանակեցան:

Անեազ Մատաթովը ճանապարհին զանազան տեղերի
բոլոր Գլխաւորներիցն էլ երդումն առաւ, որ հաւատար-
մութեամբ ծառային Այսերն ամենայն Ոռուսաց Սոցա

թուումն էր և Ակուշեցւոց դատաւորը, (գատի) որպէս
միջնորդութեամբը Սուրկինու բնակիչները՝ զարհութած
Պաղեղումուխու նուածելովն, թողութիւն ինզրեցին,
Վնեազն էլ հրամայեց նրանց, որ նոքա իւրեան ներ-
կայանան խօզրեկումը, բնդ որս եկան և Պարագինցիք՝
նոյնպէս խոնարհուած։ «Եռքա ամենքն էլ երդուեցին
հաւատարիմ մնալ, և պարտաւորուիլ չափաւոր հարկ
հասուցանել Ուուսաց Ծերութեանը։ Արանից յետոյ
հետեակ բաաալիօնները գնացին իւրեանց առաջին բնա-
կարանները, իսկ թնաժարաց զօրքը բաժանուցան դէպի
իւրեանց Խանութիւններն ու նահանգները։ և Ասլան
Խանը անվրգով տեր գարձաւ Պաղիղումուխին և հա-
ւատարիմ հպատակ մեաց Ուուսաց ԹՀԳԵԿԻԱ-
ՌԻՑ։

Եւ այսպէս երկու շարթուայ մէջ վերջացաւ Պա-
ղիղումուխու պատերազմը, որ կարծումէին, թէ՝ երկու
ամիս կշարունակուէր և Կովկասեան Կօրպուսի քաջ
զօրաց մեծ մասն կ'կորցնէր, կամ շատ նեղութիւններ
և սաստիկ պատերազմ կ'լինէր այնպիսի ժողովրդեան
հիտ, որ յայտնի են իւրեանց քաջութեամբը և որոց
աեղը հէնց բնութիւնիցն է ամուր։ Ոչ թէ միայն նու-
րա պատերազմական յանդգնութիւնն և զօրափարութեան
հմառութիւնն էր, որ հասցրին այսքան անակնունելի
յառաջաղիմութիւնները, այլ և առ խոսփարաբներն ունե-
ցած նորա սաստիութիւնը և առ յաղթուածները
ցոյց տուած քաղցրութիւնն ու մեծահոգութիւնը, նո-
րա անխաք զգաստութիւնը և 'ի վերջ ամենայնի նո-
րա ազնիւ ու ամենեին չ'այլայլ ուող հաւատարմութիւնը,
այս ամենը հեշտացնումէին յաղթութիւնը, հասատու-
մէին արած նուածմունքները, և շիջուցանումէին գալու-
նի թշնամութեան հուրը, որ Ասխացւոց մէջ համարեալ

թէ անանցանելի էր, այն Ասիացւոց՝ որ ոչ ՚ի վաղուց
Եւրապայի թագաւորութեաններքոյ էին։ Ղազիղումուխը
նուածելոյ համար, Անեազ Մատաթովը պարզե ստա-
ցաւ Ա. Վլադիմիրի ասպետական նշանը՝ Զ.րդ կար-
գի։ (16)

Գլխաւոր-Հրամանատար Գևեկրալ Արմօլովը այս յե-
տագայ պատռերը տուաւ։ “Ո՛վ քաջ զօրականք, ա-
ռաւել ևս պատժելով հակառակորդներին, հարկաւոր
էր մեր զրօշակները բարձրացնել Առվկասու սարերի
գլխին վերայ և յաղթութեամբ մանել Ղազիղումուխու
Խանութիւնը։ Աստահ լինելով ձեր քաջութեամբը,
ես ձեզ հրաման տուի, և գուք պատժեցիք զարհու-
րել հարուածով այն քաջադոր թշնամոյն, որ յա-
մառութեամբ պահպանուած էր ամուր տեղերում և
մարտկոցներում։ Փախաւ Սուրբայ-Խանը և նորա տէ-
րութիւնները մոխն ընդ հպատակութ Մնծի ՏԵՇՈՒ
մերոյ։ Դաղստանումն էլ մեզ հակառակ ժողովուրդ
չկայ,,:

“Ո՛վ քաջ զօրականք, կ’յայտնեմ ես Այսերն Զեր
քաջութեան դրծոց համար, նա էլ է իմանում զօ-
րականաց նեղութիւնները և վտանգները,,:

Անեազ Մատաթովը յետ դառնալով այս պատերազմ-
ներիցը, որովք բոլորովին նուածուեցաւ Հիւսիսային
Դաղստանն, պարապումէր բարեկարդելով իրան կա-
ռավարութեանը յանձնեալ Խանութիւնները, որոց վե-
րայ մանաւանդ այս միջոցումը, մեծ վերահայեցողու-
թիւն պէտք է լինէր, որովհետեւ Խաները փախել էին
Պարսկաստան։ Երփանու Խանը՝ 1820 թուումն, Ղա-
րաբաղինը՝ 1822 թուումն։ Եւ նոցա թողեալ Խանու-
թիւններն, որ Անդր-Առվկասեան նահագների մէջ ամե-
նիցն առաւելքազմամարդ և հարուատն են, մտին Ուուսաց

Տերութեան ինամբի տակն։ Այլև պէտք էր ընտելացուցանել խոնարհութիւնը այս ժողովրդեան մէջ, որ թէ և շատ գծուար էր, որովհետեւ սոքա բնաւ քաղաքական բարեկարգութիւն չ'էին տեսած, այսու ամենայնիւ Անեազ Մատաթովը յաղթեց ամէն արգելքներին իւր խոչեմամիտ կարգադրութիւններովը և միշտ աշխատումէր վարուիլ Աղեքսանզը Ա. Կայսեր Շարձրագոյն Հրովարտակաւ հրամայեալ կամքին համաձայն, ուրանօր ՚ի միջի այլոց ասուածէ և այս. “Գիւղացւոց հետ լաւ վարուելոյ եղանակը ցոյց է տալիս բարեկարգ կառավարութեան գեղեցիկ օրինակը՝ ընդգէմինքնակամ Ասիացւոց տէրութեանը, և բնակիչների սիրան առաւելէ մօտեցնում դէպի այն թարգաւորուին, որ պատրաստ է միշտ բարութիւն անել իւր հաւատակներին,,:

Այս երեք Խանութեանց ամէն մէկումն էլ սահմանուեցան շուտով Գրաւառական դատարաններ կամ գիւաններ, որոց մէջ արդարադատութիւնն պինդ պահպանելոյ համար ներկայ էր գտնվում Անեազ Մատաթովն իրրեւ նահանգական Գլխաւոր։ Գործերը շուտ վերջացնեն, գանգատները շուտով և արդարադատութեամբ քննելն, (վասն զի ամէն մարդ կարողէր ազատութեամբ մանել նորա մօտ և ասել իւր գանգատը) հաստատ համոզեցին ժողովրդեանը, որ նորա վիճակը սկսվումէ բարւոքիլ Ոչուսաց կառավարութեան ներքոյ։

Ամէն ժամանակ այդ Խանութիւնները ծաղկեցան և վայելեցին կատարեալ հանգստութիւն ու ներքին ապահովութիւն, այնպէս որ՝ ՚ի գործ էին դնում այս առածը։

թէ՝ “Աինը կարող է ապահով ման գալ Պարաբա-
ջումը, զլիսին ոսկի դրած,, (*):

Վաճառականութիւնը և արուեստը ճաղփեցնելը
համար, Անեազ Մատաթովը հարկաւոր համարեց պա-
ռապուիլ ճանապարհները լաւայնելով. ուստի 1823
թուականին սկսեցին բարեոքել ճանապարհը՝ Ասկերա-
նից մինչեւ Շուշի քերդը և այնտեղից էլ համարեալ թէ
մինչեւ Աւո-Օլլանը: Շուշի տանող ճանապարհը՝ ապա-
ռաժուած ժայռերի միջով լինելով, չափականց դժուար
էր, այնպէս որ՝ հինգ վերստ կարծես ելեկջներով էին
արձրանում, այն էլ դժուարակոխ ու քարուտ ժայ-
ռերի վրայով և ապա ձիով համարնում այն ճանապարհը:
Իսկ 1825 թուումն նորա բնակիչները այդ ճանապարհը
բոլորովին բարեոքեցին Անեազ Մատաթովի անձնական
տեսչութեամբն՝ առանց որ և իցէ օգնութեան Տէ-
ռութիւնիցը, այնպէս որ՝ այն ժամանակիցը սկսած, մեր
դօքքը տանումն ազատ իւրեանց զանազան ծանրոցք-
ները սայլերով և վաճառականութիւնն էլ ազատ-
ուել է առեւտուրը Ճնշող դժուարութիւններիցը:

Բնդ սմին Անեազ Մատաթովը՝ Երմօլովի կարգա-
զրութեանը նայելով, հօդ էր տանում և մի ուրիշ
առարկայի վերայ, որ ոչ սակաւ հարկաւորութիւն ու-
նէր: Պաղախներն՝ որ Գանձակ (Ելիսավետովով) քա-
ղաքիցը մինչեւ Շուշւոյ զառիվերն ընկած մեծ ճա-
նապարհի վերայ եղած պօստերն ունէին, շատ անգամ
մեծ թուով զոհ էին դառնում օդի ֆնասակար ներ-
գործութեանը և տօթագին ցածուցներումն դանուող
ջրերի վատութեանն. և բաց յայսմանէ գարնան ժամա-

(*) Ինչպէս պատմումն, տեղւոյս հարուստ ժողովուրդն Խաների
ժամանակը, նոյն երկիւղեց՝ աշխատումէին ծածկել երանց
հարստութիւնը:

նոնկը գետերը իւրեանց ափերիցը դուրս գալով մեծա-
մեծ խոչընդուաներ էին առաջարրում ճանապարհին:
Ուստի այս ամէն դժուարութեանց առաջն առնելոյ-
շամար, մի նոր ճանապարհ բացին սարերի ստորոտնին՝
Գրանձակից 20 վերսա սկսած մինչև Շուշոյ նոյն իսկ
զառ. 'ի վերն: Այս տարածութեան մէջ Կնեազ Մա-
տաթովնին ինքն անձամբ անձին այնպիսի տեղեր ընտրեց,
որ շատ առողջարար էին և յարմարաւոր Պաղախաց
պօստերին ու փոստայի իջևաններին (ռանպի) համար:
Մոցա մօտ էլ Կնեազ Մատաթովը կամենումէր՝ մի քա-
նի գիւղականաց բնակութիւն քցել, այն մաքովն՝ որ
ճանապարհորդները կարողանան նրանցից ստանալ իւր-
եանց կարիքն, որովհետև Գրանձակիցը մինչև Շուշի
ճանապարհորդներին համար մի ապաստանի տեղ չկար:
Կա սրանով էլ չրաւականացաւ, այլ յօժարեցրուց ևս
Շուշիցի Հայերին շնել երեք քարէ կամուրջ յե-
տագայ գետերին վերայ, որք են՝ Վիւրաք-չայ, Թար-
թար և Խաչեն-գետը. բայց այս սկսուած գործերը թե-
րակատար ննացին՝ 1826 թուականին 'ի Պարսկաց
յանկարծ բորբոքեալ պատերազմի պատճառաւուն:

Կնեազ Մատաթովի գործունեութիւնն երևումէր այն
ամէն բանի մէջ, ինչ որ վերաբերումէր Տէրութեան
օգաին և ժողովրդի բարելաւութեանը: Տնտեսական մասն
առանձնապէս իւր վերայ գարձցրուց նորա ուշագրութիր,
այնպէս որ՝ նորա կառավարութեան ժամանակը առաւել
բաղմացած և յառաջ էր զնացած շերամ պահելոյ եղանակը
այդիներիմէջ, որ Շիրվանու և Շաքուայ գաւառներուն
մեծ եկամուտ է հասցնում Տէրութեանը: Կնեազ
Մատաթովն իմանալով, որ այս երկրի մարդիկը՝ թէ-
պէտ և աշխատասէր են, այլ բնականաբար սէր

չունին նորամուտ բաներ ընդունելոյ, ընդնմին իմանալով
և որ միայն մի երևելի անձին՝ մանաւանդ զլսաւորի
օրինակը կարողէ նրանց յօժմարեցնել այդ բանին, ջանք
էր անում համոզել բնակիչներին, որ բաղմացնեն և
մշակն երկրագործութեան ամէն ճիւղերը։ Այս նպա-
տակաւը նո՞ւ իւր սեպհական կայքումը, որ Պարաբա-
զումն էր, ի գործ զրաւ իւր առաջին փորձերը։ այն է
Բուրբոն կղղիիցը բամբակի սերմեր բերել տալով սկսեց
ցանել, որ լաւ էլ յաջողեցաւ, բաց յայսմանէ նա աշ-
խատումէր ձիոց երամակի (Եվ) պահպանողունը համար,
յորոց Պարաբազինը շատ անուանի են բոլոր Անդր-
կովկասեան կողմումն, նա և Պարսկաստանումը։

1823 թուումն սկսուեցաւ Ռուսաստանի սահմանների
ձիշտ նշանակումն Պարսկաստանի հետ՝ Ախւատանու
պայմաններին վիրայ հիմնուելով։ Այս բանի համար եր-
կու կողմիցն էլ նշանակուեցան լիակատար իրաւունք
ունեցող կօմիսարներ, որոց մէջ երկպառակութիւն ընկ-
նելով, Կնեազ Մատաթովը Գնիներալ Երմօլովի հրա-
մանաւը գնաց Արաս Միրզի մօտ, իսուել այդ երկպա-
ռակութեանց առաջն առնելոյ հոմար։ Արաս Միրզան
էլ Կնեազին այդ առարկային համար արած առաջար
կութեանը, համաձայնուեցաւ։

Կնեազ Մատաթովը՝ շրջապատուած փայլուն հան-
դիսականներով և բազմաթիւ ձիաւորներով՝ որ բաղ-
կացած էին երեք խանունց զլսաւոր ցեղերիցը, նշանա-
կեալ օրը երեւեցաւ խուդապերինի կամրջի մօտ։ Ձիաւոր-
ների հարուստ հագուստը, թշանկագին գէնքը, փայելչա-
հասակ ձիանքը, պատուական զարդը, այս ամէնը՝ մաս-
ցած Եղերաց 42-րդ գնդի և թնդանօթաձիգ զօրաց
գեղեցիկ դասակարգեալ շարքերին հետ, մի փայլուն տե-
սարան էին ներկայացնում։ Ինչ որ կարելի էր, ամէնը

՚ի գործ զրուաւ, որ այս հանդէմն յաշտաքուստ ելա-
ռաւաւել շքեղութիւն ստանայ, որն շատ զմայլեցնողէ
Պարսկաց և միւս արևելեան ազգնրին։ Աամենալով,
Պարսկաց զոնէ մի քիչտեղեկութիւն տալ մեր զինուո-
րական բարեկարգութեան համար, Վնեազը հրամայեց
զօրքին՝ 'ի ներկայուեն նոյց դուրս գալ ՚ի հանդէս և
իրանց պատերազմական կրթութիւնն անել։

Աբաս Միրզան իւր որկովքը և արքունի սպասա-
ւորներովքը մի առանձին բաւականութեամբ եին նայում
Ոտուսաց զինուորների արագ ու կանոնաւոր շարժո-
ղութեանց վերայ։ Օ ինուորական նուագարանների ճայ-
նը, ձիարշաւառնելլ՝ (ձիքշեն) որշտասիրելի եր տեղւոյս
ժողովրդեան համար, և վերջապէս արուեստական հուք
(Փրշանգ—Փեյքերքե) վառեն, այս ամենը՝ զրաւու-
մեին Պարսկաց սիրտը գէպի իրանց։ Աատաթովք՝
Պարսկատանի ժառանդիցը մեծ պատիւ և սէր ընդու-
նելով, ջանք եր անում անքակ հաստատել երկու Տե-
րուեց մէջ բարի յարաբերութիւներ, գործունեայ հնարք-
ներ եր ՚ի գործ գնում, որ սահմանամերձ թափառա-
կան ժողովրդեան ասպատակութիւներն խսպառ վերացնէ ու
փոխադարձ սէր կամ միարանուի, հաստատէ, և այս ամենն
էլ յաջողուցը։ Այս ժամանակիցը սկսած՝ նա շատ
անդամ բարեազրեր եր ստանում Աբաս Միրզիցը, յո-
րոց մէկն թարգմանելով Պարսկերէնից զնումներ այս տեղ-
հետաքրքիրների համար։

“Պերաստիճան, բարձրապաշտօն, մեծարդի, քաջ, կո-
րովամիա, անուանի, զարդ Վրիսառնէական իշխանաց,
Պայծառափայլ Գրեներալ Վնեալ Աատաթովին յայտ-
նումներ, որ Կորին Պայծառափայլութեան օրինաւոր
համակը մեզ հասաւ Բարձրաստիճան Աէնջում Բէկի-
ձեռօքը և նորա միջի ձիշտ պարունակութիւնն՝ սկըզ-

եիցը մինչև վերջը, յայտնի եղեւ մեր բարեհաճ՝ մտացը:
Ճշմարիտ եմ ասում, Զեր սէրը, առ մեզ ունեցած
հաւատարմութիւնն, արդարութիւնը և մէծարանքը
կրկին հաստատուեցան և առիթ դառան մեզ համար 'ի
նորոյ ունենալ անկեղծ սէր և անչափ հաւատարմու-
թիւն: Թաէսկտ Զեր բարի դիաւաւորութիւնը և
գեղեցիկ հաւատարմութիւնը մեր բարեսէր մոքին
յայտնի էին պարզ արեգակի պէս, բայց այժմ Զերդ
Պայծառափայլութեան բարեկամութիւնը և ցանկուցիչ
սէրն առաւել ևս պարզուեցաւ, յաղագս որոյ
և մեր պարզ մտաց առ Զեղ ունեցած ապաւինու-
թիւնը կատարեալ եղեւ բոլորովին: Զերդ պայծառա-
փայլութեան ուղարկած չորս բաղէն հասան մեզ, որոց
և շատ հաւանեցան:

“ Այս, մէք այժմ Երասխ դետի եղբներու մը որսորդու-
թեամբ պարապուելով, միշտ յիշումնք մեր անցեալ
տարուայ միմեանց պատահելն այս եղբների վե-
րայ, յորում նկատեցինք Զեր մէջ գոփոսանական
վարդովութիւններ և գեղեցիկ որակութիւններ, և
այժմ ցանկանումնք էլի մի այդպիսի դիպուածի, մա-
նաւանդ նորա համար, որ՝ այն ժամանակիցը մինչեւ
այժմ մեք տեսնումնք, որ Զեր ջերմեռանդութիւնը եր-
կու թաղաւորութեանց գործերումն էլ ակներև առա-
ւել և առաւել բազմանումէ: Իմանալով ձեր գեղեցիկ
ձիքը և կատարեալ նրամատութիւնն, մէք հաւաստի
մնք, որ Դուք իսկապէս հասկացաք և գնահատեցիք
մեր առ Զեղ ունեցած սէրն և շնորհըն:

“ Այժմ էլ, որովհետեւ Զերդ վերսոյիշեալ Բարձրաւ-
տիճանութիւնն թոյլառութիւն ստացաւ յետ դառ-
նալ, մեր առ Զեղ 'ի սրտե՞ ունեցած սէրն զրու-

թիւն է պահանջում։ Գիտելով մեր բարեհաճռւ-
թիւնը, կարող եք դառնալ առ մեզ Զեր խնդիրք-
ներովը և կամեցողութիւններովը, անշուշտ հաւա-
տացած լին ելով՝ որ ուրախութեամբ կ'կատարեմք
դայնս,,:



Պարսիկք թափվումն Ոռուսաց Տէրութեան մէջ . — Շամբռա-
քի յաղթութիւնը . — Գանձակու աղատավիլն . — Ծուշւոյ ըեր-
գի պաշարման բառնայն . — Պարսկաց հարուածը Գանձակի մօտ . —
Ղարաբաղու յստակումն՝ 'ի թշնամեաց . — Պատերազմաչու 'ի Մեկո-
կիխ . — Գարնան կամպանիու պատրաստութիւնն . — Կնեազ Մատա-
թովին պատերազմաչուն . — Խուդապերինի կամքի մօտ եղած
պատերազմը . — 'ի Տիկիս վերադառնալ :

— ՀԵԿ ՑԵԿ —

Ոռուսաստանի և Պարսկաստանի մէջ երկարատե-
սվաստերազմը 1813 թուին վերջացած էր Ավալսանու-
ղաշնազրութեանց վերայ հիմնուելով , և խաղաղութիւնը՝
կարծես , հաստատուել էր ընդ երկար ժամանակ : Որով-
հետեւ այն ժամանակից սկսած երկու Տէրութեանց բա-
րեկամական և խաղաղ յայտնի յարաբերութիւնները
բարօքութիւն էին խոստանում այն մերձասահման կող-
մին : Դ վազուց մոռացիալ արուեստները և պատե-
րազմի հետ անմիբան առեւտուրը՝ այն հանդիսա-
բնակիչներին համար , նոր ազբիւրներ բացան հարստու-
թեան . բայց արտաքին ձևով նկատողներին համար
զաղտնի և աննկատիլի եղանակաւ արհաւիրք էին պատ-
րաստվում : Թայլ և հպարտ Պարսկաստանը չէր մո-
ռացել իւր հարուածները և դեռ իւր կուրուե մէջ լի-
նելով , սկսաւ մտածել նրանց վերայ՝ իբրև թէ եղեալ
լինէին նոքա ատելութեան պատճառաւ , և ոչ թէ իբրև
մի դաս՝ որ տուել էր նրանց Ոռուսաստանի գերազանց
զօրութիւնն :

թօշնամութեան խոր թաղած սելմը կամաց կամաց դուրս էր գալիս և յարմար միջոցների էր սպասում, որ բացուի: Միայն եղբեմնակի երեսելով՝ նոցա չարա կամութիւնն՝ Ասիական գաղտնի նենգութեան միջոցով, այն կողմի զլսաւորներին միտքն էր բերում կարեռ զգուշութիւն:

Բայց երկու Տէրութեանց միջի եղեալ արտաքին հաշտութիւնն կարելի էր դեռ երկար շարունակուեր, մանաւանդ որ Ոչուսաստանը ամեննեին պատերազմելոյ կամք չ'ունէր, և չ'էր ելուզիլ, եթէ նորա քակուումը բաց չ'անէին շուտով երկու անձինք՝ որ թէպէտ յարա տաքուստ միմեանց հակառակ էին, բայց ՚ի նեղքուստ ներգործումէին համաձայն իրերաց: Այդ անձանց առաջինն էր Ալահեար-Խանը, որ նոյն ժամանակի թագաւոր՝ Գաֆ-Ալի-Շահին փեսայն և զլսաւոր Կախարարն (Առաջեր) էր, շատ խորամանկ, ինքնակամ և չափազանց արծաթամաշէր. նա ոչ թէ շարժուած էր հայրենասիրուիից կամ Ոչուսաստանի գէմ թշնամութիւն ունենալուց, այլ նա ցանկանումէր պատերազմի՝ միայն այն մասին, որ Շահին հեռացնէ այն կարծիքիցը, որ արդէն խմացել էր նորա յանցաւոր գործողութիւնները: Երկրորդ անձն, որ երեսի է և պատմութեան մէջ տեղ ունի բռնած, Պարսկաց գահի ժառանգն էր, թ՛ Շահի որ գի Արքաս-Արքան: Եորա կամքը՝ որ էր Ոչուսաց հասուցանել իւր անյաջողութիւնները, այն յոյսը՝ որ կամենումէր նա գործով ոյց տալ իւրեան այն կանոնա նաւոր գօրքի գերազանցութիւնը, որն կարգադրուած էր ընդդէմ հօրը կամքին և ժողովրդի քրթմնջանացը, այն հպարտութիւնը՝ որ նա ստացել էր Տաճիկներին գէմ ունեցած յաղթուրը և ամենիցն առաւել այն ծուռ դատողութիւնը՝ զոր ունէր նա Ոչուսաց այն միջոցի

Քաղաքական դրութեան համար, այս ամենը՝ ստի-
պումէին նրան մի վստահ յարձակմունք անել : Եւ այս-
պէս, երբ խորին խաղաղութիւն էր՝ Պարսիկները ՚ի
ծածուկ մտածել, զժռել և պատրաստուել էին պա-
տերազմ տալ, միայն թէ յարմար ժամանակի էին սպա-
սում և մի բարեպատեհ պատճառի բայց նոցա սպասել
էլ երկար չքաշեց :

Ախլատանու դաշնաղութեան նայելով, Զայունդուր
և Պապանու Մահալների մի մասն՝ հանդերձ Զայուն-
դուր և Պապան դեսերին ձախ կողմումն ընկած ամէն
հօղերովը, Որուսաստանին էր պատկանում, և հաշ-
վումէր Պարաբաղու նահանգին մէջ, բայց Մեղրու,
Պապանու և Երասխ գետերի միջին տարածութիւնը
գեռ վէճի տակ և անսահման էին մնացել : Ասն որպէ-
ս յողերը առիթ դառան պատերազմելոյ, չնայելով՝ որ
Որուսաց Դրան զօրեղուիր կարող է մերժել զայն: Կնեազ
Մննշիկովը զլիսաւոր Դրսպան նշանակեցաւ Պարսկաց
Դրուն գնալոյ համար, որ մէկ քանի ամիս Տփիսիումը
մնալով, 1826 թուականին Մայիսի սկզբումը ճանա-
պարհ անկաւ դէպի Դէհրան:

Պարսկաստանը ընդդէմ դաշնաղութեանը՝ վերոյիշեալ
հօղերը ձերբակալ առնելով, ստիպեց զիշխանութիւնն
Կոմիսառու՝ զօրք ուղարկել առ ՚ի նկատել Երիվան նա-
հանգի Հիւսիսային մասումը գտնուող Աւան (Պուշա)
լին ըլջապատող լիռները: Դեռ սորա համբաւը Պարս-
կաստանի գուռն չհասած, Որուսաց Կայսերուն Պահաւոր
Դրսպան Կնեազ Մննշիկովը, բռնուած էր արդէն Դէհ-
րանումը՝ որ Շահի աթոռանիստ քաղաքն է: Բայց
մինչեւ մէկ քանի ժամանակ՝ նա կարողացաւ ազատ դուրս
գալ Դէհրանիցը, միայն թէ յետ գառնալոյ ժամանակը
Երիվան մտնելով, նորից բանուեցաւ Օդոսառուի Զին: Աբ-

բառ-Միլդան իւր հօրը շարժելով դէպի մի այնպիսի փարփողութիւն, որ շատ ընդգեմ էր ժողովրդի իրաւանցը և բոլորովին ոչնչացող խաղաղութեան համար սահմանուած պայմանների սրբութիւնը, զգաց՝ որ այս փարփողութեան ամօթը կարողէ միայն ծածկուիլ շուտափոյթ և փայլուն յառաջադիմութներով: Ա ասնորոյ ամառն 1826 թուականին նա զիսաւոր առաջնորդ դառնալով դօրաց վերայ, յանկաք մոտաւ Ուսուսաց սահմանները: «Սորա անձնական առաջնորդուե ներքոց եղած դօրագունդը յարձակուեց Ղարաբաղու վերայ, իսկ միւսը՝ Խրիվանու Մարդար (փոխարքայ) Հուսէյին. Խանի զօրավարութն յարձակուեց Բամբախու վիճակին և Հուրակել դաւառին վերայ: Երբաս-Միլդան ջարդելով Վզերաց 42-րդ գնդի բատալիօնը՝ որ Ղարաբաղու Կիւրէս զիւղումն էր բանակած, յարձակուեց Վնեազ Մատաժովին պատկանեալ Զանախչէ զիւղին վերայ և քարուքանոյ անելով զայն, փաղեց շուտով դէպի Հուշերին, սասաիկ պաշարեց զայն, և իւր առաջաւոր զօրքն էլ ուղարկեց առնուլ զՊանհճաւին:

Եյս միջոցուամը Վնեազ Մատաժովը գնացել էր Կոփկասու հանքային(տաք) ջրերն, իւր առողջութիւնը վերանորոգելոյ համար, որ խանգարուել էր պատերազմական նեղութիւններով, վերքերով և իւր կառավարուեներքոյ եղած նահանգների տօթազին կղիմայովը: Եյս տեղնա մի այնպիսի հրաման ստացաւ՝ յորում, Պարսկաց արշաւանքի պատճառաւուը, Արաստանի զիսաւոր կառավարիչն զրել էր նրան՝ շուտով Տիփսիս հասնել: Մատաժովը՝ մոռացած իւր հիւանդուիր և այն վիշտը, զոր կրութիր նա ՚ի պատճառս իւր հայրենիքի վերայ արած յարձակմանը, անյասպաղ ճանապարհ ընկաւ փոստայիւ,

արադուք անցկացաւ ձիով Առվկասու զառ՝ ի վեր տեղերն
և երկու օրուայ մէջ թողեց այն ջրերը ումտաւ Տփխիս,
ուրանօր Օգոստոսի 10-ին հրաման ստացաւ իւր կա-
ռավարաւթեան ներքոյ ընդունել 9 րոտ հետեակ՝ հան-
դերձ 6 թնդանօթներով, որ արդէն գնումնին դէպի
Վզսթոսփա գետի վերայ եղած Ղազախու վիճակն,
և այն տեղ իւր ձեռքի տակն առնուլ ալօգալկով-
նիկ Գրաֆ Սիմօնիչի զօրագունդն՝ որ բաղկացած էր
մի բատալիօն Վրաստանու Գրենազեր գնդիցը, մի բա-
տալիօն Շիրվանու հետեակ գնդիցը, հանդերձ թեթևն-
թաց թնդանօթաձիգ զօրքի 8 թնդանօթներովն և մի
քանի Ղազախներով։

Վայ զօրագունդը նշանակելոյ զլսաւոր նպատակն
նրա մէջ էր կայանում, որ Ղազախու վիճակի
բնակիչներին չթողեն ապստամբիլ, որում նրանց ու-
ղումնին յօժարեցնել Պարսիկները զանազան ցած մի-
ջոցներով, և այն աւազակութեանց առաջն առնուն, որ
Գանձակու նահանգի և Շամադիլու վիճակի
բնակիչներին մեծ շփոթութեան մէջ էին քցել արդէն։
Վայ զօրքի շաբժողուիլը Գրմօլովը կաթեոր
համարեց և այն մասին, որ սրանով հանգստութիւն
հառուցանէ Վրաստանի բնակիչներին, որք անցեալնե-
րումը Պարսկաց յարձակմունքիցը դարձուրելի ճախոր-
դուիներ էին կրել և այս ներկայ արշաւանաց ժամանակը
բոլորովին յուսահատուել։ Բայց մինչև Առվկասուց ակնկա-
լեալ գորքի համնելն, Վրմօլովը չ'էր ուզում ոչ մի
գործողութիւն անել, մինչեւ որ թշնամին ինքը չ'դառ-
նայ առիթ այդ մասին, որով և ճշմարիս յառաջա-
դիմութիւն լինէր։ Աւստի և նա՝ Անեազ Վատաթո-
վին այսակիսի հրաման տուաւ, որ եթէ թշնամին Ղա-
զադիցը անթիւ զօրքով գայ և իւր զօրքը դժուար

զրութեան մէջ ձգէ, միւնոյն ժամանակը զորք ունենաց
Խրիվանու Սարղարին բոլոր զօրացը հետ, — յէտ դառ
նայ Բօրչալուի վիճակն, թողով իւր առաջին
Կարմիր կամուրջը: Խսկ եթէ թշնամին մեծ զօր-
քով չ'յարձակուի իւր վերայ, այն ժամանակը հրա-
մայուած էր նրան մնալ և քննել Դիլիճանու կիրճն
և իւր շարժողութին անել միայն զօրաց մէկ մասամբն, այն-
պէս որ եթէ հարկը ստիպէ, կարողանայ նա կրկին միտո-
նալ: “Աանչեցէք Զեզ մօտ Վզալարներիցը բարեմիտնե-
րին, ասումէ Գաներալ Երմոլովը Պնեալ Մատաթու-
ղի տուած հրամանին մէջ, և համոզեցէք նրանց, որ
պարտաւոր են իրանց ՏԵՐԻՆ հաւատարիմ հպա-
տակ մնալ: Ես մէկ քիչ հաստատ համբաւ ունիմ,
որ նոքա բանակցութիւն են անում՝ Խրիվանու սարդա-
րին հետ և թողել են թշնամոյն զալ անցնել Դիլի-
ճանու կիրճն, որ նշան է նենդութեան, եթէ ոչ՝ թշնա-
մին այն տեղ պէտք է ստանար իւր կորուստն: Եթէ
մի այնպիսի զիազուած լինի, որ Զ'րդ Պայծառափայ-
լութիւնն հաղորդակցութիւն ունենաք Առկւոյ հետ,
են ժամանակը յայտնեցէք նորա բնակիչներին, հրատա-
րակելով՝ որ կամ հալածն շուտով այն տեղից խորա-
մանկ Ապիմ-Խանի մարդկանցը, կամ իւրեանց արիւնը
տան ՚ի փոխարէն այն զըսւելի նենդուեն, յայտնեցէք և
որ միայն այդ թափառականներին հալածելովը կարող
են նոքա ստանալ թողութիւն: Կարելի է, որ նոքա
չ'ցանկանան կատարել այս, բայց շատ կարելին այս է,
որ այս պատուէրը չ'կատարելոյ համար նշանակեալ
պատմի երկիւղեցը՝ նոցա մէջ երկպառակութիւն կընկ-
նի, յորմէ և օտաքականն վտանգ կ'ունենայ:

“ Վշնատեցէք Զերդ Պայծառափայլութիւն, այդ
վիճակումը Զեր հրամանատարութեան ներքոյ եղած

զօրքին պաշար հասուցանել. և երբ որ Պաղախու
բնակիչները սարերիցը իջներով գան իւրեանց բնակա-
րանները (առ որ ինչքան կարելի է, հարկաւոր էնրանց
յորդորել), էն ժամանակը նրանցից մարդիկ նշանակէք
նամակներ տանել, բերելոյ համար: Ես հաստատյոյս
ունենալով, որ Զերդ Պայծառափայլուին մեծ հսկողութ-
ունի, շարունակումէ Երմօլովը, չեմ կարողանում կրկնել
Զել, որ՝ զգուշութիւնը հարկաւոր է, որ՝ ինչքան էլ
թշնամին երկչոս երեխ, այսու ամենայնիւ չպէտք է
արհամարհել նրան, որ՝ պատերազմի յաջողութիւնն
ապահովացնելոյ համար, աւելի օգտակար է թշնամոյն
ընդդիմանալ բոլոր զօրքովն՝ քան թէ փառասիրութիւ-
նից ստիպուած, քիչ զօրքով մեծ զօրութեան առաջը
դուրս գալ և փանդի ենթարկուիլ,,:

1826 թուումն Օգոստոսի 4-ին, Տիեսիսից երկու
բատալիօն զօրք դուրս գալով զնացին մի լայն ճամա-
պարհաւ դէպի Գանձակ: “Խմանումէինք, զրումէ ա-
կանատեսներից մէկը, որ Պարսիկներն արդէն մեր սահ-
մաններումն են, իմանումէինք, որ շուտով պէտք է պա-
տահէնք նրանց գերազանց զօրութեանն: Օինուորները՝
շուտ զուրս գալոյ պատճառաւ, վեր էին առել իւրեանց
հետ մլայն 10 օրուայ պաշար, այն ել՝ պաքսիմատ
(ըսկար): նոցա դէմքի վերայ նկատելի էր տիրու-
թիւն՝ լուռ զնումէին նոքա իւրեանց ճանապարհը և
չէին լսկում պատերազմի պատրաստուած Առուսաց սո-
վորական ուրբախ երգերը և ազատ խօսակցութիւններն:
Աերջապէս երեք օրից յետոյ, մէք հասանք Աարմիք
կամուրջը և այն տեղ կանգ առանք փոքր ինչ հանգստա-
նալոյ համար: Ես միջոցումը յանկարծ մի ձիաւոր
եկաւ՝ այս հրամանը բերած. որ ել յառաջ չ'խաղանք
մինչև Կնեալ Մատաթովի գալն, որն մեղ վերայ զօր ա-

վար է նշանակուած։ Ես չեմ կարող նկարագրել մեր ուրախութիւնը, շարունակում է ականատեսել։ Այս հրամանը յայտնի եղեւ նոյնժամայն և բոլոր ստորին աստիւ ձանաւորներին։

“Փառք Աստուծոյ, աղաղտկումին զինուորները, մեք արժանացանք լինիլ նորա հրամանատարութեան ներքոյ։ Միւս օրը կէս զիշերիցն երկու ժամ անցած՝ Կնեազն հասաւ մեզ մօտ մինչեւ այս՝ մեր բատալիօնները դասաւորուած էին րօտ րօտ՝ նորա առաջը դուրս դարձոյ համար, և բատալիօնի աւագ հրամանատարն առաջարկեց նրան մեջ տեղեկադիր զօրքի զրութեան համար։ Կնեազը ման եկաւ բոլոր րօտերն՝ բարեկով նրանց, և զինուորներն էլ ուրած էին աղաղակում։”

“Ո՛վ քաջ զօրականք, ասաց Կնեազը, զիտեմ իս՝ որ ուտելոյ միս (րօբածո) չունիք։ — Ճշմարիտ այդպէս է, Զերդ Պայծառափայլութիւն։ — Եհա, ո՞վ քաջեր՝ Դուք Ոտուսաց զօրականք, ես ձեզ ձանաչումեմ։ ահա կ'զնանք մեք, կ'զարդենք Պարսկաց և ապա կունենանք ամէն բան։ — Ուրախ ևսք մեռանիլ Զերդ Պայծառափայլութեան հրամանատարութեանն ներքոյ և պատրաստ եմք կատարել Զերդ ամէն պատուէրները Զերմեռանդ սրտիւ, միաբան աղաղակեցին բոլոր զօրականքն։”

Կնեազ Մատաթովի Պաղախու վիճակը շուտ հասնելն զօրեղ և օգտակար տպաւորութիւն ունեցաւ նորա բնակիչներին վերայ։ Ամէնքն՝ առանց բացառութեան նույա առաջը դուրս եկան և մեծ ուրախութ բարեկցին Պաներալին, ասելով՝ որ շատ ուրախ են նորա տեսութեամբն, որում յոյս չունէին նոքա։ սրա նից յետոյ ձայն եղեւ, որ Կնեազ Մատաթովը յետ է կանչուած ի Ոտուսաստան, ուրանօր և պէտք է միշտ մնայ։ “Եա՛ նրանց ամէնքին էլ սեր ցոյց տալով,

խոստացաւ, որ նոքա կպաշտպանուին ՏԵՇԱՆԿԱՅՑ
ՍԵՐ զօրքովը։ Վամն որոյ և նոքա՝ որ թափառա-
կան կենումէին սարերի վերայ, Մատաթովին խօսքին
կատարեալ հաւատ ընծայելով, վիր եկան այն տեղից և
սկսան պարապուիլ երկրագործութեամբ, որ հարկաւոր
էր անպատճառ թէ իրանց և թէ Ուուսաց զօրքին։
Եյս տեղ ամէն մէկն ուզումէր իւր ջերմեռանդութիւնն
շոյց տալ, այնպէս որ՝ գլխաւոր Աղալարներն բնակիչ-
ներիցը գունդ կադմելով, միացան Ուուսաց հետ՝ իւր-
եանց հաւատակից Պարսիկները կոտորելոյ համար։
Օգոստոսի 20-ին Անեազ Մատաթովը տեղեկացաւ, որ
Վրաստանի Թագաւորացն Աղէքսանդրը՝ 2,000 Պար-
սից զօրք է ժողովել և իւր մօտ եղած Թաթարներովը
Համբորի սարերը պաշարած խռովիցնումէ այն տեղէ
բնակիչներին, և միտք ունի զիշերլը յարձակուիլիւր զօրքի վր
և անցնել ։ Սուխույ գաւառն։ Եւ որովհետե այդ գաւառի
առնելովներստական հետեանքներ պէտք է լինեին, ուս-
տի Անեազ Մատաթովը՝ այդ հետեանքների առաջն առ-
նելոյ համար, մտագրեց ունայնացուցանել նորա այդ չար
միտքն։ Ուստի երկու բատալիօն հետեակ զօրք առնե-
լով հանդերձ կ թնդանօթով, խաղաց մի և նոյն
զիշերը զեպի վերոյիշեալ սարերն և 30 վերս-
տից աւելի ճանապարհ գնալով, լուսարացին հասաւ
թշնամեոյն։ և զօրքին մի քիչ հանգստուի տալուց յետոյ,
նոցա ընթացքը ուղղեց զէպի Թագաւորացն Աղէքսանդ-
րըն, որ Զակամ գետի մօտ էր։ Վրաց ձիաւորներն
և ղազախները պատերազմ բացան, բայց մէր թնդա-
նօթների կրակը ստիպեց Թագաւորացնին փախչիլ շու-
տով։ Սորա զօրագունդն բարձրացան մերձակայ սա-
րերի վերայ, որոց գագաթիցը Թագաւորացնի մերձա-
ւոր մարդիկը աղաղակումէին և յորդորում Անեազ

Վատաթովի մօտ լինող Արացի Վնեազներին, որ դէս
պի իրանց հրացանութիւն չանեն և ճանաշեն իւրեանց
եղեալ թռագաւորին։ Բայց բոլոր Արացիքը միաբան
ձայնիւ այսպէս աղաղակեցին։ “մեք էլ ոչինչ չենք ու-
զում, բայց միայն մեր գլխները դոհել Ռուսաց
ԿԵՅՍԻ համար,,,: Երկու ժամից յետոյ թշնամոյ
զօրագունդն ցրիւ եկաւ, և որովհետեւ Ռուսաց զօրքն
նրանց հետապնդումէին, վասն որոյ սկսան խառն ՚ի
խուռն փախչիլ դէպի Գանձակ։ Արանից յետոյ Վնեազ
Վատաթովը յետ դառաւ իւր բանակը, որ գանիումէր
Վզսթափա գետի մօտ եղած Խանլախլար գիւղի մօտ,
ուրանօր նա Երմօլովի ուրիշ հրամանացը սպասելով՝
պարապվումէր զօրքին համար պաշար նախապատրաստե-
լով։ “ Շնորհակալ եմ ձեզնից, սիրելի Վնեազ Ատղե-
րիանոս Գրիգորեան, զրեց Գրեներալ Երմօլովը՝ Օգոստո-
սի Զ-ին, որ հալածեցիք այն անպիտաններին, և զրանից
եւ լաւ հետեւանքների եմ սպասում։ Լաւ Սարտարէ, միայն
թէ արդարեւ փախած լինի նա Սօյիւղուլաղեցը։
Բայց ձեր առաջին դեռ մէկ Սարտար էլկայ, որ պէտքէ
հալածէք Գանձակիցը։ Ինչպէս երեակայումնեմ, խանը
իւրթաղաւորութիւր երկարատեւ չէ կարող շարօւնակել, և
պէտքէ հալածել այդ խարեւային։ Սիրելի Վնեազ, թնդա-
նօթաձիգ օֆիցիեններին հրամայեցէք, որ իւրեանց գոր-
ծեաց պատրաստութիւններն լաւ պահպանեն և ու-
նայնաբար հրացանութիւն չանեն։ Գժռաւար է ձեզ
վառօդ հասցնել և կապարեայ գնտակ, վրացի զօրքին
համար կարող էք բաաալիօններիցը պատրօններ վեր
առնել, բայց չլինի թէ յանկարծ շատ շատ բաժանէք։
Օկիշ կացէք, որ Արացիքը Գանձակի մէջ կսղոպ-
տութեամբ չպարապուին, մանաւանդ որով-
հետեւ մերկ են բոլորովին և . . . շատ դարհուրելիք

Պահպանեցէք նրանց ձեռքիցը ըստ մեծի մասին այեւ
թին, վասն զի նոքա ոչ մէկին զանազանուի չ'են զնում։
Հեմ ուշացնիլ ուղարկել և մնացեալ զօրքն, որ նշանակուած
են ուրիշգործութեանց համար։ Այժմ շտապաւ պարկ
եմ պատրաստիլ տալիս, վասն զի թնդանօթաձիգ զօրքը պէտք
է երևելի գեր (րօմ) խաղայ։ Բաւական պատրօններ
կան, կ'շատացնեմ և թնդանօթաձիգ զօրաց պատրաս-
տութիւններն ։ Խմացրէք իմ բնկերներին, որ ևս նրանցից
այնպիսի քաջազործութիւններ եմ պահանջում, որ ար-
ժանի լինին Վովկասեան քաջ կօրսպոսին։ Բարեհաւ մնաս,
Սիրելի՛ Կնեալ, Աստուած յաջողութիւն պարզեէք եղաւ»

Բայց այս միջոցումը Անդր Վովկասեան կողմի դրուին
ժամէ ՚ի ժամ առաւել գժուարանումնը։ Ըուշի բերդը
սաստիկ պաշարուած էր Աբբաս Միրզի զօրքովն, ուրա-
նօր Գնդապետ Ռէյուտը հազիւ թէ կարողացաւ
մանել Եզերաց 42-րդ գնդի 6 բօտովն, որոյ զիսաւոր
բնակարանն (Արածն — եւարտիր) Զանախչի
գիւղումն էր։ Գանձակի բոլոր նահանգը Պարսկաց
ձեռքի տակն էր, Վրաստանի ու Տաճկաց գաւառների
միջում եղեալ ամէն հաղորդակցութիւնները ընդհա-
տեալ էին, մերձակայ Գերմանացւոց գաղթականու-
թիւններն աւերել էր թշնամին և բնակիչները գերեվա-
րիլ։ Բաց յայսմանէ Երիվանու Սարդարն՝ 5 բատա-
լիօն հետեւակ զօրքով և 8,000 ձիաւորներով, միայն
մի յարմար միջոցի էր սպասում, յորում կարողանայ
միանալ Աբբաս Միրզին հետ և իմիասին յարձակո-
ղական շարժողութիւներ սկսել։ «Աքա երկուսն էլ ամե-
նայն կերպիւ աշխատումէին բնակիչներին ապստամբե-
ցնելի Որուսաց, այնպէս որ՝ արհաւիրք ասես, պարզե-
ներ, զանազան խօստմունք, Փանատիկոսութիւն, ա-
մէն բան էլ ՚ի գործ դրուեցան այս մասին։ Եւ Արա-

յիքն անգամ յիշելով 1795 թուի գժբաղդ անցքը և
Պարսկաց Հայ Աղամատ-Խանի գազանաբա-
րոյութիւնը, որ այրեց Տփխիսը և 70,000 գերդաստան
գերի տարաւ, հաւատ էին ընծայում այն անտեղի համ-
բաւներին, որ հոչակել էին թշնամեաց գործակալները,
(աշետե) և մեկ քանիսն էլ երկիւղիցը իւրեանց կայքը
թաղել էին գետնի տակ:

Որովհետեւ գործերն այսպիսի զրուեմէջ լինելով, կորստա-
կան հետեւանքներ էինդ ուշակեռում և սարսափեցնում այն
կողմը՝ որոյ բնակիչներն ել թշնամեոյ հաւատակիցներ
էին, վասն որոյ անշուշտ հարկաւոր էր անել մի վստահ
յարձակումն և շուտով՝ ի գործ զնել մի քանի հնա-
րազիտուիներ: Գեներալ Խըմօլովը թշնամեոյ շարժո-
ղութեանց համար համբաւ ունենալով, Կնեազ Աղատա-
թովին այնպիսի զՃիռ տոււաւ, որ 10 օրուան պաշար
պատրաստելով, իւր գորագնդովն գնայ գէպի Գանձակ՝
յարձակողական գործողութիւնք անելոյ համար:

“Իմ կարգադրութեանց մէջ ամենեին մի բան չ'փո-
խես, զրումէ Գեներալ Խըմօլովը (Օգոստոսի 28-ին),
գնահ, Ասառուած քեզ հետ: Օգոստու կաց Գանձակումը,
և եթե յիրաւի Աբբաս-Ղաջարը գալոյ լինի, դու աշ-
խատի՞ր օրյառաջ իմանալ, և միշտ պատրաստ լերյառաջ
խաղալ: Անթիւ զօրքի բազմութեան դէմ պատերազմ
չանես: Անթիւ հարկաւոր է աներկբայելի յառաջադի-
մութիւն, և այլպիսին անտարակոյս կունենաս դու քո-
քոլոր զօրքովն, և ես տալիս եմ քեզ դեռ մի բատալիօն
և թնդանօթաձիգ զօրք, և էն ժամանակը ոչ թէ դուք
իսպասեք Ղաջարներին, այլև կարող եք նրանց պտըր-
տել:

“Ան-Քոյօթ ՚ի գործ չէր զնում իւրիադա (յետադար-

Ճռւթիւն զօրաց ճայնիւ (Ճմբկի) բառը, այլև անուանուածիր զայն զրուանք կամ զուարճութիւն (սրոցյակա): Եւ դու, ամենասիրելի՝ Անեազ, երբոք զօրութիւն չ'ունենաք, ձեմեցէք, ամենեին ամօթ չէ: Աիրելի՝ Անեազ, եթէ թշնամեց ձիաւոր զօրքի ցրուեն Տայուզումը ներգործութիւն է ունեցել, ևս յուսամ, որ եթէ Պարսիկներին և օտարական Խանին Գանձակիցը հալածեմք, մեղ համար էլ մեծ օգուտ կ'ըերէ: Ես շատ սպասում համբաւ ստանալ Բէյուտիցը (*), բայց չեմսահնում, վասն որոյ շատ երկիւղ եմ տանում, որ չլինի թէ՝ խաբուած լինի նա: Միթէ՞ այդքան մարդկերանցիցը ոչ չի գնում, որ մենք ոչինչ չենք իմանում: Իարեաւ մնաք, սիրելի՝ Անեազ, Սատուած յաջողութիւն պարզեէ ձեղ, որում ևս յուսամ,,:

Այն ամբողջ կողմը ազատելց և Պարսկաց կատաղութիւնը սանձահարելց համար, ուրիշ մի հնարք չկար, բացի միայն մի փստահ և յանկարծ յաղթութիւն առնել: Ուստի Անպատմբերի առաջինին Անեազ Մատութովը և երօնի և Արաց զնդիրիցը մէկ մէկ բատալիօն առնելով, Ազերաց Գ1-րդ զնդիցը երկու բօս և չորս էլ թեթև թնդանոթներ, Ազմթափա գեալիցը յառաջ խաղաց գէպի թշնամին, որ զնումեր Համապելու վեճակն:

Պարսիկները Ոտուսաց զօրքի դուրս գան իմացած լինելով, ամենայն տեսակ զգուշութիւններ ել ՚ի գործ գրին, որ Ոտուսաց շարժողութեան համար մանրամասնաբար տեղեկութիւններ ունենան, վասն որոյ և Անպատմբերի շին դէպի Օչակամու վիճակն առաջաւոր

(*) Բէյուտ քնդկապեաը գտնվումէր Շուշի բերդումը, զար պաշտուել ելն Պարսիկները:

զօրք ուղարկեցին, որ բաղկացած էին միայն ձիաւորաներից և գտնվումէին Ամամա-Օաման-Խանի և Օռւրար-Խանի առաջնորդութեան ներքոյ: Կոքա տեսնելով Ոտուսաց զօրքը, երկու մասն բաժանուեցան և սկսան շտապաւ յետ դառնալ՝ մէկ մասն Օռւրար Խանի հիտ գնաց դէպի Օտկամու սարերը, բայց միւս մասն մեծ Ճանապարհով գնաց դէպի Համքօրը: Բայց միւնոյն այս օրումը Անեալ Ամամաթովի զօրագունդն առանց հրացանութեան առան թշնամեոյ բանակավայրն և ղիշերը բանակեցան Օակամու վիճակին մօտ՝ մեծ Ճանապարհին վերաց: Վաղին՝ ամսի Յ-ին, զօրքը 17 վերսա Ճանապարհ գնալով տեսան ՚ի հեռուստ, որ Օռւրար-Խանը ազատուած մեր յարձակմունքիցը, վազումի դէպ ՚ի Համքօրը: Այն մեծ Ճանապարհոցը միքիչ հեռու, յառաջապահ զօրքն՝ որ բաղկացած էին 150 զաղախներից և ուղարկուած փլանկերներիցը, գտին թշնամեոյ ձիաւոր զօրքը, որ Ամամա-Օաման-Խանի առաջնորդութեան ներքոյ էին, և հրացանութիւն սկսան, որն՝ քանի Համքօրին մօտենումէին, այնքան էլ սաստկանումէր: Պազախները՝ որ օգնական ունէին և Պազախու բնակիչներիցը կազմած զօրքն, հալածեցին զթշնամին մինչև Համքօրն, որ թուով տասնապատիկ իրանցից առաւել էր: Այս պատերազմի մէջ Պարսկաց կողմցը սպանուեցան 60 մարդ, ՚ի թիւս որոց գտնվումէին և Խրզա-Խանը ու Միրզա-Խանը:

Համքօրին մօտենալով ՚ի հեռուստ տեսնվումէր մի գեղեցիկ և շատ բարձր սիւն, որ շատ հինուց էր և այս կողմումն եղեալ ամէն փոփոխութեանց մէջ միւսյն այդ էր մնացել անշարժ և կայուն՝ այս երեքն բաղմամարդ եղած քաղաքի աւելակիների մէջ: Այս սիւնի գաղաթը համեստմէին երկու պատուտակաձև էլ և էջնե-

ըով : Վաղաքիցը մի քիչ հեռու կար մի կործանուած քարէ կամուրջ երեք կամարի, որոց դիպչելով Համբարէ գետի փրփրալից ջրերը անցնումեն գոռալով : Այս սիւնի շինութեան վերայ զանազան մթին աւանագեալ տեղեկութիւններ կան. մէկ քանիսն ասումեն, որ Պոմպէոսի ժամանակիցն է, մի քանիսն էլ վերաբերումեն Մեծին Աղեքսանդրի դարերուն, որոց զբամներիցն էլ գտնվումեն Համբորի աւերակներումը :

Ամէն բանով էլ կարելի էր հաստատել, որ թշնամին իւր կրած մեասները տեսնելով Ոռուսաց ընդդիմութիւն չէր ցոյց տալ Համբորի մօտ, և կ մօտենաք դէպի Գանձակն, որպէս զի նորա պաշարումն էլ առաւել սաստկացնէ : Իսայց ընդ հակառակն՝ Պարսիկները Համբօր գետն անցնելով, նորա աջ կողմին կանգնել էին պատերազմական կարգաւ, և հետեւակ ու թնդանօթաձիգ զօրքը դասակարգել ամուր շինուած մարտկոցներում, իսկ զօրաց թեւերն էլ շրջապատել էին հեծելազօրքով, այնպէս որ՝ մի շատ ամուր ուղղաձիգ զօրքագունդ էին կազմել, որոյ երկարութիւնն երկու վերստ էր :

Պարսկաց զօրքն՝ որ դասաւորուած էին այս բանակավայրում ընդ զօրավարութեամբ Արբաս-Անրպին մէծ որդւոյ Մահմատ-Անրպին և Համին փեսայ՝ Ամիր-Խան-Արտարին, որ և նորա արմիային վերայ Գլխաւոր-Հրամանատար էր, բաղկացած էին 2,000 Շամբազներից, Համի ընտելր գվարդիայիցը՝ որ նոր էին եկել Ղարաբաղիցը, 8,000 ձիաւոր Փիւրդերից, Հասեվանցիներից և յայլոց, հանգերձ 4 թնդանօթներով և ուղտերի վերայ բեռնած փալկօնեթներով և Համառադիլու թռաթարները խռովող՝ բազմաթիւ խռով բերիցը : Այս զօրքի մէջ գտնվումէին նոյնպէս ուրիշ

երեկի խանք էլ, բնչղւս և Քիւրդեթի Շնվուղ
Ելի-Խանը: Անեաղ Մատաթովի՝ իւր զօրքը դաստու-
րելով երեք կարէի մէջ, յորս խառնուած էին և
թնդանօթաձիգ զօրքը, կէս վերստ առաջ դնաց և նկա-
տելով թշնամւոյ բանակավայրը, թնդանօթաձիգ զօրքին
հրամայեց յառաջ խաղալ, որ գուրս եկաւ նոյն ժա-
մայն կարէիցը: Անեաղը երկու բատտարէա շինեց, ամէն
մէկը չորս թնդանօթներով, յորոց մէկին հրամայեց
իւր զործողութիւնն ուղղել դէպի թշնամւոյ կեղրոնը,
բայց միւսին՝ գէպի ձախ թեւն, ուրանօր բազմաթիւ
ձիաւորք կային, Պաղակներին էլ դրաւ աջ թեւին վե-
րայ, բայց Արաց և Յօւաթեար ձիաւորներին էլ ձախ
թեւին փերայ:

Թաշնամին վճռած լինելով սաստիկ ընդդիմուի ցոյց
տալ, գուրս եկաւ Որուսաց զօրքի գէմ, որք սաստիկ
հրացանութիւն արին թնդանօթներով: Պարսկաց հե-
տեակները անսասան զիմազբաւ եղեն Որուսաց թնդա-
նօթաձիգների ուղղահայեաց արձակմանն, իսկ ձիաւոր-
ները սաստիկ հարուած ստանալով մեծ շփոթութեան
մէջ անկան: Անեաղ Մատաթովը տեսնելով նոցա շփո-
թութիւնը, ինքն առաջ ընկաւ և զօրքին էլ հրամայեց
իւր ետեկիցը դալ ու հետապնդիլ թշնամւոյն: Զօր-
քը ոգեւորուած իւրեանց առաջնորդի աներկիւղութեամբը
ուրած և համարձակ առաջ էին գնում, ամենեին
չմասածելով, որ թշնամւոյ զօրքն բազմաթիւ են, նորա
բանակավայրը ամուր է և նորա ամրոցները մեծ օգուտ-
ներ կարող են հասցնել նրան, հէնց միայն նոցա յաղ-
թուե փերայ օւնեցած վստահուին խրախուսումէր ամէն-
քին: Բատալիօնները՝ յիշելով Որուսաց սլաքների հրա-
շագործուին, վստահութեամբ յառաջ էին զնում, ա-
ռանց հրացանութիւն: և ուրած աղաղակելով, աղեղներ էին

քցումնոցա թնդանօթների և գնդակների դէմ, խակ ձիաւ-
որ զօրքն, սաստիկ յարձակմունք սկսան թշնամ-
ւոյ զօրաց թեւերին վերայ: Այս միջոցումը, երբ որ
Ոչուսաց զօրքի անհաւատալի քաջագործութիւնն վըր-
գովել էր արդէն Պարսիկներին, յանկարծ մեր կալօննա-
ների քամակին սաստիկ փոշիներ վերկացան: Կարաւանը
երկու շարքով կամաց կամաց մօտենումէր Անեաղ Մա-
տաթովի կարգադրութն, որ քաջ զիսէր, թէ այսպիսի
տեսքն որպիսի աղդու ներգործութ կունենայ Ասիական
թշնամւոյ երկչու երեւակայութեանն վերայ: «Օ արհու-
րանքը պատեց բոլոր Պարսիկներին: Մահատ Միրզան
առաջինն՝ի փախուստ դարձաւ, հետևակները զոհ տալով
դազախներին (որք հետապնդումէին նրանց նիզակներով)՝
և Արաց ու Ղազախու ձիաւորներին: Հահի զվարդիան՝
որ բաղկացած էր քաջ Շամբազներիցը, Խորտակուե-
ցաւ բոլորովին, ձիաւորները ու հետևակները ցանսւցիր
եղին ճանապարհի երկու կողմերութն էլ, յուսալով
այն տեղ փրկութիւն գտնել: բայց Ոչուսաց հեծելա-
զօրքը որոնումէին թշնամւոյն ամենայն տեղ և դաշին
չէին խնայում այնպէս որ՝ Ճանապարհը՝ 7 վերստ տա-
րածութեամբ, ծածկուած էր զիսէրին պուլ: Այսպիսի
փայլուն յաղթութեանը աւար դարձան թշնամւոյ եր-
կու բանակը՝ որ լիքն էին ուտելեղին պաշարներով,
մէկ թնդանօթ, 12 փակօննեթ հանդերձ ուղտերովն, մէկ
քանի արկլներ լի հրացանութեան գործիքներով և մօտ
2,000 հրացաններ, բաց յայսմանէ զանուեցաւ երկու
թնդանօթ, որ սաստիկ փախստեան ժամանակը թշ-
նամին յիտ էր թողել: Այս պատերազմի մէջ անկաւ
Պարսից զօրքի դլսաւոր հրամանատարն՝ այն է Հահին
փեսայ Ամիր-Խօան-Արդարը, որ վիրաւորուել էր շո-
յալների նիզակաւն, անկան և երկու դլսաւոր զօրք-

պետք՝ Խրդա-Խսանը և Միջրդա-Խսանը, սպանուել էին,
3,000-ից առաւել Շամբազներ և ձիաւորներ, իսկ դե-
րեվարեցան 100 Շամբազներ և Շահի թնդանօթաձիգ
դուքն:

Գերեվարելոց թիւը շատ կլներ, եթէ մեր ձիաւոր-
ները բաղմաթիւ լինէին, բայց նորա բարկացած էին
միայն 800 մարդից, մեր կողմիցն էլ վնասը շատ քիչ
եղել:

Այս հարուածը և Պարսկաց Գնդապետների քա-
ջագուններից մէկի, այն է Ամիր-Խսան-Վարդարի մահը.
Վահսատ-Միջրդն հանդերձ իւր զօրքովը այնպիսի
շփոթութեան մէջ քցեցին, որ նորա զօրքը ոչ թէ մի-
այն չէին համարձակվում կանդնել Գրանձակի մօտ և
մեզ ընդդիմանալ, այլև իւրեանց փախչելոյ ժամա-
նակը դիմում էլ չէին քաղաքին և մօտովն էին փախ-
չում:

Անեազ Վատաթովը հետապնդեց թշնամւոյն զազախ-
ներով և երկու թեթև թնդանօթներով, բայց սյս տեղ-
արագընթացութիւն էր հարկաւոր՝ թէ Պարսկաց եր-
կիւղը շատացնելոյ համար և թէ Քրիստոնեաները ա-
զատելոյ համար Կազար-Ալի-Խսանի անգութ խստու-
թիւններիցը, որին Արքաս-Միջրդան 1500 Վարազեցի
Վարվագներ տալով, թողել էր այն տեղ՝ Գրանձակը պա-
շարողութեան մէջ պահպանելոյ համար: Բայց որովհետեւ
իրկունք մօտացել էր, և զօրքն էլ առաւօտից սկսած
անդադար գործողութե կամ շարժողութ մէջ լինելով, նե-
զացած էին, (փասն զի այն օրն 50 վերստից առաւել
ճանապարհ էին գնացել), ուստի Անեազ Վատաթովը
պէտք է ժամանակ տար նրանց իւրեանց ուժն ստանա-
լոյ համար, և այսպէս հրամայեց հեծելազօրքին՝ որ
սպասեն հետեւակներին: Արք որ նորա մօտեցան, էն

Ժամանակը Մատաթովը ուրախ գուրս եկաւ նոցտառաջը
և բոլոր զօքքերը մանգալով , բարեեց զինուորներին
յաղթանակաւ . “ Դուք , ո՞վ Ոչուսաց զօրականք , ա-
սումեր Անեակը , իմացէք , որ ես ձեղ հետ լինելով
երբէք չեմ յաղթուիլ , մեք Պարսիկներին ոչ թէ միայն
այս տեղ , այլև ամէն տեղ կջարդենք , ” — “ Ու-
րախ ութեամբ կաշխատինք , Զնրդ Պայծառափայ-
լութիւն , , , պատասխանեցին զինուորները : Արանից
յետոյ Անեակը հրամայեց նրանց ամէն մէկին մէկ բա-
ժակ օղի տալ Ընթրիքից առաջ և մէկն ել դուրս դա-
լուց առաջ , և երկու ժամ հանգստանալուց յետոյ
կրկին պատրաստուիլ հեաապնդել թշնամւոյն : Աէս
գիշերին կալօննաներն սկսան յառաջ խաղալ . Անեազն
ել՝ մի գունդ զաղախներով , յորում կային 200 մարդ
երկու թեթև թնդանօթներով , գնաց գէպի Պանձակը ,
մասածերով՝ հասնել այն տեղ թշնամւոյն և յանկարծ
յարձակուիլ նորա վերայ : Բայց նա 10 վերստ գնալով
պատահեց քաղաքի բնակիչներին որք յայտնեցին , թէ
“ Եաղար - Ալի - Խանը՝ լսելով Պարսկաց Շամքորի մօտ
կրած հարուածը , այնպիսի շտապաւ է փախել , որ չէ
կարողացել փչացնելիւր ժողոված պաշարները որով և ՚ի
կատար ածել իւր բարբարոսութիւնն Քրիստոնեաների
վերայ : Թաշնամին թողել էր նոյնպէս յաղթողել կամքին
Պարսկաստանի մէջ գլխաւոր հօգեսրական անձինքնե-
րիցըմէկին , այն է Խմամշակելուէլինին , որ յայտնի ֆա-
նատիկոս լինելով , քաջալերու մէր Պարսկաց , հաւատա-
ցնելով նրանց , որ իւր աղօթքովը Ոչուսաց թնդանօթ-
ների գնդակները և կարտեչները չեն կարող նրանց վեաս
հասցնել : Մատաթովը շատ ափսոսաց , որ չկարողացաւ
համնիւ փախստականներին , և ել հարկաւոր չհամա-
քելով յառաջ խաղալը , սպասեց այն տեղ հետեւակ

դօրքին, որոց քիչ էլ հանգստութ տալուց յետոյ, սկսաւ յառաջ դնալ և Սեպտեմբերի 4-ին՝ արեգակը ծագելիս, զանձակի մօտ երևեցաւ։ Ճողովուրդը՝ իւրեանց առաջնորդ ունենալով վսեմաշուք զգեստաւորուած հոգեորաներին դուրս եկաւ նորա առաջը, որպէս իւր ազատողի առաջը՝ գոհութեան արտասունքներով և ուրախութեան աղաղակներով։ Վալօննաները կանգնեցան պատշաճաւոր կարգաւ և հոգեորականքը մաղթանք (մօլենեն) կատարեցին շնորհակալութեամբ, որ Ոտուաց աղջը գալով իրանց աղատեցին թշնամուցը. բնակիչները գօրքին համար բերին՝ հաց, աղ, պտուղներ և ուրախութիւնիցը փաթաթվումէին զօրափարի ծննները։ Ամէն բան՝ մինչեայս տրտումուխաւար եղած զանձակի մէջ, կենդանութ սառացան, պտղաւէտ այգիների մէջ հնչվումէին զանադան ցնծութեան երգեր, և կրկնվումանդադար. “Պօջաշիւ (քաջ) Մատաթով,, (կեցցէ՛ Մատաթով)։ (18):

Բերդի մէջ գտան մի շտեմարան, որոյ մէջ՝ ինչպէս վկայումեն, գտնվումէր մօտ 200 փութ (ոսկէ) վատօղ, մինչեւ 2,500 գնդակ և գրանատ և 11 արկղ կարտեչի գնդակներ, մօտ 500 զրանատի խողովակներ, մինչեւ 100 փութ արձիճ, և արկղ հրացանի պատրոններ, կես արկղ հրացանի գայլախաղ, (կրեմեն) կարտեչներից շինած զանազան արկղների բերանաներ, բաց յայսմանէ 1,500 չեավերա ցորեան և 100 չեավերտ գարի։

Վնեազ Մատաթովը զաներալ Արմօլովին յայտնելով Համբուլովին զայտնելով պատերազմի ամենայն հանդամանքները, սրանովէ վերջացնում իւր յայտարարութիւնը. “Ե այսպէս մեր Այսեր քաջ զօրականքը կատարեցին Զերդ Պերազանցութեան հրամանն՝ դնալքիւ

Պօրք ովկ և յաղթել այն թշնամւոյն, որ հինգ անգամ
առաւել էր թուղվուս, (19)

Ա ճաելով պաշտել այն թշնամւոյն, որ ուներ ան-
համեմատ բազմաթիւ զօրք, որ գանգումներ ամուր բա-
նակափայրում, որ հպարտացած էր մեկ քանի յառա-
ջադիմութիւններով և որ չ'եր կորցքել դեռ այն ուժ-
գնութիւնը, որոյ հետ առ հասրակ սկսվում յարձակո-
ղական պատերազմը, Վատաճովն այսպէս առելի միտուն-
ժողովից իւր ամեն փայլուն պատերազմական ընդունու-
կութիւնները: «Յա գդալով, որ իւրեանից էին կախուած
աղատել այն կողմն ձախորդուններից և ձանաչել տալ, թէ
Ուուսաց գեհքն ինչ յարգանք ունի, ամենին չ'ժողովց
անցնել այս բողէի հարկաւոր եղած օգուտներն: «Յա
ինչպէս որ հմուտ գնդապետ էր, ունենալով նորա յար-
մար ճարաւարութիւններն, այնպէս էլ իւր զօրակնդի
առաջին զինուորն ինքն էր: Ամեն տեղ պատերազմի
սաստիկ ժամանակը, այն յանդուզն յարձակման միջու-
ցին, կանքնած լինելով նա ֆրօնտի առաջին՝ հանգարտու-
թեամբ հրաման էր տալիս և իւր ձեռօքն էր ուղղում
թնդանօթը, սառնասիրա և միանգամայն սուր լինելով
նա՝ իւր զօրականաց սիրաց վառումը ջերմեռանդուր և
իւր նշանակեալ յաղթութեան՝ ձանապարհան: տա-
նում նրանց անսասան Երբ ող թշնամիքը հրացանու-
թիւն սկսան ըստ մեծի մասին գետի Կնեազ Վատա-
թովն, նորա շրջապատողներն ասումէին նրան, թէ՝ «Չեղ
տեսնելով, ուղղակի ձեղ են վերայ տալիս», բայց նա
պատասխանումներ նրանց անտարքել հոգւով, թէ՝ «լա-
է, որ նոքա ինձ տեսնումն, վասն զի էլ աւելի շուտ
կփախչին,,,: «Յա տեսնելով իւր զինուորներից մէկին, որ
զլուիր յերկեր էր խոնարհում այն ժամանակը, երբ որ
փայլեց նորա մօտ թշնամւոյ գնդակը, ասաց նրան Ֆալ-

բերով. “ինչի համար ես խոնարհվում (կռանում), չե՞ս տեսնում, որ 6 գրուանքանոց գնդակ է,,:

Ծամբորի յաղթութիւնը մեր ձեռքի տակ բերելով Գանձակը, ցածացրուց թշնամւոյ ամբարտաւանութիւնը, հանդարտեցրուց Արաստանի բնակչաց միտքը, որք դողալով տեսնումէին Պարսկաց դրօշակները՝ մի կողմից 160 վերստ հեռու Տիխիսից, և միւս կողմիցը 60 վերստ: Բայց այս յաղթութեան գլխաւոր հետեւանքն այս էր, որ սորա պատճառաւ աղատուցը և Ծուշին այն սաստիկ պաշարողութիւնիցը, որ Աբրամ-Սիրզան պաշարել էր իւր արմիայովն:

Աբրամ-Սիրզան է՛ օր պաշարելով Ծուշի բերդը, ի զուր աշխատումներ նուածել զայն՝ իւր մօտ գանուող Դաշդիացի և Խաւալացի ինժեներների ճարտարութեամբը, ի զուր էր կարել տալիս պատերիցը մէկ հրացան արձակելոյ հեռաւորութեամբ փոսեր, աշտարակների տակովը ականներ (լաղում) տանում, և բերդի պատերի միջովն խրամներ, ոչ մի բան էլ չկարողացաւ վրդովն Ուռւաց այն սակաւաթիւ զօրացը, որոց Տիգր սիրով միացած էայերը, ըստ մեծի մասին Անեազ Վատաթովի պատկանեալ դիւղի մարդիկը, ամէն տեղ էլ յետ էին դարձնում քաջուք թշնամեաց յարձակաւունքները որ թուով 30 անգամ առաւել էինքան այն բերդացաւահները, որ չունիին ոչ բաւական պաշար, ոչ էլ հրացան գործիքներ՝ վազ զի մնացել էր Անախչումը՝ Արգերաց 47-րդ գնդի բնակարանումն: Աբրամ-Սիրզան տեսնելով, որ բերդապահները յամառ ընդդիմութիւնն ցաց տալիս և ինքն էլ ուժով չի կարող նուածել, ջանք էր անում թուլացնել նրանց՝ զիշերները անդադար վրկովմունք և հրացանառթիւններ անելով, որ բերդի ընդարձակութիւննը նայելով (որ մի քանի վերստ տեղ

շրջապատած է քաղաքն) բերդապահներին շատ նեղութիւն էր հասցնում, վերջապէս զրանումէլ յաջողութիւն չունենալով, կամեցաւ նա զանազան խոստմունքներով խարել բերդումը դանուող այերին և համոզել, որ հեռանան ՚ի Որուսաց, բայց այս առաջարկութեան մէջ էլ նա միայն տեսաւ միարան և հաստատ ընդդիմութիւն: Եթէ այս սահմանակից բերդն Պարսից ձեռքն անցնէր, յայնժամ զրանից շատ վնասակար հետևանքներ կունենայինք, վասն զի այդ բերդը նուածելուց յետոյ, Աբբաս-Միրզան կարող էր առանց արգելքի յառաջ խաղալ դեպի Տփենիսը, և դեռ քաղաքը պաշտպանող զօրքը չ'միացած, ինքն կը հասնէր այն տեղ: Բայց Շուշեոյ միջի զործունէուին անսահման էր և միանգամայն անհաւատալի, ուրանօր գիշերները պատրաստումէին վառօդ և գնդակ ու ցերեկն ՚ի զործ զնում, կանայքն և ջահիլ աղջկունքն անգամ ցոյց էին տալիս իւրեանց քաջուիլը և եռանդը օգնելով պատնիշների վերայ դանուող մարդկանցը, նրանց պատրօններ հասցնելով: Մինչև այս էլ՝ շատ պատմութիւններ են լոււած Շուշեցւոց վսաահ անձնուրացութեանն համար: Իէյուտ գնդապիտը այսպիսի զարմանալի եղանակաւ պաշտպանելով այս բերդն, անմոռաց յիշատակ թողեց այն մարդկանց մոտաց մէջ, որք գիտեն գնահատել Որուսաց պատերազմական քաջադուծուիններն և զէնքերի զօրութիւնն:

Պատրաստ էին համարեմ թէ պատի տակով տարածականները և Աբբաս-Միրզան վճռել էր արդէն առնել Շուշի բերդը, բայց յանկարծ համբաւ ստանալով, որ իւր առաջուայ զօրքն Շամքորի մօտ սաստիկ հարուած են ստացել, Ճարահատեալ ստիպուեցաւ Ահպահեմբերի

Յամ դառնալ ուշիցը: (20) Գնումէր նա սաւատիկ արագութեամբ իւր զլսաւոր զօրքովն Կնեազ Արտաթովի դէմ, և շտապումէր իւր զօրքը ՚ի միասին ժողովիլ Օճարթար գետի մօտ, ուրանօր և միացան նորահետ Հային միւս փեսայ Ալահար Խանին Շամքորի մօտ յաղթուած զօրագունդն և կօրպուսն, հանդերձ 800 Շամբագներով և 6 թնդանօթներով:

Կնեազ Արտաթովը պատրաստ զոլով նրանց հանդիպել, այս շարժողութեան համար յայտնեց Գանելար Երմօլովին՝ առաջարկելով նրան, որ հարկաւոր է զօրքը շատացնել. և մի և նոյն ժամանակը հրամայեց Ազոթափա գետի մօտ մնացած Արաց ու Խելսօնեան Գրենադեր գնդերի երկու բատալիոններին՝ որ մնացել էին այն տեղ Տիֆլիսու հետ հաղորդակցութիւն անելոյ համար, և Կիժեղորդակիլյ Պրակուն գնդին, որ շուտով գան հասնեն իւր մօտ: Խակ ինքն այս միջոցումը, երբ որ պատրաստումէր իւր զօրքը մի զլսաւոր պատերազմի՝ որ ինչպէս ինքն կարծումէր, շատ հարկաւոր էր և անպատճառ պէտք է լինէր, հրաման ստացաւ Գրեներալ Աղիւտանտ Պասկեիչիցը, որն Արաստան էր և եկել զօրքին մօտ, որ եթէ Աբբաս Միրզան կամենայ մօտենալ դէպի իրանց, նա՝ մինչեւ նր հասնէը, Պանձակի մէջ կարողանայ զիմազգաւ լինել: Պասկեվիչը Սեպտեմբերի 11.ին հասաւ Պանձակը և բոլոր զօրաց վերայ էլ առաջնորդ դառաւ:

Այն զիշերը, յորում պէտք է լուսանար Սեպտեմբերի 13.-ն, Պարսկաց բանակիցը երկու Հայ եկան, յորոց մինը Աբբաս Աշրզի մօտ թարգման էր: Ոչուսաց լեղուի և մի ժամանակ ծառայութիւն էր արել Կնեազ Արտաթովի տանը: Առքա թախանձանօք իսլամիստին, որ թողեն իրանց՝ անձամբ գնալ նորա մօտ,

և գնալով յայտնեցին նրան, որ Պարսիկները խոր-
եանց բոլոր ծանրոցքը թողլով Տերեկ զետի միւս կողմին,
անց էն կացել արդեն Կիւրաքչայը և յառաջ էն գա-
լիս, այն մարովը, որ յանկարծ շրջապատեն մեր զօքքը:
Անեալ Մատաթովը սրա համար յայտնեց իսկոյն Գե-
ներալ-Եղիւտանտ-Պասկեվիչին, որն ինչ հարկաւոր էր,
չըրամայեց: Օօքքը պատերազմական կարգաւ յառաջ
խաղացին թշնամոյն միրայ, որ Ն վերստ քաղաքիցը հեռու
էր բանտկ տուած: Պարսկաց զօլքը բաղկացած էին
15,000 հետեւակներից, 20,000 ձիաւորներից և առանց
կարդի դասաւորեալ հետեւակներից՝ հանդերձ 26 թնդա-
նօթներով ընդ զիլսաւոր զօրավարութեամբ Արբաս- Արբա-
զին, որոյ անընդմիջահատ կառավարութեան ներքոյ
զանգումէին Մահմետ-Միրզան և Ալահար-Խանը:
Իսկ պատրաստապահ զօրքը կառավարումէր Արբաս-
Միրզի երկրորդ որդին:

Սար զօրքը բաղկացած էին միայն 6 բատալիօն հետեւակ-
ներից, մեկ գունդ հեծելազօրքից, երկու զունդ զաղախից՝
որ լիւ գունդ չէին և թամարաց ու Ալար ծիաւոր-
ներիցը՝ հանդերձ 24 թնդանօթներով: Եթե զօրավարը
փստահ կամ յանդուգն չին էլլինէր՝ տեսնելով, որ իւր
զօլքը համեմատելով թշնամոյն հետ շատ սակաւթիւ-
է, սնողածառ ստիպուած կփախչէր կռուից և կրա-
ւականանար միայն պաշարոցութեամբ: Բայց Գեներալ
Եղիւտանտ-Պասկեվիչը վճռեց պատերազմ տալ, միայն
թէ Անեալ Մատաթովի ներկայութեամբն, որ լաւ էր
ճանաչում ընդդիմակաց թշնամոյն: Փորձառութիւն-
ներից յայտնի է, որ Ասիացւոց ժողովրդի հետ պատե-
րազմելոյ ժամանակը, ոչ թէ զօրաց թիւը, այլ փստահ
և յանդուգն յարձակմանքն է տալիս զերադանցութիւն,
և որ թշնամոյն մի քայլ յառաջ թողին նշանակումէ

Նրան ուժ և քաջասրտուի տալ, ուրեմն և նորա զօրքի
բազմաթիւ լինելոյ ժամանակը՝ իւր անձը սաստիկ հալուա-
ծի և նթարիկել։ Որուաց զօրքը դասաւորուած էին այս
կարգաւը. Եզերաց 41-րդ գնդի բատալիօնը՝ երկու կա-
լօննա շինուած, մեր առաջին ուղղաձիգ զօրաց աջ թեն էր
կազմում, 2 զազախի զունդ էլ կպած էր նրան աջ
կողմիցը, իսկ նորա (առաջին ուղղաձիգ զօրաց) կենդրո-
նումը գտնվումէին Առփասեան Գրենագեր բրիկացի՝
ընդ համարաւ և = 1-ջին բօտի 12 թնդանոթները,
Երգանու հետեակ գնդի բատալիօնն էլ մեր հետեակի
ձախ թեն էր կազմում և թարթարի ու Արաց ձիա-
ւորները կպած էին նրանց աջ կողմիցը։ Իսկ երկրորդ
ուղղաձիգ զօրաց մէջ գտնվումէր Վարարիների 7-րդ գնդի
բատալիօնը՝ որ երկու կալօննա շինուած, հարիւր սա-
մին հեռու կանգնած էր Եզերաց 41-րդ գնդի բատա-
լիօնին հանդիպումը. աջ կողմումն զօրք էր կազմուած
Վարարիների 7-րդ գնդի երկու բօտերիցը և երկու
թնթե թնդանոթներից. Երգանու հետեակ բատալիօ-
նին դէմ ու դէմ գտնվումէր Արաստանի Գրենագեր
գնդի բատալիօնը՝ երկու կալօննա շինուած, որ իւր ձոխ
կողմիցն ունէր մի և նոյն գնդի երկու բօտիցը կազմած
կարէան՝ հանդերձ 4 թեթե թնդանոթներով։ Այս երկու
առաջաւոր զօրաց վերայ էլ հրամանատարը Անեազ
Մատաթովն էր։ Աիժեղորոդսկիյ Գրակուն գունդը՝
դիվիզիօն, դիվիզիօն կանգնած էին ուղղաձիգ զօրաց հան-
դէպ, իսկ այս գնդի քամակին գտնվումէին Խելսոնեան
Գրենագեր գնդի բօտիցը և թնդանոթաձիգ զօրքի 6
թնդանոթներիցը բազիացեալ պատրաստալահ զօրքն։
Անեազ Մատաթովը կամենալով պատերազմի օրը ամե-
նեին մի փոքր ժամանակ էլ ՚ի զուր չի անցկացնել,
առաւ իւր հետ 10 թնդանոթ և Արաց Գրենագեր

գնդի բատալիօնը ու սրբնթացաբար յառաջ խաղալով,
իւր բանակը զրաւ մի շահաւետ տեղում, և սկսեց
սաստիկ հրացանութիւն անել գեպի թշնամին։ Արան
ետեկցը մնացած զօրքն էլ հասան։ Պարսիկները՝ պատե-
լով Որուսաց սակաւաթիւ զօրքը մի սարսափիլ կիսա-
շրջանակով, մեծ արագուր յառաջ գնացին։ “Սոցա դի-
աւաւորուին այս էր, որ ամենայն մէկ սկզբում շուտ շուտ
յարձակմունք անելով մեղվի, շրջապատեն զմեղերկու
թեկցն էլ, և ապա՝ այսպէս ասել, Ճնշեն կամ ջարդեն
դմեղ իրանց բազմութեամբն։ Որուսաց զօրականքը, որ
առվոր էին պատերազմի և վտանգների, շատ հիացան
թշնամոյ բազմաթիւ լինելոյն վերայ, բայց նոցա
զարմացումն երկար չքաշեց։ “Սոցա զիսաւոր զօրավա-
րի անվրդովութիւնն քաջալերումէր նրանց և առաջա-
ւոր զօրաց առաջնորդի ուրախ միամտութիւնը նոցա
համար զրաւ էր յաղթողութեան։ Յարձակող
Պարսկաց կիսաշրջանակը խտանումէր նոցա արագ շար-
ժողութիւնիցը, իսկ Որուսաց զօրագունդն անշարժ ու
անսասան կանգնած էր։ Անեազ Մատաթովը առաջն
ուղղաձիգ զօրաց վերայ հրամանատար լինելով, լաւ
քննեց բոլոր զօրքը, կարգաւոր ձեռվ դասակարգեց հե-
տեակ զօրքերն, նոյնպէս և թնդանօթները, և ոչթէ
միայն թնդանօթ արձակելոյ տեղերն էր ցոյց տալիս,
ոյլ իւր ձեռքովն անգամ լցնումէր թնդանօթները,
“ո՞կ քաջք, ասումէր նա զինուորներին, մի՛ խնայէք
թափել ձեր արիւնը Թագաւորին համար,, , դապախ-
ներին մօտենալով՝ ասումէր։ “մի ժամ էլ սպասեցէք,
թշնամին անձնատուր կլինի,, , և հետեակին՝ որ նր հրա-
մբնաւը, թողլով իւրեանց պարկերը (րառու), անհամ-
բերութեամբ յառաջ էին մատչում, պահումէր ոյս խօս-
քերովը, “կանգնիր, թողլ Պարսիկը մօտենայ. նա էլ

շատ դժուարութ կ'հեռանայ, և Պարսիկները շատ մօտեցան
և Արքազների 18 բատալիօնները դէպի մեր առաջաւոր
ուղղաձիգ զօրքն գալով, սկսան անդադար հրացանու-
թիւն անել: Խոկ մեր զօրքը ոչ նրանց դէմ գործողու-
թիւն էին անում, և ոչ էլ իրանց տեղիցը շարժում,
այլ իւրեանց այն զօրավարին էին մտիկ տալիս, որ մեծ
յաղթուի արաւ Ըամբորի մօտ: Օձնամին հիացած արյ
անշարժուն վերայ սկսաւ կամաց, կամաց յառաջ խա-
ղալ, բայց երբ որ հարիւր քայլի հեռաւորութիւն էր
մնացել, Կնարակ Մատաթովը հրաման սաւնալով Գե-
ներալ-Ըգիւտանս Պասկեիչիցը՝ աղաղակից: “յառաջ,
ուրած, և այդ աղաղակը կրկներով բոլոր ուղղաձիգ
զօրքն յարձակուեցան իւրեանց սիրելի առաջնորդի ե-
աւեկիցը: Երգանու, Արաստանի և Եղիրաց 41-րդ
գնդի բատալիօնները՝ պաշտպանուած գոլով այս շար-
ժողութեան ժամանակը Դրակուն դիվիդիօնովն, յարձակ-
վումէին իրանց սլաքներովը և Պարսկաց բատալիօնների
միջովը ճանապարհ բանալով, ցան ու ցիր էին անում
ու խորտակում ինչ որ պատահումէր: Եւ այսպէս
Արքազները ցրուած փախչումէին դէս ու դէն, և նոցա
թնդանօթաձիգ զօրքն էլ՝ երկիւղ տաներով մեր հե-
տևակ զօրքի մօտենալուցը, փախան շաապաւ: “Արա-
նով մեք բոլորովին ոչնչացրինք թշնամոյ միութիւնը ու
զրումէ Գևներալ-Ըգիւտանդ Պասկեիչը իւր յայտա-
բարութեան մէջ առ Գևներալն Երմօլով:

Որովհետեւ այս ամէնը թշնամոյ զօրաց կենդրոնի
մէջ էր պատահէլ, ուստի թևերումն դասաւորեալ զօրքը՝
որ Ըլահեար-Խանի իշխանութեան ներքոյ էին և բաղկա-
ցած էին Շամբաղ-Խախտիարի բազմաթիւ հետեակնե-
րիցը, ու 12,000 ձիաւորներից, աշխատումէին շրջապատել.

մեր զօրաց թևերը և կատաղաբար ընդդիմութիւն
էին ցոյց տալիս։ Արանց այս գործողութիւնը արգելելոյ
համար, Գմբներալ-Ազիւտանդ Պասկեիչը պատրաս-
տապահ գօրքիցն մի բատալիօն ուղարկեց՝ որ Հերու-
նեան Գրիննադեր գնդիցն էր, օգնական տալով նրան
Դրակունի փիփիղիօնն հանդերձ և թնդանօթներով։
Այս բատալիօնը յառաջ խաղաղով ձախ թեւոյն, յետո
դարձցրուց թշնամւոյն, որ ուղումեր յարձակուիլ մեր
աջ թեւին վերայ և սկսաւ հետապնդել նրան իւր ձիա-
ւորներով։ Բայց միւս թեւին ընդդէմ եղած պատե-
րազմը շարունակ վումեր երկար, վասն զի թշնամին՝ մեր
ուղղաձիգ գօրքը պատեղով, հալածեց ղաղախներին հա-
մարեա թէ մինչե Գամնաձակը և իւր հետեակովը պա-
շարեց Հերոսնեան։ Գրիննադերի երկու րօնն և Դրա-
կուն գնդի դիփիղիօնն՝ երկու թնդանօթներով։ Գմբնե-
րալ-Ազիւտանդ Պասկեիչը տեսնելով, որ Պարսկաց զօր-
քի այս մասն անզգուշութեամբ հեռացել են իւրեանց
զլիսաւոր դօրութիւնիցը, Պարաբիների Շ. թդ գնդին՝
և րօտին՝ որ գեռ այս պատերազմի գործումն խառնուել
չէին, հրամայեց թշնամւոյ քամակն անցնել, որ Էլ
նոքա չկարողանան միանալ իւրեանց զլիսաւոր զօրու-
թեանն հետ։ Այս անջատեալ զօրաց հետապնդելը յանձ-
նուած էր Անեազ Անտաթովին, որ մի էսկազրօն
Դրակունով և և թնդանօթներով սաստիկ հալածելով
ցիր ու ցան արաւ թշնամւոյ ձիւտորներին, այնպէս որ
նոքա մէկ մասն խառն 'ի խուռն փախան դէպի Առւրն,
խէ միւսը դէպի այն սարերը, որ բաժանումն Ուու-
սաց Տէրութիւնները Պարսիկներիցը։ Յետոյ Անեազը
ըրջապատեց և բատալիօն հետեակների մնացորդը, որ
ձախ թեւ էին բաղկացնում և ամրացած էին սարի վե-
րայ, և ապա և թնդանօթ պատրաստելով հրամայեց

կարտեզներ արձակել խաչաձեւ Սարվագները թէ-
պէտ ամենայն կողմից շրջապատուած էին, բայց թագ-
չելով իւրեանց հողաբլուրներումը՝ երկար ժամանակ կա-
րողացան զիմանալ. և այն թարգմանը, որ ուղարկուած
էր նոցա մօտ՝ իմանալոյ համար, թէ նոքա ուղումնն
անձնատուր լինել, յետ դառաւ բացասութեամբ։ Բայց
Պնեադ Մատաթովն ինքն անձամբ անձին զնալով մօ-
տեցաւ նրանց և յայտնեց իւրեանց լեզուաւը, որ եթէ
կամենումնն անձնատուր լինել, պետք է հենց
այն բովէին ՚ի փայր ձգեն այն ըլլրիցը իւրեանց
զէնքը։ Պարսիկը էլ տեսնելով, որ զօրավարն ինքն է
առաջարկութիւն անում, և միանդամայն անօգուտ
և ՚ի զուր է իւրեանց ընդդիմութիւնն, 980 մարդ հան-
դերձ երկու դրոշակներով, երկու բատալիոնի հրա-
մանատարներով. և եօթն օֆիցերներով գէնընկեց եղեն։

Այս միջոցումը Գրեներաւ-Ծղիւտանդ Պասկեվիչը
Վրաց Գրենագեր զնդովն և երկու բատալիօն Շեր-
վանու զնդովն, 12 թնդանօթներով, Դրակուններով և
զազախներով հետապնդեց թշնամույն այն մեծ ճանա-
պարհովն մինչեւ 12 վերստ դէպի Քիւրաքչայն, ուրա-
նօր ձերբակալ առնելով Պարսկաց թողած հարուստ
բանակն, մնաց այն տեղ։ Իրիկունը շատ ուշ, Պնեադ
Մատաթովը առանց ձայնի յետ դառաւ իւր բերած
դերիներին հետ, բոլորովին ծածկուած փոշւոյ մէջ ։
Գրեներաւ Պասկեվիչը զրկեց նրան, շնորհակալութիւն
արաւ և լուսաբացին հրաման տուաւ հետեւիլ փախս-
տական թշնամույն։

Պնեադ Մատաթովը՝ առնելով իւրեան հետ երկու
բատալիոն, մի գունդ դադախ և Կ թնդանօթ, շտապաւ-
գնաց ձիւտորներով թշնամույն եռքիցը և հալածեց
նրան 23 վերստ տեղ։ Աբրամ-Միքան լսելով այս հետա-

պնդութիւնը, մինչեւ այն աստիճանն արագացրուց իւր
փախուստը, որ հետեւակին հրամայեց ձիւորներին հետ
՚ի միասին հեծնուլ ՚ի ձի, այնպէս որ՝ մէկ ձիի վերայ
երկու մարդ կաք, և Անպտեմբերի 15.-ին ինքն, իսկ 17.-ին
իւր խորտակեալարմիան անցան Եղասի (Արաքս) գետը,
և 18.-ին մի թշնամի էլ չ'մնաց Պարաբաղումը։ Ար-
բաս-Անբաղան սակաւաթիւ զօրքով փախաւ դէպի Դաւ-
րէժ, իսկ Պարսկաց անկանոն զօրքը փախչումէին դէպի
Ուուսաց սահմանամերձ նահանգները և ամէն տեղ եր-
կիւղ քցում, որովհետեւ փախստականներին ետեիցն
այնպիսի արագութեամբ էին գնում, որ նոքա ճանա-
սպարհին էին թողում իւրիանց ամէն ծանրոցքները,
բեռները և ջորիները։ Դժուար է երեակայել, թէ այս
բազմաթիւ արմիայի այսպիսի շուտ և փոտահութեամբ
փշացնելն, որպիսի զօրեղ ազդեցութիւն ունեցաւ Պարս-
կաց վերայ և մեր հպատակներին փերայ։ Ոչթէ միայն
Դանճակի և Վրաստանի մէջ, այլև Պարսկաստա-
նումն անդամ շարազրուեցան զանազան երգեր ՚ի պա-
տիւ յաղթողաց, որոց քաջագործութիւնները՝ անբա-
ժան զոլով Կնեազ Ամատաթովի անուան հետ, վառու-
մէին բանաստեղծների երեակայութիւնը։ Ուուսաց քաջ
զօրքը նրանց երեւումը իրրեւ մի սարսափելի և կործանիչ
ուրուական ոզի (Փատոմ), որն յանկարծ ամէն տեղ երեա-
լով հակառակորդին մեծ հարուած եր հասցնում։ (*)

X

Կնեազ Ամատաթովը Պարաբաղ մտնելով, իմացաւ՝
որ Անհմթի-Պուլի-Խանը Շահսեփանցւոց հետ ջանք
էր անում մեր բոլոր թափառական ազգերն սահմանի
միւս կողմն անցուցանել։ Այս բանն արգելելոյ համար,

(*) Անպտեմբերի 28.-ին Կնեազ Ամատաթովը իւր դերազանց քա-
ջութեան համար Պակերալ Լէյտենանտ դառաւաւ

նա նոյն ժամայն ամէն գիւղերի մէջ էլ հրատարակել
տուաւ, թէ Պարսիկք ինչպէս անհաւատարիմ՝ մարդիկ
են և ըստ ամենայնի յորդորումէր բնակիչներին մնալ
թագաւորական գիւղացիք և յետ դառնալ իւրեանց
ձմերային բնակութիւնները ու պարապուիլ տնտեսա-
կան կետնքով։ Արանով էլ չբաւականացած նա՝ օդ-
տակար համարեց ՚ի գերե հանել Պարսիկներիցը նորա-
մահուան համար հրատարակած սուտ համբաւները և կա-
մենալով ցոյց տալ, որ նա ըստ առաջնոյն նրանց վերայ-
դիսաւոր է, իւր զօրքիցը 50 դազախ տուաւ Խաչեն
գետիցը և շտապեց գնալ Շուշի բերդը։ Բերդիցը չորս
վերստ հեռի նորան առաջը դուրս եկաւ Գնդապետ
Ռէյուտը հանդերձ հոգեւորականօք և բոլոր ժողովրդա-
կանօքը։ Կնեազն վեր եկաւ ձիիցը և սիրտը բոլորովին
զթաշարժած դոլով, սկսաւ գնալ հետիոտաւ իսկ քա-
ղաքի պարիսպներիցը բարեումէին նորա գալուստը թրն-
դանօթների շառաչմամբը։ Երբ որ քաղաքը մտաւ,
այնպիսի յարգանօք ընդունուեցաւ նա՝ հանդերձ զինուո-
րական նուազարանների ուրախացուցիչ ձայներով, որ
միայն յաղթողաց կ'վայելէր։ Անայքը և երեխայքը
նորա առաջն էին դուրս գալիս շտապաւ և օրհնումէին
իրանց ազատողներին անսպիսի երկարատև պաշարման
ձախորդութիւններիցը և սովալլուկ մահիցը։ Առուտուել
էին ամէնքը Կնեազ Մատաթովի շուրջը, որ այդպիսի
ընդունելութեան վերայ այնքան զթաշարժել էր՝ մինչեւ
որ սկսաւ հայրենական ուրախութիւնիցն արտասուիլ, և
շնորհակալութիւն արաւ բնակիչներիցը նոցա առ իւր-
եանց ՏԵՐԵ ունեցած հաւատարմութեանը, անձնա-
տուր լինելոյն և քաջութեանը համար, զորս ցոյց
տուին նորա Շուշը բերդի պաշարողութեան ժա-
մանակը։

Ըուշւոյ պաշտպանողսւթիւնը ապացոյց եղեւ, որ այն
նպատակը՝ որով Տէրութիւնը Անեազ Մատաթո-
վին էր յանձնել Պարաբաղու նահանդի սահմանամերձ
կայքը, բոլորովին կատարուեցաւ: «Սա իւր կայքումը
ամենայն հնարքներ ՚ի գործ դրաւ, որ ընակիչների սիր-
ար կազէ Ուուսաց Տէրութեան հետ և կատարելապէս
յաջողութիւն ունեցաւ այդ գործումը: Պարսկաց ար-
շաւանքի ժամանակը, Պարաբաղու բոլոր նահանդնեա-
րումը միայն նորա գիւղացիքը մնացին Ուուսաց հա-
ւատարիմ: «Եոքա թողով իւրեանց տները և կայքը,
մտան բերդը և զէնք առնելով պաշտպանեցին զայն
Ուուսաց հետ: Եոքա 600 հատ արջառ ազատելով,
բերին մացրին բերդը և տուխն Ուուսաց գօրքին, որ
նրանցով կերակրվին: Այս տեղ նա հաստատ տեղեա-
կացաւ, որ իւրեան պատկանեալ Զանախչի գիւղը այ-
րուած է մինչև ՚ի հիմն, ընդ նմին և իւր տունը ու
Եղերաց 42-րդ գնդի բնակարանն: Պարսիկները փչա-
ցրել էին ամէն բան՝ ինչ որ չէ ին կարողացել իւրեանց
հետ տանել, բաց յայդմանէ այրել էին 6 մերձակայց
գիւղեր էլ, որք էլի Անեազին էին պատկանում և
ոչնչացրել էին բոլոր որթերն ու այզիները: Այնպէս
որ Ծուշի բերդիցը մէ քանի օր շարունակ երեսումէր
Հրդեչի կարմրափայլ բոցը: Անեազ Մատաթովը համ-
բերութեամբ տարաւ իւր համար այդպիսի մեծ կորուսան:

Այս միջոցումը Անեազ Մատաթովի համողելովը,
Թափառական ժողովուրդը յետ դառան իւրեանց բնաւ-
կութիւններն և մինչև անդամ զէնք էլ բարձրացրին
Անեթի-Պոլի-Խանին գէմ, որ աշխատումէր նրանց
սահմանիցը դուրս քաշել գէպի ինքն: Անեազ Մա-
տաթովը կամենալով բնակիչներին պահել փախչելուց,

գաւառական դատաստան բացաւ և արքունի տնտեսութիւնը առաջն կարգը քցից:

Եւ այսպէս պատերազմներից յետով, նաև զինուորանահանգական զլիսաւորի պաշտօն ունենալով, պարաւոր էր նոր աշխատութիւնը և հոգացողութիւնը անել: Պարաբազու նահանգը երկու ամիս շարունակ պաշարուած գոլով Արքաս-Միրզի 60 000 զօրքիցը, շատ նեղութիւն էր կրել, ուստի սովու առաջն առնելոյ համար, միւս աարին հարկաւոր էր ստիպել բնակիչներին երկիր զործել և վարուցան անել: Գլխաւոր դժուարութիւնները սորա մէջ էին կայանում, որ պէտք էր բաւականացնել ուտելեղինօք Գաներալ-Ազիւտանդ Պատկերիչի տասն ու մէկ հազարի զօրագունդն, որ բանակ էր տուել Ազերեկնի մօտ և Վնեազ Մատաթովն էլ՝ ինչպէս հրաման էր ստացել, պէտք էր՝ զինի հալածելոյ Արքաս-Միրզին մինչեւ Երասխը, եւր զօրքն էլ ուղարկել այն տեղ: Մատաթովը անխոնջ աշխատութիւր բաւականութիւն հասուցանել քարուքանդ արած Պարագիցը, և իմանալով՝ որ Հաքուայ ու Շիրխանու գաւառներիցը կարելի է առատ բաւականութիւն հասուցանել, Գաներալ-Ազիւտանդ Պատկերիչին ինզրեց, որ իւրեան սակաւաթիւ զօրք տայ, որ այս գաւառների մէջ թափուած Խաներին գուրս հաշածէ, որք իւրեանց կատաղի բնաւորութիւններովը սաստիկ սարսափի մէջ պահած ունէին այն տեղի բնակիչներին. բաց յայսմանէ այս Խաները անդադար ասպատակութիւններ էին ունում, նոյնպէս Կուր գետիցը սկսած Պարաբազու մերձակայ զիւղերին վերայ էլ: Գաներալ Պատկերիչը չ'համաձայնուեցաւ զօրք տալ. կարծելով, որ Պարսկաց Հահն ինքը՝ իւր զօրքը զումարած ունենալով Արդավելումը, կարող է մօտենալ դէպի Արքասը Բայց

այս զօրքը՝ Արքաս-Միլովի հարսւածն լսելով, վատիել
էին:

Թշնամւոյ միւս երեկոյի հեծելազօրքն՝ Մնղբու շրջա-
կայքումը գտնուելով, հրաման ունէր ասպատակութիւն-
ներ անել և յափշտակել Բուրկուրատ դետի եղբնե-
րումը գտնուող դիւղերը: Վնեազ Մատաթովը՝ իւր
հրամանատարութեան ներքոյ Ոտուսաց զօրք չ'ունենա-
լով, պարտաւոր էր միայն Պարաբազու հեծելազօր-
քովը պաշտպանել սահմանները: Մնակ՝ առանց Ոտուս
ձիաւորի, ման դալով նա այս այլազգիների միջումը,
կարողացաւ ազգել նրանց մէջ հաւատարմութիւն և
յօժարեցնել, որ իւր կամքը կատարեն. հաւաքեց նա
բնակիչներին և թշնամւոյն արշաւանքիցը ազատ պահ-
պանելոյ համար, ուզարկեց նրանց Ան-Օղանի այս
կողմը: Եւ այսպիս սահմաններումը պահապաններ զնե-
լով, զինավառեալ բնակիչներիցը ձիաւորներ կարգելով
և նոր հրամանատարութիւններ հռչակելով խաղաղա-
ցըուց նա Պարաբազը: Այս միջոցումը Շիրվանու
Խանը՝ բնակիչները կողոպտելով վախաւ Պարսկաստան,
տանելով իւր հետ մի քանի բնուներ, իսկ Շիրվանցիք
եկան Մատաթովին մօտ և յայտնեցին, որ պատրաստ
են կատարել նորան պահանջմունքները: Արանով կա-
րգացաւ Վնեազը այդ գաւառիցը պաշար բերել, որով
և թեթեացրուց Գհներալ-Եղիւտանդ Պասկելիչի զօ-
րաց ուտելելին բաւականութիւնն, որոց բանակն Օար-
դօրի ձմերան բնակութիւններումն էր Առւր գետի
մօտ, այս զօրքիցը տուին Վնեազ Մատաթովին վեց
ոտա Արացի գունդ, և թնդանօթ և Մօլչանովի զա-
զախի զունդն՝ (յորում 100 ձիաւոր զազախից աւել
չ'կային, վասն զի ամէն ձիանքը՝ Շուշոյ պաշա-
րողութեան ժամանակը քաղցածութիւնիցը կոտորուել

էին,) Արաքսի մօտովը գաւաւորեալ ուղղաձիգ զօրացը
սպաշտանելոյ համար թշնամույ ասպատակութիւն-
ներիցը:

❖❖❖ Դեկտեմբեր ամսի պռաջիններումը Կնեազ Մատա-
թովը կանչուեց Գրեներալ Երմօլովին մօտ, որ մի և նոյն
ժամանակը Սուխույ գաւառն էր եկել մի առանձին
խորհուրդ անելոյ համար, և այնտեղ մի ծածուկ հրաման
ստացաւ, որ սկսէ էկսպեդիցիա անել դէպի Արաքսի
միւս կողմն:

Հաստատ գիտելով, որ այն սասաիկ ձիւնը՝ որով
ծածկած էին Նախիջևանու Խանուն կողմի սարերը,
կ'պահպանէ զմեզ թշնամույ այնտեղ ցոյց տուած ամ
ընդդիմութիւններիցը, Կնեազ Մատաթովը ժողովեց իւր
զօրագունդը Ախ. Օղլանի մօտ և սկսաւ յառաջ խաղալ
դէպի Արաքսը: Նա Եփերաց 42-րդ գնդի մէկ բատալիոնին
հրամայեց Պարաբալու մարդկանց խմբին հետ, (որ
բարկացած էր Հայ հետեւակներից և թաթար ձիւոր-
ներից) իւրեանց բանակը զնել այս գետի մօտ Խուզա-
պերինի կամրջիցը բարձր և ջանք անել իւրեանց կողմն
անցուցանել մի քանի թափառականներ, ՚ի թիւս որոց
գտնվումէին և մեր գիւղերիցը տարած մարդիկներ,
կամ թէ ջանք անել հեռու հալածել նրանց այն եղբա-
ներիցը, որ էլ աւագակութիւն չլինի:

Դեկտեմբերի 28-ին Կնեազ Մատաթովը միանալով
Շավադիցը եկած Ախշենկօ Գնդապետին հետ, անցկա-
ցաւ Երասխգետը այն ցուրտ ժամանակը մինչեւ գօտին
ջրի մէջ լինելով, և իւր զօրքի ընթացքը ուղղեց դէպի
Ամքուր գետը՝ Դէլաւուրտի կիրճովն, ուրանօր թափա-

ռական կենումէին Հահսկանցիք, Վջաղիբցիք և ուրիշ աղքեր, որ մեր սահմաններումը ասպատակութիւններ և աւագակութիւն շատ էին անում։ Առքա յանկարծ տեսնելով մեր զօրքը, սասափի շփոթուե մէջ անկան Պարաբաղցիք և Ծիրվանցիք իւրեանց օդնական ունենալով ձայերին, ուղղակի յարձակուեցան նեանց վերայ և խլեցին նրանցից մինչեւ 20,000 ոչխար, բազմութիւնուղտեր, ձիաներ, անասուններ և ուրիշ կոյք։ Արանից յետոյ, 500 գերդասոուն՝ որ անց կին կացելայս տեղ Պարաբաղու և Ծիրվանու Խանութիւններիցը զանազան հանդամանքների փոփոխութեան պատճառաւ, կողոպտուած գոլով ու բոլորպին զրկուած իւրեանց առաջուան տեղը յետ գառնալոյ միջոցներիցը փախան դէպի Որուսայ գորագունդն։

Անեազ Վատաթովը Հահսկանցւոյ ընդգեմ պատերազմելոյ համար, Վեշինու նահանգը յարմար տեսնելով, օդտակար համարեց սյս համբաւը հռչակել. որ նա մատպիր է գնալ դէպի թապիշու Խանութիւնը։ Այն տեղ գննուած Հահսկանցիք խարուելով այս համբաւիցը չուզեցին, որ Ոռուսք յարձակուեին իւրեանց թափառականներին վերայ, ուստի և ակամայ կատարեցին Ոռուսաց Գևեներալի պահանջողութիւնները։ Վեր զօրքը շտապաւ գնում էին դէպի պատերազմելոյ համար ընարեալ տեղը Եւ կամենալով թշնամոյն անդգուշութեան պատճառաւն կատարելապէս շահուիլ, Անեազ Վատաթավը Պարաբաղու և Ծիրվանու այլուծիովն և ձայ հետեւակներովն սրբնացարար յարձակուեց թշնամոյն վերայ և փախցրուց նրան։ Այս տեղ Խլեցին թշնամուցը 2,000 ուզտ, 10,000 արշառ և 60,000 ոչխար։ Արանից յետոյ Անեազ Վատաթովը գնաց առի քաղաքը, ուրանօր ու-

բա առաջը զուրս գալով Անշկինու նահանդի զիսառ
ևորը իւր եղբօր չետ սկսեցին խնդրել նրան, որ ինսպիր
և պաշտպանէ իրանց: Եւ այսպէս մեր զինուց յաջո-
ղութիւնն նրանց մոլորութեան մէջ քցեց, և նոքա
վուազումէին ցոյց տալ իւրեանց հնագանզութիւնը ամ-
բողջ նահանդին չետ ՚ի միասին երդուելով, որ հաւատ
տարիմ հպատակ կմնան ԿԵՑՍԵՒԾՆ ՈԽՈՒԱԾ, և
Վնեալ Վատամովն թէպէտ խսկապէս հաւատ չէր ըն-
ծայումնց երդման հաւատարմութեանն, այսու ամե-
նայնիւ ընդունեց նա այն երդումն շատ ուրախութեամբ,
յուսալով՝ որ օդտակար ներդործութիւն կունենայ
զրացի ժողովրդներին վերայ: Վնեազն ինչքան իւր գո-
րազնդին արջառ էր հարկաւոր, այն վեր առնելով,
մնացեալ աւարն էլ՝ զորս խլել էին այս զիսուածումը,
տուաւ Պարաբաղցւոց և Շիրվանցւոց, պատճառն որ
սոքա առաւել էին զործակից եղել այս յառաջապիմու-
թեան ժամանակը և ոչինչ չեին ստացել թագաւորա-
կոն զանձարանիցը:

Ոխուաց այս անակնունելի յարձակման համբաւն և
Շահսիվանցւոց զեմ ուննեցած յառաջաղիմութիւնների
համբաւը մինչեւ Հաղարն հանելով, սարսափ քցեց
այն ամեն տարածութեանց մէջ՝ որք ընկած էին մեր
զօրքի մէջ տեղիցը սկսած մինչեւ Հաղարն, այնպէս որ
այնտեղ դանուած Լոմիր - Զադա - Օհյուփուլուկ
Միրդան իւր կանայքը զուրս բերեց շուառվ Դաւրիժուց:
Լոռի քաղաքումը պատգամաւորը եկան Վնեալ Վա-
տամովն մօտ Շաղազու ժողովրդեան զլուաւորներիցը
յայսնելով, որ սպատրաստ են կատարել նորա կոմքը.
և իմացրին Վնեազն, որ Երբաս Միրդի ժողովիալ
կանոնաւոր զօրքը ցըսւել են աների մէջ:

Վն եալ Վատամովը կամենալով՝ Պարաբաղցւոց

և Հերփանցւոց թափառականներին ժամանակ տալ, որ ՚ի
մբասին հաւաքուին ույետ դառնան մեր սահմանները,
Դոռումը թողեց մի բատալիօն հետեւակ, 600 զազակ՝
հանդերձ մի բօտ Դանեան զազակ թնդանօթաձիգ
զօրքովը. իսկ ինքն Յունվարի 5-ին իւր զօրագնդովն
անց կացաւ Կասիր-Աբրատ գիւղը, որ դանվում է ա-
գարու ճանապարհին վերայ: Կասիր-Աբրատումը Պա-
րագաղու Խանութեան զլխաւորները եկան Կնեազին
մօտ, յորմէ և սիրով ընդունուցան:

Յունվարի 6.ին՝ Տն Այ մկրտութեան հանդիսաւոր
օրն, Պարսկաց տէրութիւններումը կատարուեցաւ մեր
եկեղեցւոյ սուրբ արարողութիւնն հանդերձ թնդանօթ-
ների շառաչման ձայներովն և Փրկչի խաչն էլ ընկղմեցաւ
ագարու դետումը:

Մի և նոյն օրը Կնեազ Անտաթովը Խօրօմութ գիւ-
ղը հասնելով, այն աեղ թողեց հետեւակ ու թնդանօ-
թաձիգ զօրքը, իսկ ինքն այրուձիովն հասաւ մինչեւ
Ահմատ-Բէկի գիւղը, ուրանօր նորա առաջը զուրս
եկաւ Պարագաղի մէջ մեծ յարգանք ունեցող՝ Պա-
րախանլուի-Խանի որդին՝ Գլխաւորներին հետ ՚ի միա-
սին: Սա յայտնեց Կնեազին, որ ագարումը և նորա
մերձակայ գիւղերումը Աբրաս-Միրզի հրամանովը այ-
րուած են պաշարների և ձիոց համար պատրաստեալ
խոտերի համբարները և փշացրած են բամբակի ու ու-
րիշ բոյսերի բոլոր պաշարները. և ինքն էլ պատրաս-
տուել է արդէն Պաւրիմից դուրս հանել իւր պալատը
այն ժամանակը, երբ որ Կնեազ Անտաթովը Մէշկի-
նեցը գնայ գէպի նորա մայրաքաղաքը:

Ամսի 7-ին Հնայելով, որ ճանապարհները համարեալ
թէ անանցանելի են, Կնեազ Անտաթովը շարունակեց
իւր ընթացքը և բանակը ագարից 17 վերստ հեռու-
դնելով՝ 200 զազակ ուղարկեց, որ գնան տեսնեն այդ

քաղաքը՝ Այս տեղ նորա մօտ նկան աղարու քնար կիչներիցը ընտրեալ պատգամաւորքը խնդրելով, որ Խնայէ իւրեանց, Վնեալն էլ խոստացաւ կատարել նոցա խնդիրքը յանուն ՏԵՍՈՒՆ ԿԵՅՍԻԲ: Ոտուսաց հպատակները, որ ցրուած էին Պարաղաղու Խանութեան մէջ 'ի միասին հաւաքուեցան, և Վնեաղը 1827 թուումն Յունվարի 9 ին յետ գառաւ գէսլի Ոտուսաստանի սահմանները, ու սկսաւ իւր ճանապարհորդութիւնը անել փոքր հեռաւորումներով այն մոքովը՝ որ զօրքին չնեղացնէ. Մուղանու անապատովը եկաւ դէպի Արաքսը և կանգ առաւ Արդիբուլաղի մօտ, որտեղից և Գնդապետին Միշչենկօն իւր զօրքովը գնաց Ճաւադի մօտ եղած առաջուայ բանակը: Այս էկսպեդիցիան՝ ինչպէս տեսնումնէք, եղեւ տարուայ սաստիկ ցուրտ ժամանակը՝ այն էլ Պարսկաստանի սահմաններումը, և միայն Վնեալ Մատաթովի զօրքը կառավարելոյ համար ունեցած հասկացողութիւնն և նոցա վերայ անխոնջ հոդատարութիւնն պահպանեց նրանց մեծամեծ կորսաներից: Ամէն բանի մէջ բաւականութիւն ունենալով, զօրքը սիրով մերաժումէին այն խոչընդոտ արդելքները, որ պատահումէին ճանապարհներին և յաղթող էին գոնվում հէնց միայն իւրեանց երեալովն: Այս տեղ Ոտուսաց զօրքիցը միայն փշացան չորս հասարակ զինուոր և երկու զազախ: Մանաւանդ դժուար էր Սաղբատ սարի անցքը, ընդ որ համարէն թէ հիացած մնացին բոլոր քնակիշները, վասն զի հէնց մօտ մի արշին բարձրութեամբ ձիւն էր կուխած և սաստիկ հողմախառն ցրտութիւնն հասնումը մինչև 19 աստիճան (գրացէ):

Այս էկսպեդիցիան հետեւեալ օգուտներն հասցրուց Պարսկաց տէրութեան ու նոցա զբացի ուխտադրուժ ժողովրդեան մէջ սաստիկ աչ անկաւ, Պարսիկներիցը

միւս տարուայ կամպանիուն համար պատրաստեալ առ
հազին պաշարներն և ձիոց խոտահամբարն բոլորովին
փչացրուեցան, Որուաց հպատակներն ազատուեցան և
կարող էին յետ գառնալ Որուաստանի սահմաններն,
Հահսեփանցւոց՝ որ (սահմանամերձ դիսաւոր յափշտա-
կիներնեն,) ձեռքիցը Խլսծ 2,000 ուղարկը 'ի գործ զրուե-
ցան պաշար բերելոյ համար 1827 թուականին կամպա-
նիումն (*). և վերջապէս մանրամասն տեղեկութիւններ
հաւաքուեցան հչթէ միտին այս կողմին համար, այլ և
ընդհանրապէս Պարսկաստանի ներքին զրութեան հա-
մար էլ, զորս հաղորդեց Անեազ Սատաթովը Գրաֆ
Դիբիչին, որ այն ժամանակը գտնվումէր Տփխիսումը:

1827 թուին Սարտի 17-ին, Գեներալ Երմօլովը Ար-
նեազ Սատաթովին հրամանատար կարգեց մի առանձին
դօրագնդի վերայ, որով պարտ էր իւր զործողութիւնը
սկսել ձախ թեւումն առաջակայ գարնան պատերազմագնա-
ցութեանն մէջ: Այս զօրագունդն բաղկացած էր 4
բատալիոններից, 24 թնդանօթներից, 3 զաղախի զնդից
և թաթար ձիաւորներից՝ և այնպէս էր կարգադրուծ,
որ այս ամեն զօրքն Ապրիլի 5-ին հաւաքուին Ալ-Օլ-
լանի շրջակայըքը: Անեազ Սատաթովը նշանակեալ ժա-
մանակին իսկութեամբ 'ի կատար ածելով իւրանից կա-
խեալ ամեն պատրաստութիւնները, Պարսկաց այս կամ-
պանիումն որ գարնան ժամանակն էր, առաջինն ինքն
սկսաւ յարձակողական գործողութիւններ, այնպէս որ՝

(*) Եւր որ Որուաց զօրագունդն էկան Պախիչեան, էն ժամա-
նակը բոլոր բաւականութիւնն Պարաբազեցն էին բերուց
ուղարկով.

զեռ ևս իւր մօտ չեին հասել ակնկալեալ զօրքն, այն
է՝ Եղերաց 41.րդ գունդն և կարաւաններն։ Խոկ Ապ-
րիկ 16.-ին, Վնեալ Մատաթովիը յառաջ խաղաց Շե-
րեբնիցը և 18.-ին հասաւ Խուղապերինի կամուրջը,
ուրանօր՝ չնայելով Պարսկաց հրացանութեանը, շինե-
ցին մի կամրջի ամրոց։ Հենց առաջին օրը Արաքսի
ձախ եղրն յստակուեց թշնամուցը, բայց միւս օրն աջ
կողմն էլ յստակուեց։ Պարսկաց 5 հազարի զօրագունդը
հեռացան։ այս միջոցումը գետի ջրերը շատանալով
ճանապարհորդութիւնը խիստ դժուարացրել էին, որով-
հետեւ Խուղապերինի կամուրջն էլ կործանել էին Պար-
սիկները, այնպէս որ՝ միայն կիսաւեր կամարներն էին
մնացել, այն էլ՝ միայն գետի եղրների մօտ և մի հնարք
չկար կամուրջ շինելոյ համար։ Բայց չնայելով սրան,
մեր զօրքը ճանապարհի ընթացքը հեշտացրին իւրեանց
անիննջ աշխատութեամբը և արդէն պատրաստ էին
յառաջ խաղալ, միայն թէ այս տեղ վերջացան Վնեալ
Մատաթովի պատերազմական զործողութիւննը Պարս-
կաց հետ։ Վասն զի Ապրիլի 22.-ին նա հրաման ըս-
տացաւ Կօրպուսի Հրամանատար Պաներալ Ադիւտանդ
Պասկեվիչիցը, որ իւր զօրագունդը յանձնէ Պաներալ
Մայիսոր Պաներատովին։

Վնեալ Մատաթովի իւր զօրագնդի հետ բաժանուին
շատ սրտաշարժ էր և միանգամայն հաստատումէր, թէ՝
օֆիցերները և զինուորները որպիսի՝ սիրով էին կապ-
ուած նորա հետ։ Աս էլ իւր կայքումը չմնալով, վերջին
անգամը նայելու իւր հայրենիքի վր տալով հրաժարական
ողջոյի, և ապա մատաւ ՚ի Տփխիս, ուրանօր հինդ ամիս
անգործ մնալուց յետոյ, որ իւր համար շատ ծանր էր,
վերջապէս հրաման ստացաւ զնալ գեպի Պետերբուրգ։

Դ.

Տաճկաստանի պատերազմը 1828 թուումն. — Դրանայ գետն աճ ցնելն. — Կիրսով բերդի տռումն. — Կողմանական զօրագնդի հրամանատար լինելն և Կիրսովիցը մինչև Բաղարջիղա գնալն ու յառաջապահ գործողութիւնն Պալկունի մօտ: Պրովոդու զօրաց հրամանատար լինելն և Տաճկայ փախուստն Օդոսոսոի 28-ին. — Պատերազմական գործողութեանց փախանն 1828 թուականին. — Կնեալ Մատաթովի Գլխաւոր նշանակուին Գրուսարի 3-րդ դիմիզիային վերայ. — Կափեզիայի բաղկանալն. — Դրանայ անցնելն և Պայուրկումը զօրագնդի վերայ հրամանատար լինելն. — Պատերազմաչու դէպի Պօղուջա. — Երբա միանալը Գլխաւոր արմիային հետ. — Պալեվչու պատերազմն, Պայիսի 3-ին հեծելազօրքի պատերազմական դործողութիւնն և ամրոցների առումն. — Բաշիդ-Փաշայի հետ տեսութիւնն. — Ըստի մօտ եղած հետազօտութիւններն. — Կնեալ Մատաթովի մահն. — Թաղումն:

1828 թուումն Սպրիլ 14-ին ԲԵՐՁՐԱԳՈՅՆ
Մանիֆեստով յայտնուած եր Օտառօմանու Տէրութեան հետ պատերազմը: Կնեալ Մատաթովը խնդրեց Սորին ԲԵՐՁՐՈՒԹԻՒՆԻՑ հաղորդակից լենել այն արմիայի գործողութեանց հետ, որ գտնվումէր Գեներալ-Գելդմարշալ Գրաֆ Ահեցենշտեյնին զօրավարութեան ներքոյ, և հաւանուի ստանալով Պայիսի 16-ին մտաւ նա նորա գլխաւոր բնակարանը, որ Բրաիլով բերդի մօտ եր և իւր կամքին համաձայն, նա նշանակուեցաւ Գեներալ Ռուբեզիչ հետեւակ զօրաց 3-րդ Պօրպուսումն: Այս կօրպուսն, որ այն ժամանակը Ոտուսատանիցը գալիս էր-ուղղակի Մատունովից վր, պէտք է

տուաջինն անցկենար կունայ գետն և միայն մի կարճ
միջոց մնալ Բօլկրազումը (Խսմայիլի մօտ), որ նորին
ԲԵՐՁՐՈՒԹԻՒՆՆ վերահայեցողուի (սոտք) անէ։
Մայիսի 27-ին լուսաբացին սկսուեցաւ Աատունովի մօտովն
Կունայ գետի երեկի անցքն, ընդ անձնական առաջ
նորդուք ՏԵՇՈՒ ԿԵՑՈՒՅԻՇ Անեալ Աատաթովքը
նոր մտած լինելով այս կօրպուսին մէջ, գեռ հաստատ
հրաման չուներ, բայց հէնց ինքն անձամբ անձին
հաղորդակից էր լինում թէ՛ այս անցքի կարգադրու-
թեանց մէջ, թէ՛ նոյն խակ պատերազմումը, կատարելով
ԿԵՑՈՒՅԻՇ հրամանները, բայց յայսմանէ երկու ան-
գամ էլ Որուսաց զօրքի հիտ ՚ի միասին նաւակ (աօձա)
նստած անց կացաւ նա Տաճկաստանի եզրը, թշնամոյ բո-
լոր բատարէանների հրացանուն տակը լինելով ։ Այդ անց-
քից ու Տաճկաստանի եզրը նուածելից յիտոյ, Անեալ
Աատաթովն ինքն Այսրիցը հէնց հրաման ստանալով
գտնուեցաւ Խսաղզու բերդի պաշարողութիւնումը,
յորում Անեալի Տաճկաց լեզուազիտութիւնն և նոցա
բնաւորութեանց վերայ ունեցած տեղեւութիւնն մեծ
օգուտ հասցրին այստեղ, այնպէս որ՝ բերդը՝ էլ չ'սպասե-
լով պաշարման, անձնատուք եղեւ միայն Անեալի ունե-
ցած Տաճկախան պէտքաբոսութեանը ։ Անեալ Աա-
տաթովքը Յունիսի 4-ին իւրեան յանձնեալ զօրագնդովը,
(որ բաղկացած էր Եզերաց 17 և 18-րդ գնդերի
բատալիսնիցը՝ հանդերձ թնդանօթաձիդ զօրքի № 3
թեթև բատովն, 3 էսկազրօներից, Բուղի 2 գնդերիցը և
Եմելեանովի ղազախի գնդիցը) պաշարեց Աիրսով բերդը։
Տաճիկները իւրեանց առաջին տեսնելով մօտ երկու
հազար մարդ, որ բաւական տարածութիւն էին բռնած,
շատ անդամ յարձակմունք էին անում և թէպէտ

միշտ էլ մեծ կորուստ ստանալով յետ էին փախչում, բայց բնաւ չէին ուզում անձնատուր լինել:

Անեազը ինքն Ասիացւոց լաւ Ճանաչելով, սկսեց խորամանկութիւն ՚ի գործ գնել, որ հարկաւոր է նոցա հետ պատերազմելիս: Ավամնալով ցոյց տալ, որ իրր թէ իւր մօտ նոր զօրք է եկել օգնութեան համար, նա՛ տեղի զիրքին նայելով, որն օդուտ էր իւր համար, հրամայեց զօրագնդին՝ որ շուտ շուտ յարտաքուստ փոխին իւրեանց ձեր և վարութին իրրեւ բերդապահ իսկ ինքը նոցա հետ խօսակցութիւն անելով՝ թարգմանի պաշտօն էր կատարում: Անեազը չխարուեց իւր այս ձեռնարկութեան մէջ, և Յօւնիսի 11-ին Ալիբուօվ բերդն անձնատուր եղեւ դաշնադրութեամբ: Բներդապահ զօրքը, որ բաղկացած էին 1,900 մարդ կանոնաւոր զօրքից, ազատութիւն ստացան զինավառեալ գնալ Ալիղեստրիան: Բնակիչներն էլ չէին ուզում շահուիլ այդ հրամանովը և դաշնադրուե ժամանակը յայտնեցին, որ՝ մտադիր չեն գնալ բերդապահ չներին հետ, վասն զի հարկաւոր չեն համարում պատերազմել: Այս ժամանակիցն արդէն Տաճկաստանի բնակիչների մէջ սկսաւ հաւատարմութիւն մտնել դէպի Ուուսաց զօրքն, որոյ սկզբնապատճառն եղեւ Անեազ Առատաթովն ինչպէս այս տեղ այնպէս էլ սրանից առաջ Անդր-Առվկասեան կողմումն: Այս յաղթուեն աւար եղեն: 14 զրօշի, 92 թնդանօթ, 6 մօրտիր, 50,000 գնդակ և 3,500 փութ վառօդ Բաց յայսմանէ բերդումը զանուեցաւ և մեծ քանակութեամբ պաշար: (29)

Աւելորդ չենք համարում բովանդակել այս տեղ Անեազ Առատաթովի նամակիցը մի հատուած. “Ես նամակ եմ զրել քեզ Պառնայի մօտիցը այն տեղով անցնելոյ ժամանակը և նրանից յետոյ մի յարմար մի-

ջոց չեմ ունեցել զրագրութեան, որովհետեւ Պունայն
անցնելից յետոյ, ես հրաման ստացայ Խսագչու բերդը
սպաշարիլ: Ես կատարեցի իմ յանձնարարութիւնս յա-
ջողութեամբ, և բերդն անձնատուր եղեւ: Ինձ թաղա-
ւորն ինքն էր անձամբ անձին դործի զնում, շատ
բաւական եղեւ «Կա ինձանից, և ապա յառաջապահ
տալով ուղարկեցին ինձ այս տեղ: Ես նուածեցի այս
բերդն և ահա ուղարկումեմ բանալիքն ու զրօշակները:
Առել եմ 90 թնդանօթ և ուրիշ շատ զործիքներ:
Յուլիսի 11. 'ի բ. Վիրսով:,,

Այս միջոցումը Յ-րդ հետեակ կօրպուսն հասաւ-
մինչեւ Պարասու և այն տեղ կանգ առաւ սպասնով
բոլոր արմիայի առաջուց սահմանեալ շարժողուեց կա-
տարմանն: Անեալ Վատաթովը հրաման ստացաւ կա-
ռավարել Յ-րդ կօրպուսի աջ թեն, որոյ համար և
Վիրսովը բերդիցը ուղղակի ճանապարհ ընկաւ Ջերնօփո-
ղոմն դէպի Բօսսեփատ և իւր բանակը զնելով նա այն ճա-
նապարհին վերայ, որ Պայնարջու միջոմն տանումէր դէպի
Վիզիստրիան, սկսաւ պաշտպանել այն ամէն տարածուիր,
որ ընկած է Պունայի, Պուղկուն ամրոցի և Բաղար-
ջիղու մեծ ճանապարհի միջումն: Երբ որ արմիան Պա-
րասուից գուրս եկաւ դէպի Բաղարջին, Անեալ Վա-
տաթովն շարունակաբար պահպանելով նորա աջ
թեն, Յունիսի 24-ին անցաւ դէպի Պուղկունը: Այս
տեղ նա տեսաւ մօտ երկու հաղար Տաճիկ հեծելազօրք
որ Վիզիստրիայիցն էին դուրս եկել, յարձակուեց նրանց
վերայ և կրկին յետ զարձցրուց դէպի Վիզիստրիայն:
Յետոյ շարունակեց իւր ճանապարհը դէպի Բաղարջիղը,
ուրանօր և Յունիսի 29-ին միացաւ զիտաւոր Արմիային
Հետ:

Երբ որ Արմիան Բաղարջիղը խաղումը դէպի Շում-

լան, Անեազ Սատաթովը գտնվումէր Ինժանտընիցը
Գմներալ Ռուզզեկիչի մօտ, որ հրամանատար էր Յ.րդ
հետեւակ կօրպուսին։ Շումիա բերդի պաշարողուն
համար Յուլիսի 8-ին եղեալ պատերազմումը, Ար-
նեազ Սատաթովն հրամանատար էր մի էշելօն հետեւակի
վր Յ.րդ Կօրպուսի պատերազմի ընդհանուր կարգումը։

Յուլիսի 8-իցն յետոյ, Տաճիկներն էլ չ'են համար-
ձակվում բերդիցը գուրս դալ, փասն որոյ և զիսաւոր
հրամանատարն բազմաթիւ զօրքով առնելով Մարաշ
գիւղը և Լյուկի-Սատամբօլ քաղաքը, սկսաւ ձնշել Շում-
լան շղթայակապ (ուղիղ դասաւորեալ) ամրոյներով և
մի և նոյն ժամանակը շարժական զօրագնղեր ու-
ղարկեց դէպի Ռուշուկայի կողմը, որ էլ հաղորդակ-
ցուիներ չլինին Շումի հետ Անեազ Սատաթովը մի
քանի անգամ հրամանատար դառաւ այդպիսի զօրագնղերի
վերայ, բայց թշնամին հէնց նոցա տեսնելիս էր փախ-
չում։ Ահա Անեազի յատուկ խօսքերն այն տեղից. “Միք
այժմ Շումի մօտ ենք, զրումէ նա, և Պումայ ժամա-
նակը մանեմ զալիս Արքայական (ուրեգրածէն) Ճանապար-
հովը և էլի յետ դառնում։ Երբ որ Գվարդիան դայ,
այն ժամանակը մեք որ և իցէ մի վճռողական բան կը-
կանք և յուսամք, որ Շումլան առնենք։ Օգոստոսի 2-
բանակ առ Շումիա, :”

Անեազ Սատաթովը Օգոստոսի Յ-ին հրամանատար
նշանակուեցաւ Պրօվօդումը մի առանձին զօրագնղի վր,
որ մինչև այն՝ Գմներալ-Շղիւտանդ Բէնկենդորֆի
զօրավարութեան ներքոյ էր, և 5-ին մասաւ արդէն իւր-
եան նշանակեալ պաշտօնի մէջ։ “Երկու օր սրանից ա-
ռաջ եկել եմ այս տեղ, զրումէ Անեազը, կառավարել
այս զօրագունդն Աստանդին Բէնկերդօրֆի ինիսարէն։
Ես նրան շատ յուսահատեալ տեսի և շատ շփոթուած,

այնպէս որ նա իւրիկունը ուշքի եկառ և խիստուրախացաւ
իմ գալուն վերայ. նա հարցրուց Արաստանիցը և ապա
Հրաժարական ողջոյն տալով բաժանուեց ինձանից
ասելով՝ որ նա ամէն մէկ բողէ սպասումէ իւր
մահին: Ես ինչքան կարելի է յոյս էի տալիս նրան՝
միամտացնելով, որ շուտով կառողջանայ, բայց ամէննէ
՚ի զուր, վասն զի նա շատ ծանր էր և գիշերը վիրսախն
սկսեց նորա ծանր հիւանդութիւնն (սարօքսամ), որ
էլ չկարողանալով դիմանալ ուշաթափ եղել բոլորպին
և գիշերը ժամը 11-ին վախճանուեց ու թողեց իւր
երեխայըն որբ: Բայց որովհետեւ Ահւաներական չկար
Ուուսաց քահանաներին կատարել տուի նորա թաղման
կարգը, և արճիճի դագաղշնել տալով յուղարկաւորեցի
նորա մարմինը մէծ ճանապարհաւն դէպի Պազուչա
գիւղաքաղաքն: Արելի է հայրենակիցքը ցանկանան
տանել նրան ՚ի Ուուսաստան: Իմ կարգադրու-
թեանցս համար տեղեկագիր ուղարկեցի Պէլլմարշա-
լին,,:

Պրօվոդի քաղաքը գտնվումէ հէնց այն տեղ, որով
մտնումնէք դէպի Բալկանու քարանձաւն, և ինչպէս
իւր տեղի զիրքը ցոյց է տալիս, այս լեռնագոտիների
ազրիւրներիցը մէկն է: Պրօվոգու գօրագունդն Պալսա-
ւոր Արմիայի գործողութիւններ էր սկսում Շուման
և Արևո բերդերին մօտ և բաղկացած էր Ահւերեան
ու Պօլշայի հետեակ զնդերիցը, 2-րդ թեթև բօտի 12
թնգանօթներիցը, Բուղի ուլանների Յ Եսկաղբօններիցը
ու Ատուպաչեվի զաղախի զնդիցը: Բնդ ամէնն հաղիւ
թէ 2,000 հոգի լինէին պատերազմող, վասն զի փչա-
ցել էին շատերը Պրօվոդու ձորի Ճնշող զիցը պատճա-
ռեալ հիւանդութիւններիցը: Ուստի երբ որ Անեազը
հասաւ այն տեղ, նոյն ժամայն բոլոր զօրաց բանակն փոխեց

Թի այլ յարմարաւոր տեղ և հրամայեց այրել առաջինն:

Ինեազ Ատաթովը սակաւաթիւ զօրքով պահպանեալով այսկողմն, որ գօրավարուել կանոններին նայելով մեծ հարկաւորուի ունէր, և իւր մօտ զիսաւոր Ըտարի օֆիցիերներ չունենալով, ամ հնարք էլ ՚ի գործ էր դուռ մ, որ այս կողմին պաշարողական զրութիւնն էլ առաւել բարւոքէ: Եւ թէ և նա անզադար զործառնուեց մէջ էր, այսու ամիւ չնայելով սրան, նորա պատերազմական վառ վռուն բնութեան համար շատ ծանր էր թուռում լսել պատերազմների թնդիւնները և հաղորդակից չ'ինել նրանց: “Սասովոր էր հետապնդել թշնամւոյն արագընթաց գնդերով և առաջինն հանդիպել նրան պատերազմումն, իսկ այժմ պարտաւոր էր նա նստել ամրոցների պահպանուել ներքոյ և անտարբեր հոգւով սպասել թշնամւոյն: “Եորա կեանքը Պրօփօդումը շատ գժուար էր անցնում տաքուել պատճառաւ, վասն որոյ և խնդրեց գնալդա շտը, կամ դոնէ յարձակուիլ Օմար-Արիօն Փաշային վը, որ Պրօփօդիցը 20 վերստ հեռու բանակ էր տուած Ախօպրի կօյումը, բայց այս պատասխանն ստացաւ. “Զերդ պայծառափայլութեան ամսիս 8-իցը զրեալ նամակն ստանալով, զրումէ Գնեներալ-Եղիսանդ Ախօպրի, պատիւ ունեցայ կարդալ Պ. Պելլմարշալ և Պրաֆ Խվան Խվանովիչ Դիբիչին մօտ, և վճռահատութեան ժամանակը մերժումն ստացայ այն պատճառաւ, որ Զեղ յանձնեալ պօստն շատ հարկաւոր է, վասն որոյ և անկարելի է, որ դուք հեռանաք այն տեղից: Բայց ինչ որ վերաբերումն Ախօպրինիցի էկսպելիցիային, այդ դեռ յետոյ սկառք է լինի, որոյ համար և դուք իւր ժամանակին պատշաճաւոր եղանակաւ զեկուցումն կըստանաք: Իսկ Զեղ յանձնեալ զօրագնդումն՝ Պալսաւոր Ըտարի օֆիցիերներ չունենալոյն համար, ևս հրա-

մայեցի Արմիայի գլուխոր բնակարանին մօտ զտնուողնեւ ըլիցը ձերհրամանաարուեն ներքոյ առնուլ։ Սրանից յետոյ նռ. 12 Օգոստոսի, 1828 ամի. բանակ առ Շումիա:

Այս միջոցումը Աև ծովունաւատոր միզը պաշարեց Աարնան ծովու կոզմիցը, և այսպէս սկսուեցան պաշարման դործողութիւնները, միայն թէ Տաճիկները անդադար յարձակմունքներ առնելով պաշարողներին շատ արդելք էին դառնում, և թէպէտ միշտ էլ շատ մարդ կիկ կորցնելով յետ էին դառնում յաղթուած, այսու ամենայնիւ էլի կովումեն կատաղաբար։ Անեազ Աննչիկովն էլ վիրաւորուեցաւ։ Գրաֆ Վորոնցովը դուրս գալով Օդեսսից, ինքն զօրավար գառաւ այս պաշարող կօրպուսին վերայ և Անեազ Անտաթովին՝ որ առաջ իւր զօրավարութեան ներքոյ էր եղել, յայտնեց այս նամակաւն։ “Ամենասիրելի՛ Անեազ, Աստուած ինձ ուղարկեց կրկին տեսնել մեր չին ծանօթ Տաճիկներին։ Ջնաղաւորին այսպէս հաճոյ թուեցաւ, որ ինձ ուղարկէ այս տեղ, որովհետեւ Անեազ Աննչիկովն վիրաւորուել էր։ Ես խիստ ուրախացայ, լսելով՝ որ դուք հրամանատար էք Պրօվոդումն և խնդրումեմ խոնարհաբար, որ գոնէ մի երկու տողով յայանէք ինձ, թէ ինչ էք անում այդ տեղ, և ինչ են անում Տաճիկները Այդոսի ճանապարհին վերայ և նոյն խկ խուրդասումն։ Այս տեղ մեք կամաց կամաց մօտենումնք դէպէ թշնամին։ Անը ձախ թերումն մեք արդէն սկսել ենք բերել բրեց-բատարէա, աջ թեմն էլ ամբացած է բատարէաններով, բայց Լիմանիցը դէն՝ մեք բայցի ձիաւոր խումբը (բազեզա) ոչինչ չ'ունենք և այն էլ իշխուստ է։ Անամ յաւիտեան անձնատուր Ձեզ Պ. Վորոնցով։

Բանակ առ Աարնա, 18 Օգոստոսի 1828 ամի.,

Այս միջոցումը Վնեազ Սատաթափի զրութիւնը օր
ըստ օրէ առաւել դժուարանումէր: Պրօվողիցը 20 վերստ
հեռու Օմար-Արիօնի 12 կօրպուան էր բանակ տուած
և 25 վերստ հեռու Տաճիկների 2 հազարի զօրագունք
դրն: Տաճկաստանի վատառողջ կղիման զարհութելի ներ-
գործութիւն արաւ Ոյուսաց զինուորնեւնն վերայ, որք
սովոր չէին այսպիսի յանկարծ փոփոխութեան, այն է՝
ցերեկուայ սաստիկ տաքրութիւնիցը դէպի զիշերուայ
ցրտութիւնն և Պրօվողու զօրքը՝ թէպէտ և հէնց սա-
կաւաթիւ էին, բայց հիւանդութեան պատճառաւ օր
ըստ օրէ էլ առաւել էին պակասում, այնպէս որ՝ մի
օրուայ մէջ՝ մի և նոյն ժամանակում, մօտ 50 մարդ
էր հիւանդանում: Բայց Վնեազն անդադար հսկողութ
էր անում, ցերեկն ու զիշերը ինքն էր քննում պօստերը
և հիւանդուիներից տկարացեալ զինուորներին ոգեորե-
լոյ համար ու կամենալով ցոյց տալ թրշնամոյն, որ նորա
զօրքը չեն պակասում, նա շատ հետազօտուիներ (ուստե՛)
էր անում, յորս Բալկանու շրջակայքը նորա միոքն էին
բերումիւր հայրենեաց կողմն՝ փառաւոր Արաստանը.
ահա թէ ինչ զրեց նա այն ժամանակը, երբ որ ամենայն
կողմից վտանգը սարսափեցնումէր նրան: “Ես իմ զօր-
քովս գտնվումն Պրօվողու մօտ զրած բանակումն:
Եերեկուայ տօթագին օդը և զիշերուայ խոնաւուիր ինձ
ստիպեցին շինել տալ ինձ համար տախտակներից բալախա-
նա (վերնատուն) (ճաձագաւ), որոյ չորս կողմը զամիշով
(եղէդն) ծածկուած է և ունի ապակեայ լուսամուտներ, շին
ուած եննա և նախասենեակների նհամար դռներ և սան-
դուղքն (բրյալզօ) շինուած են ամառուան փոքր տան ձեռվ
հանդերձ հովաննցով, իսկ փոքր տունն ծածկուած է
նուրբ տախտակներով (շոհտե) այնպէս որ՝ անձրեւ
չկարողանայ բալախանի մէջ թափուիլ: Այսով բանիւ
այդպիսի տուննը, որ եթէ լինի Ոյուսասաանի լաւ տեղե-
բումը և նորա մօտ 20 դեսեատին հողայն ժամամարդ իւր

կեանքը կարող է անցկացնել շատ հանդիսատ և խա-
զաղ: Այս բանակիցը ևս շատ անգամ իմ դուքսի դուքս
ևմ գալիս հետազօտութիւններին ել գէպի Ռալգանու սարերն,
որ բոլորովին զմայլեցուցիչ տեղիր են: Այս սարերի ստորո-
տումը շատ գիւղեր կան և բոլորն էլ խաղողի ու զա-
նազան պլաղաբեր այդիներ ունին, որոց մօտովն էլ
հոսումն բազմաթիւ առիւներ: նոցա տները շինուած
են յարաքուստ շատ մաքուր և գեղեցիկ, շատրւան-
ներ(Փաւտառ) կան ինչպէս ծանապարհներին վերայ նոյն-
պէս էլ գիւղերումը, շինութիւնները տաշած քարերից են, սա-
րերը ծածկուած են մեծ անտառներով և թէպէտ այս
գիւղերումը բնակիչ չ'կայ, վասն զի ամէնքն էլ գնացել
են հեռու սարերը, բայց ինչպէս որ երեսում, նպա շատ
խստակ են ապրում և լաւ դիտեն՝ թէ հողը ինչպէս
պէտք է ՚ի գործ զնեն, որ օգուտ ստանան, բնութիւնն
էլ ՚նրանց շատ օգնում: Կատքախչաններ կան, սեխ և ձմե-
րուկներ, բայց ոչ սեխն է Ավեանու նման, ոչ խաղողը
Պարաբազու նման, մեր այդիների մէջ առաւել մեծ և
քաղցր են լինում: Ես շատ եմ գալիս զրօնուլ այս
զմայլեցուցիչ ակներումը և կրկին վերադառնում բա-
նակն՝ իմ խրճիթը: Ահա, իմ բարեկամ, թէ ևս ինչպէս
եմ անցկացնում կեանքս: Ժամ է վերջացնել, շուտափ
կլուսանայ, պէտք է պարապուիմ իմում պաշտօնի. Թըշ-
նամին ինձանից հեռու չե, երկու բանակ ունի՝ մէկումը
կայ 12,000 մարդ և միւսումը 2,000, առաջինն 20
մերստ է հեռու, խոկ երկրորդը 25: Անաք բարեաւ,,:

Տաճիկները զգալով, որ Անեաղ Մատաթովի բռնած
պօստն մեծ հարկաւորութիւն ունէ, վճռեցին տիրել
նորան: Պիրօպողին առանց իւր մէջ շինած ամրոց-
ներին էլ մեծ օգուտ է առաջազրում յարձակողներին

սպատառուն որ ամենայն կողմից շըջապատուած է
բարձրութիւններով . մանաւանդ հարաւային կողմի
բարձրութիւնը, որ Պրօդովի բոլոր ամրոցներին վերայ
էլիշառող (բարձր) է կանգնած: Ավ. որ Պրօդովին 1829
թուուէմն տեսել է կանոնաւոր եղանակաւ ամրացած,
նա չի կարող իմանալ, թէ Պրօդովին 1828 թուումն
մեր ինչպէս ենք առել և մի կերպով պահպանել զայն
միայն փոքր հողարձուքներով: Պրօգովուն տիրելոյ
համար Տաճիկների նշանակեալ զօրագունդն՝ որ բաղ-
կացած էր 6,000 մարդից, Շումլիցը դուրս գալով,
Օգոստոսի 28-ին յարձակուեցաւ Պրօվոդու վիրայ:
Շայ յարձակմունքը մրացած էր մի և նոյն օրումն մի
սաստիկ յարձակման հետ էլ՝ Շումլի մօտ, մեր արմիայի
ձախ թևին դէմ: “Տաճիկները այնպէս եին կարծում,
պրումէ Վնեազը, թէ Օգոստոսի 28-ին առաւոտեան
Դ.րդ ժամին կողաշարեն զիս երեք կողմիցնել, բայց ամե-
նայն կողմից էլ մեծամեծ զնամներ կրելով փախան և
շատ մարդիկ էլ կորցրին, իսկ մեր կողմի զնամը
շատ քիչ եղեւ, այնպէս որ ընդ ամենն 37 մարդ են,
թէ սպանուածը և թէ վիրաւորուածը: Ոճէ և նո-
քա թուով 6,000 էին՝ որ երեք անդամ առաւել
է քան իմ զօրագունդն, բայց այսու ամենայնիւ նոքա
յազթուեցան և շատ վէնք էլ մնաց մեր քաջ զօրա-
կաններին: Ես միւս օրը գնացի դէպի Շալդանու սա-
րերը նրանց վերայ յարձակելոյ համար, բայց ոչինչ
չդաի: Եսքա քաշուել եին հեռու սարերը, ուստի և
ևս կրկին յետ դառայ Պրօգովի՝ դէպի իմ բանա-
կը,,:

Պրօգովու քաջասիրա պատերազմին համար սյսպիսի
չափաւոր հաշեւը մի տեղեկութիւն չի տալ ընթեր-

ցողներին նորա հետաքրքիր հանգամանքներին հա-
մար: Ծայց այն մարդիկը, որ Անհաղ Մատաթո-
վին կրած նեղութեանցը և վտանգներին մասնակից են
եղել, իմանումեն՝ ինչպէս և շատ անդամ իւրեանց
քաջազրծութեանց վերայ խօսելիս պատմումեն, թէ
նա որպիսի հմտուք է ծածկել իրան կրած ու յաղթած
նեղութիւնների մեծ մասն և մինչեւ անդամ յաղթուած
թշնամինների թիւը: «Սորա արած բործողութիւնները
իւր աչքին փոքր են երեսում, որովհետեւ նա մի ներ-
քին համոզումն ուներ, որ կարող է նրանցից ել
աւելի մեծամեծ գործողութիւններ կատարել: Ուստի
և մենք աւելացնենք այս յետադայ հանգամանքներն:

Պրօկռվի քաղաքն մի ձոր ունի, որոյ երկարութիւնն
մօտ 3 վերաս է և համարեան թէ այդ տարածութեանը
կիսին չափ ընկած է քաղաքը, ձորի բայնուին կլինի 300
սաժէն, համարելով ձորը սահմանափակող ընդդիմահայեաց
ժայռերի մէկ կատարիցը սկսած մինչև միւսն: Քաղաքը
մասնելոյ կամ զուրս կալոյ ժամանակը, ձորը բաժանուած
(կտրած) է երկու ֆրոնտ ձեռաց շինուած ամրոցներով,
այնպէս որ քաղաքը զանվումէր բանակադայըրի միջումն:
արաւային ժայռերի վերայ գէպի Շումը կողմն քաղա-
քիցը մի ճանապարհ է զուրս դալիս այնպէս զժուաբակոչ
ու բաղմաշըմն, որով միայն հետեակները կարող են
անցնել: Այդ ճանապարհիցը հենց որ դաշտն և զուրս
զալիս, այն տեղ 40 մարդի համար մի ամբոց էր շի-
նած, որ համաձայն էր ոչ թէ պօստի հարկաւորուեն
հետ, աշլզօրագնդի թուլութեան հետ: Այս թռնոտ ճա-
նապարհի զառ ՚ի վայրի վի՝ այն տեղումն, ուրանօր նա
զանազան զժուաբակոխ շրջաններ կազմելով մի փոք-
րիկ սարահարթ է առաջարկում, թաղցրած էր մի բա-
տալիոն զօրք, իրու պաշտպան այն փոքր լեռնային:

պօստին։ Արևիսային այն ժայռերն էլ՝ որ դէպի Ա արնան
էին մտիկ տալիս, անմատչելի էին թշնամոյն համար, վի
զի դաշտի կողմիցը նոքա շրջապատուած էին խորիորատ-
ներով, և քաղաքի հետ հաղորդակցութիւն էին ա-
նում մի փոքրիկ նեղուցով, որ քարի միջով էր տա-
րած։ Այս ժայռերի գաղաթը պատկուած է Յունաց
գանքի աւերակներովը, յորմէ մնացել են միայն զրսի կող-
մի երկու պատերը և մեծ կամարը, որոյ երեսը
դէպի քաղաքն է դարձրած և որն շինուած է ուղղա-
հայեաց կոտորի զերջին ծայրումը։

Օգտատոսի 27.-ին իրիկունը ձիաւորաց խումբը յայտ-
նեցին, որ թշնամին մօտենումէ Սմեաղով դիւղի ճա-
նապարհովն և որովհետեւ այն գիշերը չափագանց մթին
էր, վասն որոյ և մանրամասնաբար տեղեկանալն անկտ-
րելի էր։ Տաճիկներն գիշերն անցկացրին 5 վերստ հե-
ռու Պրօդովիցը և լուսաբացին մօտեցան դէպի մեր
բանակավոյրն։ Թաշնամւոյ մէկ մասը տասն խումբ կաղմած
դաստաւորուել էին մի թնգաննօթարձակելոյ հեռաւորուիիցը
դէն, դէպի Ռալգանը նայող մեր ամրացեալ ֆրւնտին
դէմ. մէկ ձիաւոր էլ Եւրոպացի ձեռով հագուած, մի
քանի ձիաւոր Տաճիկ վեր առած բաժանուեց զօրաց
շարքիցն և սկսաւ մօտենալ դէպի մեր ամրոցներն և
քննողութեամբ նկատել զայնս զիտակաւ։ Այս միջու-
ցումը մեր զօրքը զրանատ քցեցին դէպի այս եկողներն և
այնպէս յաջողեցաւ, որ բոլոր լրտես Տաճիկները սկըս-
ան խառն 'ի խուռն և մեծաւ շտապաւ փախչել դէպի
իւրեանց խմբերն Բայց Տաճկաց զօրագնդի միւս մասն,
բանակ էր տուած Հումկիցը դէպի Պրօվոդի տանող լիու-
նոտ ճանապարհի հանդիպումն։ Տաճիկներն իւրեանց այ-
րումի զօրքն ուղարկեցին դէպի այն գերեզմանատունը, որ
գտնվումէ Պրօվոդի քարտնձաւներից մէկի մուտքին մօտէ

Ար կողմիցը երկու բատալիօն հանգերձ 12 թիվառ
նօթիներով բռնած ունէին երկու ամրացնալիրանտն էլ,
մէկ բատալիօնը պահպանումէր լեռնոտ ճանապարհները,
իսկ չորրորդը պատրաստապահ գանվումէր քաղաքումը,
պատերազմի ենթարկուող երեք տեղերիցն էլ հաւասար
հեռաւորութեամբ։ Ուշանները բռնած ունէին այն միտկ
սարահարթն, որ մէկ քանի հարիւր քառակուսի սաւ-
ժէն ունէր և բանակափայրի միջաւմն էր, բայց նոցա
փլանկերները և զազանները՝ որովհնուե հետեւակ չ'կար,
պաշտպանումէին գերեզմանատան մուտքը, կողմնական
քարանձաւի մէջ։

Օգոստոսի 28-ին առաւօտեան 7 ժամին, Տաճիկները
երեք կողմիցն էլ ընդհանուր յարձակմունք սկսեցին։
Կոցա նետերը մեծաւ բազմութեամբ նստան ժայռերի
գագաթներին վերայ և գնդակներն էլ առանց վեաս
հստուցանելոյ ցրուեցան նոյն իսկ Պրօգովու մէջ տեղը,
այնպէս որ մինչև անդամ մեր հիւանդանոցութ
էլ անվտանդ տեղ չ'կար։ Անեազ Մատաթովը նատեց սար-
հարթումը մէկ կարսեալի (կօբեր) վերայ, աւաններին մօտ։
իսկ մէկ քանի քայլ հեռու կանգնած էր նորա թամ-
քած պատերազմական ձին՝ խոնշան։ Օ՛խաճիզն ծխելով
(չուբուս - քաշելով) նա հանդարտութեամբ նկատու-
մէր, թէ ինչպէս է սկսվումնոցա յարձակմունքն։ Աէս
ժամից յետոյ Տաճիկներն իմանտլով մեր բանակափայրի
թոյլ տեղը, այն է Շումին ճանապարհի դառ ՚ի փայրը,
իւրեանց մեծ զօրուիլ գէպի սյն տեղ սկսան զարձնել։
Եցր որ յայտնի երեւաց, որ այն կողմումն հրացանու-
թիւնն զօրեղանումէ և յարձակողների աղաղակն շատ է
բարձրանում, այն ժամանակը Անեազ Մատաթովն ինքն
անձամբ անձին դնաց այն տեղ տեսնել պատերազմի ըն-
թացքը։

Թաշնամեոյ բազմամբոխ խումբերը շըջապատեցին մեր
ամրացեալ պօսան, յորում կային 40 մարդ և մի օֆի-
ցեր, և թափուելով այն տեղ ու այն բատալիօնին մէջ՝
որ զրուած էր այն տեղ օդնականութեան համար, երկու
մասն էլ բոլորովին բաժանեցին միմեանցէց: Այս տեղ
Աննազ Սատաթովը հարկաւոր համարելով հա-
ղորդակցութիւն անել, որով և փրկել այն պօսան,
հրամայեց պատրաստապահ զօրքին յառաջ խարալ, բայց
չկամենալով յանկարծ 'ի գործ զնել վերջին հասրքները,
սկզբումը միայն հետամուտներին (օչոտնիկ) նշանակեց
դաշդեպի մեր ամրոցը: Իայց մի քառորդ ժամից յետոյ
հետամուտներիցը երկուսը վիրաւորեալ համար բերին
մեւսերի կորսաւեան համար: Այս միջոցումը այն փոքր
լիոնացին ամրոցի հրացանուիը դազարեց, բայց Տաճիկների
կատաղի ազաղակները և նոյս խմբերի շարժողութիւն ցոյց
էին տալիս, որ մեր զօրքը գեռ դիմակալուք մնումն, և
յիրաւիզօրքիան ջատեալ մասն իւրեանց ամէն պատրոնները
թափած ունենալով, մի քանի ժամ սլաքներով կոռուցան
դաշնակաւոր Տաճիկներին հետ, որք այդյանդուդն ընդդի-
մութիցը զարմացած, մէկ քանի րոպէդադարեցան յարձակ-
մունք անել, այն մնօքովը՝ որ 'ի միասին հաւաքուին, բայց
պօստի կառավարիչ օֆիցիւն կամենալով օգուտ քաղել
այս արատ ժամանակումն իւր ստորին օֆիցիւներից մէկին
երկու հասարակ զինուոր տալով ուղարկեց, որ զնան մին-
չե այն ժայռերի ծայրն՝ որ հարիւր քայլ հեռու էին
և աշխատեն մանել Պրօվոդու մէջն ու դօրագնդին
իմացնեն նոյս զրութիւնը Ուղարկուած մարդիկը բարե-
յաջողութեամբ հասան մինչեւ ժայռերի ծայրը՝ համա-
րեալ թէ թշնամեոյն դիպչելով, բայց այն տեղ նորա
պատահեցան Տաճկաց՝ որ նոյն իսկ Պրօվոդու տակին
նստած լինելով, զնդակահար անելով սովանեցին ստորին:

(ՎԱՏՈԲՆ) օվիթերին մէկ զինուորի հետ Եղբարդ զինուորը
զիրաւորեալ կանգնած էր անդունդի ծայրումը և երբ որ
մէկ քանի Տաճիկներ վաղեցին դէպ ՚ի նա մերկ (բայց)
դաշոյններուի (ստագան), նա չ'կամենալով թշնամոյ
ձեռքն ընկնիլ, զինքն ՚ի վայր ձգեց ժայռիցը, որոյ մար-
մին էլ միւս օրը դատն:

Այս միջոցումը Վնեաղ Մատաթովը տեսնելով, որ արա-
գէն հասելէ վճռողական ըոսէն, իւր բոլոր պատրաս-
տապահ զօրքն էլ յառաջ տանելով՝ նորից պատերապմ
բացաւ, յորում մեր ամրացեալ պօստն 5 ժամ մե-
նակ դէմ կենալով Տաճիկաց զօրուեն, աղատուեցաւ:
Վէսօրից մէկ ժամ անցկացած Տաճիկների մէջ
բարձրացաւ վառեալ յարդի ծուխ, և այս նշանովը նո-
քա ամէն տեղ էլ յանկարծ յիտ էին դառնում, իրաւ
նորա համար, որ դիակին՝ թէ էլ չեն կարող առնուլ
Պիօվովին:

Վնեաղ Մատաթովը թէպէտ և աեսաւ թշնամոյ
այսպիսի անկարգութեամբ ցրուիլն, բայց նոյն ժամայն
չ'կարողացաւ օգուտ քաղել այս միջոցումն և հետա-
պնդել նրան, վասն զի մեր զօրագունդն էլ եր շատ
թուլացել և եթէ նորա մի մասն մնացած լիներ ամրա-
ցեալ բանակավայրի մէջ, այն ժամանակը էլ ոչինչ չ'ը-
մնիլ, որ նրանով գաշտի մէջ երեսյինք:

Վնեաղ Մատաթովը, Գաներալ-Մայիօր Դելլինկսկիա-
ուզենին՝ որ սակաւաթիւ զօրքով գանվումէր Պօղու-
ջումը, յայտնեց անյապաղ, որ գայ շուտով միանալիւր
հետ խորասկեալ թշնամոյն հետապնդելոյ համար:
Ամսի 28-ին զիշերը Գաներալ Դելլինսկառզենի զօրա-
գունդը հասան այն տեղ և 29-ին արևն ծագելիս, Վն-
եաղ Մատաթովը գուրս եկաւ դէպի Բաղրամու սարերը
որոնել թշնամոյն, բայց Տաճիկները վախելէին արդեն:

Եյս պատերազմական դործիցը յետոյ Գյուղի Առաջնովքը այսպէս է գրում Անհաղին. “Ուրժ, ամենասարելի Անեազ, ես խմանումէի արդէն, որ Դաղսաանի Հերոսը Բաղկանումն էլ կլինի Հերոս։ Զեր արած յազթուիը առաւել նրանով է մեղ ախորժելի և օդաակար, որ այդ կատարելապէս օգնումէ այն էկապելիցիային՝ որ Նորին ԿԵՑՈԵՐԾԱՅՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ-ՆՈՒՅՆ ինքն վճանեց Լիմանի միւս կողմումն, Ա արնան բարորակին պաշարելոյ համար։ Գեներալ Գոօլովինն առաւօտը շատ շուտ գնումէ այն տեղ իւր հետ վերառած մէկ բրիկազա Գյարդիայի գորք և մէկ բրիկադա դաշտումը պատերազմող գորք (սուօօօ)։ Բայց Մայիսօք Բերհօցը, կարելի է ասել Զեր Տին ընկեր Գրանդը, չորս րոտ զօրքով բանակած լինելով երբեմն եղեալ Վեհինփեվումն, ինչքան կարելի է շուշ շուշ զբազրուի կանէ Զեղ վերայ։ Գոօլովինն էլ նոյնպէս ըստ իւրում կարի Զեղ հետ հաղըրդակցութին կունենայ։ Ինչքան որ մեք շատ բաներ լսեմք Զեղ համար, այնքան առաւել լաւ է։ Զեր օֆիցերին ևս նաւակաւ ուղարկեցի Ապյսեր մօա հանդերձ նոյն իսկ Զեր ուղարկած տեղեկագրովն, որովհեան գիտեմ իսկ Վա որպիսի անհամբերութեամբ սպասումէ համբաւ ունենալ Զեղանից, և մէ Կառ որքան պէտք է ուրախանայ Զեր արած յառաջադիմութեան վերայ։

Մնանք բարեաւ, սիրելի Անեազ, հաւատացէք, որ ևս եմ ՚ի յաւիսեան անձնասուր Զեղ Մ. Վորօնցով։ Բանակ առ Ա արնա 29-ն Օգոստոսի 1828 ամի, :

Առջանդակումնենք այս տեղ Անեազ Մատաթովի երեք նամակը, յորց ընթերցողը կարող է նշարելթէ նա որպիսի դործոզութիւններ է արել Անպատեմբեր ամսումնէ։

“14. Ա Սեպտեմբերի, բանակ՝ ի քաղաքն Պլովդովու,,՝
Ես իմ զօրագնղովն մեր ամէն զըրաց առաջին կանգա-
նած եմ Բալկանու սարերին մօտ և շատ անդամ հետ-
ապօտուիներ եմ անում սարերի միջովը։ Թաշնամին
ինձանից հեռու չե և քիչ չ'ենք պատահում միմեանց։
Պիշերը նոքա վեր են կենում պաշարել ինձ, բայց չ'են
կարողանում։ յուսամօդնականութեամբն Աստուծոյ միշտ
յաղթող զանուիլ նոցա վերայ։ Հատ գիշերներ ես չ'եմ
քնում և շորերս հագած ման եմ գալիս իմ բանակի
մէջ։ Ա հա թէ մենք որպիսի կեանք եմք անցկացնում,
և իրիկունները նուազերգութը խաղումնն ինձ մօտ և
իւրաքանչիւր գնդի մէջ երգիչները երգում, թշնա-
մոյն ենք սպասում, ահա մեր զինուորական կեանքը,։”

“15. Ա Սեպտեմբերի, Պլովդովի։ Ես կարծումեմ, որ
Վարնաննուածելից յետոյ, կարելի է թագաւորը հրամայէ
մեր զօրքին զնալ ձմերոցները և սպասել մինչեւ գարունքը։
Ես պէտք է ինզրեմ զալ Ա։ Պիտերբուրգ՝ մնալ այն
տեղ քիչ ժամանակ և յետոյ զնալ Վրաստան, գոնէ մի
ամիս ժամանակի, որ տեսնեմ մեր կայքը, թէ՝ ի՞նչ է
մնացել Այժմ պատմեմ քեզ, որ փառք
Այ ես քաջ առողջ եմ և իմ զօրագնդովս հանդերձ
գտնվումեմ Պլովդումը, շատ անդամ գնումեմ մանգալ
(տիսնել) Բալկանու սարերն և յետ դառնում վերս-
տին իմ բանակս, շատ ժամանակ չէ՝ որ ամրացրել
եմ ես իմ բանակավայրս։ Ես պարաւոր էի կոտորել մեծ
պտղատու ծառեր, թէպէտ և այս իմ կամքին ընդդէմ
է. — վնդի չ'պէտք է ես այգիների ծառերը կոտորեմ և
վնաս տամ աղքատներին, — բայց այսու ամիւ պարտա-
ռոր էի կատարել այդ նորա համար, որիմ թնդանոթա-
ճիդ զօրքը կարողանան պատերազմալ, երբ որ Տաճիկ-

ները պաշարին ինձ Եթէ զու լինէիր այս տեղ և տեսանէիր, թէ ինչպէս էին կոտորում ծառերի, ծմարի՛տ, որ լաց կլինէիր, վասն զի շատ գեղեցիկ ծառեր էին,,:

“21. Ա Սեպտեմբերի, բանակ առ Պրօվոդի,,: “Եիկոլ” Դիմիտրիիվիչ Դուրնովին ինձանից 25 վերստ հեռու է գտնվում, զէպի Վարնան տանող ճանապարհին վերայ Լիմանու անցքումը Ըրքայորդի (որուց) Եվկենիյ Վերտեմբերկսկուն հետ ։ “Ես մինչև հիմիկ էլ ինձ վերայ Գլխաւոր է։ Ես այժմ ամենայն օր յայտարարութներ եմ զրում Գևեներալ Բէնկենդորֆին, որնակէ ծանուցանէ ՏԵՐՈՒ ԱՀՅՈՒՆ և Գլխաւոր հրամանատարին ու Ըրքայորդոյն՝ (Եվկենիյ Վերտեմբերկսկուն), որպէս իմ զօրագունդն ամենայն զօրքից յառաջ է զանվում։ Հանշենը ինձ զրումէ, որ Գրաֆ Դիբիչը և Գրաֆ Վորոնցովը շատ բաւական են իմ կարգադրութներից և իւրեանց բոլորովին ապահով են համարում իմ հողմիցու,,:

Վերջապէս Սեպտեմբերի 29. ին Վարնա բերդը նուածուեցաւ։ “Հապաւմեմ յայտնել Զերդ Պայծառ ու ափայլուեն, զրումէ Գրաֆ Դիբիչը, որ Օմար-Վրիօն Փաշյի Տաճկական կօրպուաց՝ որն եկել էր այն մըտքովը, որ օգնութիւն անէ Վարնա բերդին, լսելով՝ որ էրեկ մեք առել եմք բերդն, այժմ զիշերը ծածուկ փախել է շատապաւ զէպի Պամիզը։ “Սորան հետապնդելոյ և Պամիզեցը հալածելոյ համար արդէն զօրք են ուղարկուել, բայց չկարծեմ թէ նոքա նրան համենն Դեռ ծշմարիտն յայտնի չէ, թէ թշնամին որ ճանապարհաւ է դնում, բայց շատ հաւանական է, որ նա կկնայ կմմ զէպի Ծուման, կամ զէպի Այգուր Վասն որոյ և Զերդ Պայծառափայլութիւնը պէտք է աշխատէ էլ աւելի զգուշուի բանացնել և ամ հնարք

ի դործ զնել, որ թթէ Տաճիկները սկսեն յարձակմունք անել Չեր բռնած կողմին դէմ, զուք միշտ յետ գարձ ցնէք նրանց։ Ինչ համբաւ որ ստանաք թշնամեոյն համար, խնդրեմ ծանուցանեք ինձ անյապաղ։ — Գևերալ։ Եղիւտանդ Գրաֆ Դիբիչ։ ‘Ասւակն Փարիզ՝ որ ՚ի նաւակայանն Ա արնա. 30 Սեպտեմբերի, 1828 ամի։’

Եյս նամակներիցն երեսումէ որ՝ Սեպտեմբեր ամսումը Պրօվովին՝ հանգերձ Վարքայորդի Եւկենիյ Վիրտեմբերկ սկուն կօրպուսին հետ և Գևեներալ Շիստրոմի զօրաց հետ ՚ի միասին, պատապարան եղեն պաշարող Կօրպուսին Վարնային մօտ՝ ընդդէմ Օմքը Վրիոնին, որոյ նպատակն եր ստիպել՝ բառնալ այդ պաշարումը։ Անեադ Վատաթովը՝ ինչպէս ահասուումնէք, չնայելով իւր զօւագնի քիչու թիւնը, կարողացաւ պահւ Պրօվովին։ Բայց ափսոս, որ միւս լրկու Գևերալների գոծողութիւններն այնքան բարեյաջող չ'եղեն։ Անայն թէ Վարնան անձնատուր եղեւ և Օմար Վրիոնի օգնական կօրպուսը հեռացաւ մեր գործողութեանց շրջանիցը։ Ճկանքներ ամսի առաջիններումը Վարնի Շերգապահ զօրքը (գարնչօն) անցկացան Պրօվովու միջովը, պատճառն որ բերդի անձնատուր լինելոյ ժամանակը՝ նրանց աղատութիւն տուած էր յետ զառնուլ Շալկանու միւս կողմը։ Ակսուեց արդէն ցուրտ անձրեային եղանակ, Տաճիկները այս երկարատև պաշարման ժամանակը, իւրեանց կեանքի կարիքների մէջ մէծ պակասութիւն ունենալով, և բաց յայսմանէ գուրս զալով պատառուտած շորերի մէջ, չէին կարողանում տանել այս վասն եղանակն և հէնց առաջին ճանապարհորդութիւններումն արդէն, մեր էին թափիվում և մեռնում խումբ։

Այն ժամանակը Կնեազ Մատաթովը ցոյց տուաւ,
որ ինքն ինչքան քաջէ, այնքան էլ մարդասէր է. նա
ինչքան կարող էր, ամ կերպիւ օգնեց դժբաղդ Տաճիկնե-
րին. Կնեազը մի մասն զօրք ուղարկեց հաւաքել այն
հիւանդներին, որ առանց ինամատարուն խուռն բազմութ
վեր էին թափուած անապատումը և գիշերը պահապաններ
դրաւ բանակիցը զուրս, այն է զէպի Վարնա ուղղու
ձանապարհումը, որոց մօտ ամբողջ գիշերը կրակ էր
այրվում և վաստակեալներին ու նուազներին համար
կերակուր պատրաստվում։ Պրօվոդու զօրագնդի զի-
նուրները կամենալով նմանուիլ իւրիանց զօրավարին,
Տաճիկներին մէկ մէկ վեր առնելով տարան իւրեանց
մօտ և Որուսաց ձեռնին նրանց հետ ի միասին սկսան
աղուհաց ուտել։ Կարելի է հէնց այս բոպէին, յորում
հանգուցեալ Կնեազին բարի գործերը թղթի վերայ
գրվումեն, Բալկանու միւս կողմումն նորա յիշատակը
օրհնութիւմբ հանդերձ մեծարումն նորա ձեռամբն
փրկեալ Տաճիկներն։

Զմեռն մտաւ, սկսաւ սաստիկ ցուրտը, բուք, ձիւնա-
խառն հողմ և բաց յայսմանէ շատ էլ ձիւն եկաւ։
Գլխաւոր հրամանատարը զօրքին հրամայեց անցնել
Դունայի ձախ կողմն և գնալ բնակիւ ձմերոցներումը։
Խսկ Կնեազ Մատաթովին պատուէր տուած էր իւր զլսա-
ւոր բնակութիւննին գիմել զէպի Եշասսի քաղաքը, ու-
րանօր և մտաւ նա “Եսյեմբերի 10-ին։

Գաներալ Դիբէչը յայտնեց Յաղաւորի կամքը, որ
Կնեազը Գլխաւոր է նշանակուած Գուսարի Յորդ Դի-
վիզիային վերայ, որ դասաւորուած էր Հռոման քա-
ղաքումը ձմերոցներում։ 80 վերստ հեռի Եշասսի քա-
ղաքիցը։

Եսյու տեղ Կնեազ Մատաթովը պարագփումէր իւր Դի-

միզիսյն բարեկարգելով և նորա թիւը լրացուցանելով, վասն զի շատ էր խանգարուել 1828 թուի պատերազմագնացութեան ժամանակը: Հնայիլով, որմեծ դժուառութիւն կար զօրաց պակասեալ ձիաների տեղը ուրիշ ձիաներով լցուցանելոյ համար և համարեած թէ բոլորպին անկարելի էր հասուցանել այն կողմումն՝ զինավառուե համար եղեալ կարիքն են, սակայն Գիշիզիայի նոր Գլխաւորն կամենալով լիակատար բաւականութիւնն տալ Գլխաւոր-հրամանատարին, մեծ եռանդեամբ և իւր խոչեմ կարգազրութեամբը 1829 թուականին՝ գարնան սկզբումը, Գիշիզիայի դրութիւնը բոլորպին բարւոքեց, և Ապրիլի 5.-ին նորա հետ ՚ի միասին պատերազմաջու սկսաւ: Խսկ Ապրիլի 26.-ին՝ յորում Գիշիզիան Գունայն պէտք էր անցներ Աստունովի մատովն, մաղթանքիցը յետոյ Անեազը մօտեցաւ գնդերին մօտ և ողջոյն տալով յայտնեց նրանց մի համառոտ ճառիւ, որ նոքա պարտաւոր են ծառայել Թագաւորին հաւատարմութեամբ, ջերմեռանդութեամբ և քաջութեամբ: Եւ յետոյ Գուսարները ուրած աղազակելով և երգելով անցին Գունայի միւս կողմն գնալ Բարագաղի և Բագարջեղու վերայ: Եւ Մայիսի 16.-ին Գիշիզիան մտաւ Պառակու զիւղը, ուրանօր Անեազ Աստաթովը Գնեներալ-Աէլիանանտ Պարօն-Արէյցին փոխարէն զօրավար գառաւ այն զօրքին վերայ, որ բաղկացած էին Գուսարի 3. ըդ Գիշիզիայիցը՝ հանդերձ իրան ձիաւոր թնդանօթաձիգներովը, մէկ բրիկադ հետեակից՝ հանդերձ հետիոտս թնդանօթաձիգներովը և երկու զաղախի գնդերից: Այս զօրագունդը նշանակուած էր նորա համար, որ օգնական լինէ պաշարել Աիզիատիայի բերդը Շումիային ու Ռօտ ու Շիզիկեր Գնեներալների կօրպուսներին հետ յարակցութիւն ունենայ:

Անեաղ Մատաթովը անդադար լրտեսձիաւորներ էր ու
շարկում ամանապարհով, իսկ ինքը Մայիսի 15-ին իւր
բոլոր զօրագնդավն Պառեկիցը դուրս եկաւ և գնաց
հետազօտութիւններ անել Ալիդիստրիայի Ճանապար-
հիցը սկսած մինչեւ Ըումիան։ Իսկ բոլոր ծանրոցքը
և աւելորդ մարդիկը թողեցին բանակին մեջ՝ ընդ հո-
վանաւորութեամբ մի բատալիօն հետեակ զօրքի հան-
դերձ 4 թնդանօթներով, այն մորովը՝ որ էլեւ պետք է
միերազառնան իւրեանց բանակավայրն բայց Ըումիի Ճա-
նապարհովը գնալոյ ժամանակը՝ դեռ մինչեւ Կամբելեար
դիւդր չհասած՝ Անեաղ Մատաթովը ամսի 18-ին յայ-
տարարութիւն ստացաւ Գրեներալ Ռօտիցը, որ Գլխա-
ւոր Աէզիրը քառասուն հադար զօրքով Պօղուջի
մօտիինելով՝ ուղղումէ շրջապատելիւրեան, ուստի և ինքնն
Գրեներալ Ռօտի Պինդրումէ Անեաղին շտապաւ յօդնու-
թիւն հասնել իւրեան։

Անեաղը նոյն ժամանի թողլով իւր առաջուայ Ճա-
նապարհի ուղղութիւնը՝ յետ զառաւ զէպի Պօղու-
ջին, կրինապատկելով իւր զօրաց ընթացքի արագուիլը:
“Դէհ, փառք աստուծոյ, ասումէր նա Գրուարներին,
մեք վերջապէս էլի կտեսնենք տաճիկներին։” Այսեցէք
եղրմաք, դուք նրանց ամէնին չսպանէք, յիշեցէք որ
ամէն մէկ զերիի համար մի ոսկի (չերվուսւն) են տալիս, (*)
պէտք կուզայ. իսկ նոյն ձիաները ը պարտքի փրի արևն
կառնը մարկիտանաներին (նազարավաճառ գինուորաց), :

Գրեներալ Ռօտիցը նամակ բերող օֆիցերին գալուցը
երեք ժամ յետոյ, մի ձիաւոր դադախն եկաւ որ ուղարկուած էր

(*) Տաճկաստամի վերջին պատերազմումը Ասյորն հրամայել էր
ամէն մէկ հետեակ գերեվարեալ Տաճկի համար մի ոսկի
տալ, իսկ ծիաւորին համար՝ եղկուսը։

այն մասին, թէ պէտք է տանել զօրքը ուղիղ ճանապարհաւն դէպի նորա համար նշանակիալ բանակափայրն։ “Ապա, ի՞նչլաւ գործ ունիք այն տեղ։ — Ոչինչ, Չերդ Պայծառափայլութիւն։ Տաճիկները սասափիկ կռիւ են անում։ — Ուրիմն գուք կռիւ էք արել։ — Այս, մեր վճռահատուին այն տեղ այն պէս էր, որ Աստուած աղատէ։ — Լաւ, ի՞նչ է ձեզ պատահել, շրունակեց Անեազը ժաղակով։ — Տաճիկները մեզ բոլորովին ջարգել են, Չերդ Պայծառափայլութիւն։ Ինչպէս, թէ ջարգել են. Անեալն սկսաւ ծիծաղիլ, երեկ ձեզանից շատ մարդ է նալանուած։ — Ու, քիչ է, Չերդ Պայծառափայլութիւն։ Աստուած կմացաւ, մէկ զազախի բոլորովին սպանել են, միւսին վիրաւորել, և զազախների ստորին ասաիծանաւորի (Վրացական) կռատած ձին (մերսու) սպանել։ Ոչ ի՞նչ երեկի ձի էր, ողորմելի ակրը լաց էր լինում։ — Բայց մեր հետեւակ զօրքը. ես կարծեմ, որ նոքա էլ նրանց կարգին ենթարկուած լինին։ — Այս, մեր հետեւակը առաջ նոցա պէս վնաս կրեց, բայց յետոյ սկսաւ ծակուել թշնամիներին սլաքներով և ծեծել հրացանների ոտով։ Եւ հեռանալն էլ գժուար էր, Չերդ Պայծառափայլութիւն։ Տաճիկն այդպէս է, խոզից խոզ, ուղումէ հէնց ՚ի վեր ելանել։

Մի և նոյն օրը զօրքը 65 վերստ Ճանապարհ գնալով, թէ և անակնունելի էր՝ բայց հասաւ Գեներալ Ռոտին մօտ, որ շատ ուրախացաւ և միանգամայն մնաց զարմացած այլպիսի շուտ գալուն վիրայ։ Աէզիրն էլ մի և նոյն օրը փախաւ։ Անեազ Մատաշ թովը իւր Դիվիզիայովն անդադար մէկ տեղից միւս աեղն անցնելով, համարեան մի օր էլ հանգստութիւն չ'ունէր։ Ինչպէս վերեւումն ասացինք, կարաւանները և բանակը մնացելէին Պատուիկումը և այս միջոցումն էլ։

կարծես թէ չէնց դիտութեամբ, յորդահոս անձրևներ
էին գալիս: Մայիսի 25-ին Գմներալ Ռօտը՝ Օրանու-
Ըրքայորդւոյ Գուսարի զնդովը զնաց հաղորդակցու-
թիւն անել պաշտեալ Պրօվոդուն հետ և մի և նոյն
ժամանակը կամենալով թշնամոյն հալածել, Անեազ
Մատաթովին հրաման տուաւ, որ երկու գունդ
Գուսար և մէկ գունդ զազախ առնելովիւր հետ՝ յար-
ձակուի թշնամոյ հեծելագօրաց վերայ, որք “Անչչինոյ
ձորումն դասաւորուած էին: Անեազը յարձակուեց Տա-
ճիկներին վերայ Ռօմնօ գիւղին հանդէպ, և հալածեց
նրանց զէպի սարերը: Մայիսի 28-ին Ռօտի և Ռիդի-
կերի կօրպումները պարտաւոր էին յառաջ խազալ գե-
պի Թայուշան-Ղօղլուջին՝ որ միանան Գլխաւոր Ըր-
միային հետ: Բայց Անեազ Մատաթովին յանձնուած
էր, որ երեք գունդ Գուսարներով (*) և զազախներովը
ծածկել զօրքի կողմնական շարժողութիւնն Անզիրի
Ըրմիայիցը: “Սա յարձակուեց “Անչչինու զօրքին վե-
րայ, որ նոր էին եկել այն տեղ և կրկին հալածելով
նրանց զէպի սարերը մնաց “Անչչինու ձօրումը,
ոյնպէս՝ որպէս թէ իւր բանակն այն տեղ է դրել, և
զօրքին հրամայեց կրակ անել: Մատաթովը այն տեղմի
մասն զազախ թողեց, որ թոյլատան կրակին հանգչիւլ և
իրանք էլմի շղթայ (ո՞էով) կազմեն, իսկ ինքն կէս զիշերին
այդ բանակեաղեցը հանդարտ իջանելով, փաղը Գու-
սարներին հետ հասաւ Թայուշան-Ղօղլուջի զիւղը: Այս
տեղ մնաց նա իւր Դիմիզիայի միենոցն զնդերովը և մի
քրիկազա հետևակներովը, որ Ըրմիայի թիկունքը պաշտ-
պանէ, վս զի Գլխաւոր Անչչիրը իւր շարժողուիլը զէպի

(*) Գուսաֆ Ա իտհենշտեյնի Գուսար գունդը մնացել էր Պահ-
պողումը Վաներալ Կուպրիեանովի մօտ:

աջ կողմեւ սկսելով՝ կարող էր յարձակութիւն Որուաց արմիային վերայ քամակիցը, Տաճկական արմիայի բնակավայրը ունենալով Պլովողու շրջակայքու մը:

Ամսի 30.-ին Վնեազը զնաց դեպի Պուլիչու գիւղը, որ միանայ մեր բոլոր արմի այլն հետո: Թնդանօթների անընդհատ շառաւումը և անդադար հրացանութիւն ցոյց էին տալիս, որ պատերազմը արդէն սկսուել է: Գյխաւոր հրամանատարը պատերազմ՝ սկսաւ սաստիկ լրտեսներով, որ թշնամւոյ զրութիւնը իմանայ: Տաճիկները փախչելով մեր զօրքը տարան մօտեցրին դեպի մի թագուցեալ բատարէա, որ սաստիկ հրացանութիւն սկսաւ մեր կալոնաներին դէմ, և մի և նոյն բողէին թշնամւոյ այրութին գաղուած տեղերիցը գուրս թափուելով, մեծադորութեամբ մեր բատալիոնների վերայ յարձակուեցան: Հետեւ ակները սկսան փախչել և Տաճիկները փայրներ աղաղակներով հետապնդումէին նրանց: Զիաւոր բարձրէացի 19.-րդ բօար և 2.-րդ զիվիդիացի Պուսարների մէկ բրիկադն յօգնուի հասան փախչողներին և հաւասրեցրին պատերազմը: Թշնամին դադարեցրսւց յարձակմունքը և իւր բանակը զրաւ առաջուայ տեղը Պուլիչու նեղուցի առաջին:

Այս օրիցը հինգ ժամ անցկացած, մէր կողմիցը ընդհանուր յարձակմունք սկսուեց: բազմամբոխ կալօննաները զիմեցին սաստիարար դեպի թշնամին ձիաւոր բատարէատի ընդ համարաւ և 19.-րդ բօար՝ իւրեան օգնական ունենալով Արք-ի-Պուրս (Երւա Գերոց) Փերդինանդի Պուսար գունդն, կալօննաներին զլուխ գառած յառաջ էր խաղում: Տաճիկները՝ թողլով նրանց մօտենալ մինչև մի թնդանօթարձակելոյ հետաւորուի, նրանց առաջը գուրս եկան զընդակներ և զրանատներ արձակելով: 19.-րդ բօար՝ Պեներաւ-Մայիօր Արնօլդի զօրափարութեան ներքոյ

լինելով, մնում մահառիթ հրոյ տակ, անջտտվումէ առաջաւորներիցը, և երբորդ անդամի հայանութիւնիցը գրանատն ընկնառմէ թշնամւոյ վառօդի արկղը, որ օդի մէջ բարձրանալով իւր կրակը հաղորդեց և միւս արկղներին որ Տաճկաց խումբերի միջումը սերտ գասաւորուած էին Աներ թնդանօթաձիգ զօրքն կրկնապատկեցին իւրեանց կրակը, չետեակները արագութեամբ յառաջ մօտեցան և թշնամին սկսաւ փախչիլ յաղթողներին համար մեծ աւար թողլով. այն է իւրեանց բոլոր թնդանօթներն (արտալերիա), կարաւանը, բանակը և բազմաթիւ զէնքերը: Այս պատերազմի ժամանակը Կնեազ Մատաթովն իւր գնդերովը գտնվումէր Զ-րդ ուղղաձիգ դասաւորեալ զօրաց մէջ:

Ամսի 31-ին, կամենալով՝ ինչքան կարելի է, արդեկիլ թշնամւոյ արմիայի մնացորդին, որ չմտնին Շուման, Պեներալ Ռոտի կօրպուսը՝ յառաջ խաղաց դէպի Մարտշ զիւղը մէկ քանի կալծնաներով, յորոց աջ թեւին՝ Շումայի մերձակայն բաղկացած էր Գուսարու Յ-րդ զիվիպիայի Յ գնդերիցը՝ և ձիաւոր թնդանօթաձիգ Ա 6-րդ բօտի Կ թնդանօթներիցը:

Տաճիկներն ուզեկով արգելք դառանալ այս շարժողութն, մինչև 3,000 այրուձի ուզարկեցին, որ Գուսարների աջ թեւին դէմ առ դէմ բարձրութիւններին վերայ շարադասուելով պահպանումէին երկու ամրոց և չետեակի երկու բանակը, յորոց մէկը ձորի մէջ էր, իսկ միւսն ձախ կողմումն էլի բարձրութեանց վերայ: Կնեազ Մատաթովն առաջին ուղղաձիգ զօրաց մէջ Աղէ քսանդրեան և Օրանու զնդերը ու ձիաւոր թնդանօթաձիգ զօրաց 6-րդ բօտի Կ թնդանօթները՝ անջրպետուե (սուբ-բալ) մէջ պահպանով և Ախտիրու զունդը պատրաստապահ շինելով, սկսաւ իւր յարձակմունքն անել: Տաճկաց չեծելու-

զօրքն չենց մի վայրկենի մէջ խորտակուելով, սկսան յևտ
դառնալու իսկ գուսարների առաջին ուղղաձիգ զօրքն սաս-
տիկ հետապնդելով նրանց, անցան ամրոցների միջովն և
փախստականներին հիտ՝ ի միասին թափուեցան մերձակայ
հետեւակի բանակը, յորում Տաճիկները ՚ի զուր ապա-
տանարան էին որոնում։ Այս յարձակմունքը այնքան
յանդուգն էր և զօրավարի օրինակն այնքան զրաւիչ,
զօրսավարի՝ որին չենց բնութիւնն ինքն էր զարդարել
հեծելաղօքի պատուական Գնեներապի ամ արձանաւո-
րութիւներովը, որ Տաճկաց հետեւակներն յանկարծ բռնուած
լինելով, մնացին խիստ վարմացած և ել չկարողա-
նալով կարգի գալ, համարեած առանց ընդդիմուել վեր էին
թափում բանակի փոսերին մէջ և վրանների մէջ։
Բայց զօրաց այս սաստիկ յարձակմունքն գեռ չեր-
հանդարառուել։ Անեազ Վատավովն շուտով աջ
կողմն անցնելով կարողացաւ անջատել Ծումեցը և
այն հետեւակ կալօննան, որ երկրորդ բանակիցը հեռա-
ցած փախել էր այն յուսովը՝ որ քաղաքումը վրկու-
թիւն գտնէ, միայն թէ բոլորովին փչացաւ, որովհետեւ
չհոմարձակեցաւ նա սպասել աղատութեան քաղաքի
անառ իկ պարխապներիցը դուրս։ Այս բոլոր դաշտումն
մի թշնամի չթնաց մինչև նոյն իսկ բերդը, միայն թէ մի
քանիսը հազիւ թէ կարողացան թաղչել Ծումը մնա-
յաց գեռ երկու ամրոց մնացել էին անառիկ, զորս
Տաճիկներն սպահանուալին օթնդանօթներով և այս
ամրոցները շատ երևելի էին, այնպէս որ շինուած էին
երկասիրուր, ունեին խոր փոսեր, գալարագեղ հողեր և
յանդուգն բերդապահները ուսահի և մի չլոււած բան
էլիներ յարձակուիլ նրանց վերայ հեծելաղօքով և մի-
անդամայն անկարելի նոյն առնելի, բայց Անեազ
Վատավովն սովոր էր արդին այսպիսի փստահ ու հա-

մարձակ գործառնութիւններ սկսել։ Գտւսարները ոգեստուած նրանով, աներկիւղ դիմումէին առ վտանգը, օֆիցիերները և զինուորները հազիւթէ հրամանին սպասումէին, հէնց քաջասրտությարձակվումէին ամրոցներին վրա Եւ Աղեքսանդրան Գուսար գունդնառին մէկ ամրոցը հանդիրձ Յ թնդանօթներով, իսկ միւս ամրոցն առին Ախտիբու գունդն երկու թնդանօթներով։ Աղեքսանդրան գուսարները սկզբումը յաղթուեցան, որովհետեւ իւրեանց պաշարեալ ամրոցը շատ գօրեղ էր, բայց շուտով Գեներալ Շոտի ուղարկած մի բատալիոն հետեւակների օգնութեամբն մտան ամրոցն, որոյ բերդապահները խնայողութիւն խնդրելոյ փոխանակ, պատերազմելով սպանուեցան։ Բայց Ախտիբու Գուսարները տիրեցին միւս ամրոցներին էլ առանց մի երեելի ընդդիմութիւն տեսնելոյ։ Հեծելազօրքերին այս յաղթութիւնն պատերազմական ժամանակազրութեանց մէջ պատահէալ երեելի քաջազործութեանց մէկն է, այս պատերազմական գործն միայն բաւական էր Անեալ Մատաթմովին մեծ անուն ժառանգելոյ համար, վասն զինոյնն ոչ թէ միայն նորա քաջութիւնը և հմառութիւնը ցոյց տուաւ, այլև նորա բնականիցը դուրս ունեցած ներդործութիւնը իւր հպատակներին վերայ։ Այս պատերազմումն յաղթուելը աւար եղին 5 թնդանօթ և 14 զրոշակ։ և Գուսարու Յ-բդ Դիվիզիայն այս օրս ջոկվումէ մի առանձին պատուով։ Պատերազմական (աօսունայ) պատմութեանց մէջ շատ քիչ կ'սկատահէ, որ գուսարները սուր ՚ի ձեռս առած նուածին այն ամրացեալ բանակը, որ պաշտպանուած լինի հետեւակներով և ամրոցները՝ թնդանօթածիդ զօրքով։ Այս պատերազմի մէջ թշնամւոյ կողմէցը 600 մարդ էր սպանուել բաց ՚ի զերիները։ Օրանու Աքքայորդւոյ զունդը

որ էր Պղասուամինի զօրակարուենելքը, մէկ քանի փայլուն
զործողութիւններ արին. Աղեքսանդրիացիք տարօրինակ
արիութեամբ բարձրուցան ամրոցների պատնէշների վե-
րայ և երեք քաջ օֆիցերներ այս գնդեցը բռնամարտուի
անելով, մեռան նոյն իսկ ամրոցների վերայ: (*)

Անեազ Վատաթովը կամճնալով, որ արիւնչեղու-
թիւն չլինի և իւր քաջ զօրականները կեանքից չգրկ-
ուին, երկու անդամ գնաց նոյն իսկ ամրոցների փոսին
մօտ և խորհուրդ տուաւ Տաճիկներին՝ անձնատուր լի-
նել, յանդիմաննելով նրանց եւրեանց լեզուաւը: Բայց
այս զիւցազնական և վեհանձն մեծազործութիւնն տե-
ղիք չունեցաւ այս տեղ և խստասիրու Տաճիկները այս
խօսակցութեանը ժամանակն էլ զէպի Գաներալը հրա-
ցանութիւն էին անում: Ատկայն Կախախնամողն
Վատուած փրկեց նրան, վասն զի այս քաջ զօրականին՝
որ իւր կեանքը շատ անդամ էր ենթարկել պատերազմ-
ների, վճռուած էր պատերազմի մէջ չմեռնիլ: Անեազ
Վատաթովը՝ (ինչպէս Գրաֆ Դիբիչն է ասում իւր
յայտարարութեան մէջ), ամենայն տեղ առաջինն էր,
զէպի յադթուին ճանապարհ ցոյց տալով՝ որոյ օրինա-
կին էլ հետեւումէին նորա ամէն ստորագրեալ մարդիկը, :

Այս գործին համար Անեազ Վատաթովը պարզեւա-
գրուեցաւ Ս. Կեկվկիյ Աղեքսանդրի տապետական նշա-
նաւը: Գնդերի հրամանատարներն էլ Գնօրկիի խաչ
ստացան, միւս օֆիցերներն ու ստորին աստիճանաւոր-
ներն ես վարձատրուեցան:

Յունիսի 5-ին Անեազ Վատաթովը դիվիզայովն
մտաւ Գաներալ Գրաֆ Պալենի զօրակարութեան ներ-

(*) Աղեքսանդրեան Գնուար գնդի զօրավարն էր Գնդապետ
Ա. Օ: Վուրալիւը:

քոյ եղած Զ. թդ հետեւակ կօրպուսին մէջ , և Արաշի
դիւղիցը անցնելով բանակը զբաւ Ծումիա բերդին հան-
դիպումը : Խակ Յունիսի 7.-ին գնաց հետազօտութիւներ
անել դէպի Շումայը , որ գտնէ Ծումիան եկող օգնա-
կան զօրացը ու 9.-ին յետ դառաւ իւր առաջուայ
բանակավայրն :

Եհա Անեազ Մատաթովի նամակը , որ գրեց 1828
ամի Յունիսի 11.-ին Ծումիի մօտիցը .

“Ես երկու անգամ քեղ վերայ Ղարասուժիցը նամակ
եմ զրել և վերջին նամակը , Ղայուրկիցն եմ զրել ,
Մայիսի 15.-իցը : Ես իմ հետեւակ դիվիզիայովը Սի-
դիստրիայի ձանապարհովը դուրս գալով երեք օրուայ
ժամանակի գնացի հետազօտութիւներ անել դէպի
Ծումիան , ուրանօր և թողեցի իմ ամէն մարդիկները
և կարաւանս , այն յուսովը՝ որ երեք օրից յետոյ ելի
յետ կարաւանս : Իմ տեղս : Բայց երկրորդ օրը հէնց՝ որ
դեռ ձանապարհորդութեան մէջ էի , Գաներալ Ռօտիցը
յայտարարութիւն ստացայ , որ Պախաւոր Ա Էզիրը
Պօղուճի մօտ նորա վերայ յարձակմունքներ է անում :
Ռօտը խնդրումէր , որ ինչքան կարելի է , նրան շուտով
յօդնութիւն հասնեմ , ուստի և ես թողլով իմ ձանա-
պարհը՝ գորքս յետ դարձցրի դէպի նա և այն օրը 65
վերստ ձանապարհ գնալով , անահնկալ ժամում հասի
նրան մօտ , որն շատ դարմացաւ՝ իմ այսպէս շուտ
հասնելուն վերայ : Ռօտը շտա ուրախացաւ և Ա Էզիրը
մի և նոյն օրը փախաւ , բայց ես դիվիզիայովը մէկ
տեղից միւսն անցնելով , համարեա թէ մի օր էլ հան-
գսառութիւն չ'ունեի :

“Մայիսի 3.-ին , երբ որ յաղթեցինք Ա Էզիրին , ես
միացայ զիսաւոր արմային հետ , խակ 31.-ին , ես դի-
վիզիայովը գնացի դէպի Մարաշը և մի երեկի քաջա-

գործութիւն արի, թէ է խորտակեցի բոլորովին 3,000
Տաճիկ հեծելազօրքին և հալածեցի նրանց մինչև Հռոմի
պարիստներն, ու բանօր և զանվումեր թշնամեց հետե-
ւակաց ամրացեալ բանակը հանդերձ երկու ամբողջներով։
Ես իսկոյն հրամայեցի Գուռարներին, որ շուտով հար-
ձակուելով առնեն ամրոցները։ — զոր և նոյն ժամայն կա-
տարեցին նոքա։ առին ամրոցները, հինգ թնդանոթ և
տասն ու չորս դրօշակ։ Այն օրը զիվիդիայն իւր հա-
մար անմահ փառաց յիշատակ թողեց։ մինչև ցայս օր
զինուորական պատմութիւնների մէջ չ'կայ, որ հեծելա-
զօրքը կարողանայ առնել հետևակաց ամրացեալ բանակը
և ամբողջ՝ հանդերձ թնդանոթներով։ Դու, ով իմ
բարեկամ, դորա համար կարող ես մանրամասնաբար
կարգալ լրագիրների մէջ։ Դրամի Խփան Խփանովիչ
Դիբէչը շատ շնորհակալ է ինձանիցեգերազանց է դասում
միւս ամեն Գյեներալներիցը։ նա և Արքուս Թակողորեան
Տօֆ (Կարա Թօվորօվու Տօլ) շատուշատ սիրումնեն
ինձ։ Սրանից յետոյ ինձ թարնովի ճանապարհովը ու-
ղարկեցին զէպի Հռոման։ Տաճկաց արմիայի քամակը։
Ես 35 վերստ ճանապարհ գնացի, մի Տաճիկ էլչհամար-
ձակուեց իմ առաջս դուրս դալ, ահա մինչեւ այս աս-
տիճան վախեցած են նոքա։ Միայն մէկ քանի բնակիչ-
ներ գտի զիւղերումը, ես նոցա հետ շատ հեղաբարոյ
փարուեցայ և նոքա շատ հանդիստ մնացին, բայց այս ամսի
10-ին յետ դառայ արմիային մօտ, ուրանօր և գտի
իմ կարաւանս և մարդիկս։ Եսոյն օրումը վրան շինե-
ցին, թուղթ բերին ինձ մօտ և ահա նամակ իմ զլում
քեզ վերայ, իսկ 25 օր շարունակ, ես ոչ թէ մի վրան
չ'ունեի, մի բեռն էլ չ'կար հետո, ես ինձ հետ վեր
էի առել միայն երկու շապիկ, և կերակուրս էր
խորոված միւ (լիւլաբարար — սահլակ)։ Ամէն օր
անձրև էր գալիս և ես բացօթեայ դաշտի մէջ էի,

բայց վասոք Աստուծոյ ես առողջ եմ: (*) | Կմ ոտներս
միշտ թաց էին լինում և միայն արհգոակի ջերմուքն էլ ն
չորամում (ցամաքում), որովհետեւ վորխնորդ ունչչկայ:

“Եհա, իմ բարեկամ, Աստուծո ինձ այս նեղու-
թիւններին փոխարէնն հասցրուց գործս շատ լաւ ան-
ցաւ և թագաւորը շատ շնորհակալ կլինի,,:

Թաշնամին զարմացած գորով Մայիսի 30 և 31-ումն
եղած հարուածների վերայ, երկար ժամանակ գուրս չե-
կաւ Ըումիցը, բայց յետոյ լսկով, որ Ըումիցը Տա-
ճիկները մեծ զօրքով դալիս են ՚ի յօդնութիւն պաշա-
րեալ Արդիսարիայ բերլին, Կնեալ Մատաթովը հրա-
ման ստացաւ Յունիսի 16-ին գիվրզիայովն գուրս
գալ գնալ ՚ի յօդնութիւն Գններալ Արասովսկուն,
որոյ համար և գրումէ այս յետազայ խօսքերն.

22 Յուլիսի ՚ի Անգլոարիա,

“Ես այս ամսի 15-ին նամակ եմ զրել քեզ վերայ
Ըումիցը, բայց այժմ զրումեմ Արդիսարիայիցը: Եա-
մակիցը յետոյ, ես հրաւիրուած եի Գրաֆ Դիրիչին
մօտ, որ տալով ինձ թագաւորի հրովարտակը հանդիրձ
ինձ պարզեալ Ծեքսանդրիսան ժայռաւինի (Լենտա)
հետ, սկսաւ շնորհաւորել վայն՝ նոյնպէս և Գրաֆ Տօլը:
Նոքա շատ ուրախ էին, որ թագաւորը ինձ այլպէս շուտ
վարձատրեց Ըումի մօտ արած երեկի քաջազործու-
թեանս համար: Մի և նոյն ժամումն էլ ես հրաման

(*) Կնեազը չկամենալով տիսրացնել այն անձին, առ որ աւղղած
է այս նամակը յիշումէ, թէ առողջ է ինքն, — բայց երկմը-
տութիւն չկայ, որ այս 25 օրուայ ճանապարհորդութեան ժա-
մանուկը նա իւր հետ կից ունենալով վերցիշեալ ամէն անյար-
մարութիւնները, շատ վատ ներգործութիւն եր ստացել իւր
առողջութեան վերայ:

օտացայ դիվիզիայովը գնալ Ախղիստրիան, Արասովսկուհի
օգնելոյ համար: Ես մի և նոյն գիշերը դուրս գալով,
ամսի 18.ին հասայ այստեղ. առաւտոր Փաշաները
պարիսպների վր դուրս գալով, սկսան խօսակցուի ա-
նել և 19.ին բերդը անձնատուր եղեւ և մենք՝ գերիները
Որուսաստան ուղարկելուց յետոյ, մինչեւ երեք օրը կը կին
կ' գնանք դէպի Ըումլան, որ գլխաւոր արմիային հետ
միաւորուինք, :

Մի և նոյն ամսի 28.ին Կնեաղ Աատաթովը յետ
գոռաւ զիվիզիայովն դէպի Ըումլան բերդը և միացաւ
զլիաւոր արմիային հետ:

Մի քանի ժամանակից յետոյ Գմներալ-Գելդմանշալ
Գրաֆ Դիբիչը զլիաւոր արմիայովն յառաջ խաղաց դէ-
պի Ղամչիկ՝ որ Շալկանն անց կենաց: Գմներալ Ար-
սովսկին հետևակաց Յ-րդ Կօրպուսին հետ եր մնացել,
որ Ըումլի մօտ եղող թշնամեոյն վերայ նկատողու-
թիւն ունենայ: Այն աեղ էլ բազմաթիւ հեծելազորք
ժողովուեցան, որոց զօրավարութիւնը յանձնուած էր
Կնեաղ Աատաթովին: “Երբ որ Գրաֆ Դիբիչը Շալ-
կանու միւս կողմն անցաւ, գրումէ Կնեազը, ինձ Արա-
սովսկուն հետ ՚ի միասին թողեցին, որ Ըումլի մօտ եղող
Աէզիրի շարժողութեանցը վերահասու լինինք. Գրաֆը
մեղ հետ բաժանու ելիս, այսպէս ասաց.” Զեղ թողով
այդ տեղ, ես միամիտ և հանգիստ կլինիմ, իմանալով
որ դուք թշնամեոյն թոյլ չէք տալ դալ դէպի մեք
հաղորդակից գօրքն, : Յետոյ շարունակումէ Կնեազնիւր
նամակն այսպէս. “Մեր զօրքը Շալկանու միւս կողմին
հանգիստ կանգնած են և ասումեն, որ Տաճիկները այն
կողմին էլ ամենեին զօրք չունին և ինչ որ էլ կայ, ամէնքը
Աէզիրի հետ ՚ի միասին գտնվումեն Ըումլիումը, ուրանօր

ընդ ամենն կ0 հազար մարդ են, և դրանք ել այնպէս վախեցած են, որ մեր գորքը Բալկանու միւս կողմն անց- նելուց յետոյ, երեք անգամ մեք մօտեցանք Շումի պատերին, նոքա ամենելին չ'հարմարձակեցան դուրս գալ մեզ շետ պատերազմելու: Առք կէս օրին հեռացանքել: Ահա, թէ՝ նոքա որքան երկչոտ են դառել, և բոլորովին երկչոտ, :

Եմենելին չ'ը տրամել Անեաղը, որ ինքն չ'կարողացաւ հաղորդակցութիւն ունենալ Բալկանու միւս կողմն գնալոյն, բայց ինչպէս հաւասարիմ զօրական՝ նա հասկա- նալով, որ զօրքի հոգին կարգապահուին (աւուգանա) է, յանձնառու եղեւ թէպէտե սիրտը կոտրած, կատարելիւր պարտքը Շումլա բերդին մօտ:

Երբ որ Գանիբալ Արասովսկին հեռացաւ Շումիցը զեպի Խանիբազարը, Ազգիրը հեծելազօրք ուղարկեց, որ հեռանողներին ետքիցը դնան, բայց Անեաղ Մատա- թովը թողեց Տաճիկներին Խանիբազարիցը 3 $\frac{1}{2}$ վերսա հեռու և հեռակաց 3-րդ Կորպուսին շարժողութիւնը պահելով միջոց տուաւ նրան օդուաւէտ բանակապայլ ընարել:

Յուլիսի 14-ին Անեաղը գտնվումէր բոլոր Արագուսի ընդհանուր գեմօնստրացիայումը Շումի փերսց, բայց Օ- գոստոսի 5-ին նա գտնվումէր Մադարա գիւղի մօտ ընտ- րեալ նոր բանակապայրում:

Յուլիսի 28-ին Անեաղ Մատաթովին մօտ մի գեսպան (ոսթամենտեր) եկաւ, որ Աէզիրիցը նամակ էր բերել Պալսաւոր հրամանատարին վր և յայտնեց, որ այդ նամակն զրածէ Սուլթանին կամքովը և իւր մէջ պարունակումէ խաղաղուել չամար առաջարկու ինք: Այս նամակը իսկը ուղարկուեցաւ Գեներալ-Փէլդմարշալ Պրաֆ Դերեչին:

վերոյ: Եւ միւս օրը Աէզիլն ուղարկեց կանոնաւոր զօրաց գնդապետին, խնդրելով՝ որ ՎնեաղՄատաթովին և Տաճկաց Արմային վերայ Գլխաւոր-հրամանատարի միմեանց հետ այցելութեան անելոյ համար մի ժամորոշէ: Վնեաղն չէր ուզում, որ առանց զլիսաւոր հրամանատարիցը հաւանուի ստանալոյ, տեսնուի Աէզիլին հետ, բայց Գնեներալ Արասովսկին կամենալով Աէզիրի միաքնիմանալ չէր ուզում ուշացնել այդ այցելուին, ուստի և յորդորեց Վնեաղին գնալ և նրան հետ տեսնուիլ: Օդոստոսի առաջինին Վնեաղ Մատաթովը ուղեկից ունենալով պատուարժան ձիաւորներ՝ (աօթեալ հօնութիւն) գնաց նշանակեալ աեղը, ուրանօր Աէզիլն էլարդէն սպասումէր նրան իւր մեծաշուք պալատականներովը: Տաճիկներու մեծ հիացմամբ մարդկ էին տալիս Վնեաղին հետ եկած փայլուն ամբոխին վերայ: Ըումի մօտ գանուող բոլոր հեծելագօրաց բազմաթիւ զփցերները զոյն զգսյն զգեստներով զարդարուած և նոյն իսկ ուղեկից ձիաւորներն՝ որ բոլոր հեծելագօրքեցը մէկ մէկ ընտրուած էին, մի զեղեցիկ կարդ կամ զասաւորուի էին կադմում հանդերձ երփներանդ զբօշտկներով (Փայուշը): Բաց յայսմանէ Աիւքարները սանձահարեալ բերումէին Վնեաղին պատկանեալ Պարաբաղու բարձրահասակ մատակ ձիաներից մի քանիսը, որ բեռնուած էին հարուստ և մեծազին կարպեաներով:

Այս այցելութիւնն Աէզիրին համար շատ քաղցր էր և հաճոյ առաւել նորա համար, որ ինքն ազդաւ Արաստանցի գոլով, Վնեաղին իւրեան հայրենակից էր համարում: Շաշիղը երեխայութեան ժամանակը գերի էր ընկել և վերջին ժամանակներումը, զանազան պաշտօնաներ ստանալուց յիսոյ, վերջապէս հասաւ մինչև անշամբ Գլխաւոր Աէզիրի յաստիճան:

Բար սովորութեանն Արևելացւոց ժողովրդեան՝ Թեմանց սիրոյ բարեներ տալուց յետոյ, յորս Տաճկաց Զօրավագըն Կնեազին հետ շատ բարեկամութեամբ էր վարփում, ապա սկսան նոքա խորհուրդ անել Խաղողութիւն համար: Կնեազ Աատաթովը՝ որ շատ սուր դիտողութիւն ունէր, իմացաւ խիոյն, որ Տաճկաց Զօրավագըն մեծ յօժարութիւն ունէ Խաղաղութեան:— Թշնամոյ զօրքը յուսահատուել էին, փախուսար շատացիւեր և Տաճիկները վերջապէս համոզուել էին, որ չեն կարող Որուսաց հետ պատերազմիլ ու օգուտ ստանալ. վասնորոյ Կնեազ Աատաթովն ան հիմն չ'էր կարծում, կամ դատում, որ հասաւ Որուսաստանի համար օգտակար Խաղաղութեան ժամը: Գմներալ Արասովսկին շտապեց յայտնել այս խորհրդներին մասին Գմներալ Ֆէլդմարշալ Գրաֆ Դիբէչն:

Օգոստոսի Յ-ին Գյիսաւոր Աէզիրն կամենալով, Կնեազ Աատաթովին հետ բարեկամական յարաբերութներ աներով շահուիլ, մի նամակ գրեց նորա վերայ խնդրելով, որ նա բարեխօս և գործակից լինե Խաղաղութիւն հաստատելոյ մասին: Այս նամակը շուտով ուղարկուեց Գմներալ Ֆէլդմարշալ Գրաֆ Դիբիչն: Սայելով այսպիսի խաղաղ տնօրինութեանցը, դորս պատերազմների մէջ՝ մանաւանդ Արևելացւոց ազգերին հետ, պէտքէ պահպանել միշտ զէնքի յաջողութեամբը, Կնեազ Աատաթովը (Օգոստոսի Յ-ին, յուսաբացին երկու դաղախի գնդերով և Գրաֆ Աիտհէնշաէյնի Գուսար զնդովը, Էռումի պարիսպների տակին հէնց՝ 150 Տաճիկ խոտաբեր զինուորականներ (Փորաշեր) բռնից և շատ ձիաներ ու ուրիշ անասուններ: Տաճիկները այնպիսի վհատութեան մէջ էին լնկել որ մինչև անդամ չ'էին համարձակվում բերդիցը դուրս դալ իւրիանց

ազատաման համար և միայն մէկ քանի անդամ
թնդանօթ արձակեցին։ Արանից յետոյ մեր զօրքը
շատ սաստիկ շրջապատեցին Շումլան։

Իսյց Շումի մօտ մնացած Կօրպուսը ոչ թէ միայն
պարտաւր էր նկատողուի ունենալ այդ ամրացեալ բանա-
կավայրի մէջ մնացած թշնամոյ արմիային վր, այլ և պար-
տաւոր էր ամ հնարք'ի գործ դնել, որ Սկզբինու Փաշայի
զօրքը չմիանան Տաճկաց գլխաւոր արմիային հետ, որով և
բերդապահ զօրքը բազմացներով՝ թշնամոյն մի հնալք
ան, որ կարողանայ առաւել վստահ գործողութիւններ
անել։ Իսց յայսմանէ հարկաւոր էր, ևս՝ չթողել
բերդը տանել ուտելեղէն պաշարներ և ուրիշ կարիք-
ներ։

Մնեալ Վատավթովը կամենալով, որ հետագոտու-
թիւններ անէ թշնամոյ քամակիցը և չթողէ, որ Թափր-
նովիցն ու Գումայիցը ուտելեղէն պաշար տանեն Շում-
լան, իւր զիկիզիայի 2-րդ բրիկադովն և Ռուզի ուլան-
ների գնդովը Օզոստոսի 25-ին բանակիցը դուրս եկաւ
և 26-ին Ռուշիկի ձանապարհին վերսց դրաւ իւր բա-
նակավայրն։ Վատավթովը շրջակայ զիւղերի բնակիչնե-
րիցը ճշմարիտ տեղեկութիւններ ստանալով, որ ձանա-
պարհին Ռազկրտղիցը և Ռուշիկիցը ուտելեղէն պա-
շարներ չեն անփում, զօրագնդովը ամսի 27-ին գնաց
զէպի Աստակիոյ գիւղը և բանակը դրաւ Թափրնովիցը
զէպի Շումլան և Գումայը տանող ձանապարհին վե-
րայ։ Իսց զօրագունդը հասնելով այս տեղ, տեսան
որ՝ կարաւաններ կան զէպի Շումլան ձկուած, ուստի
և յարձակուեցան շուտով նոցա վերայ և շատ սայլեր
առին՝ լի ուտելեղէն պաշարներով (որօնաւու)։ Մի և
նոյն ժամանակը Գրուսարների էսկադրոնը գնացել էր
զէպի Գումայ քաղաքը, որոյ բնակիչները հաց ու աղ-

առած բարեկամական սիրով գուրս եկան նոցա առաջը
և պատգամաւոր ուղարկեցին Անեազ Առատաթովի մօտ
յայտնելով, որ իւրեանց միտքն խաղաղութիւն է և
չնազանդութիւն:

Այս է Կսաղելիցիայի միջոցումը, մեր զօրաց գնալոյ
Ճանապարհին դանուուղ զիւղերի բնակիչը, ողեորուած
գոլով Անեազին նոցա հետ քաղցր փարփողութն և
առ հասարակ Ոտուաց գորականների այն խոստմուն-
քովը՝ որ նոքա անգէն մնալով հանգիստ իւրեանց անե-
րումը, ոչ մի տեղից մի նեղութիւն չ'են ստանալ և
իրանց գոյքն կ'մնայ իրանց՝ ամբողջութեամբ, լիա-
կատար հաւատարմութեամբ դուրս եկան Անեազին ա-
ռաջը հաց ու աղով և պտուղներով, և իւրեանց տնա-
յին բոյսերը բերումէին բանակը վաճառել շատ չափա-
ւոր զիներով։ Գիւղերի զինաւորները 15 և 20 վերստ
հեռաւորութիւնից գալով պաշտպանողական թղթեր էին
խնդրում Անեազիցը, որ և անյասկաղտալիս էր։ Անա-
կիչների առ Ոտուն ունեցած հաւատարմութիւնը մին-
չե այն աստիճան հաստատ էր, որ զօրքի յետաղարձու-
թեան ժամանակը, յորում էլի հետազօտութիւններ էին
անփում, նոցա անասնոց հօաերը արածումէին նոյն
իսկ Ճանապարհներին մօտ։

Անկարելի է այս տեղ ուշազրութիւն չ'գարձնել
Ոտուաց Գիներալի այն բարոյական յատկութեանը փե-
րայ, որ իրան համար անմահ յիշատակ է թողել, ոչ թէ
միայն իւր զինուորական մեծագործութիւններովը, այլ
և իւր խաղաղ քաջութիւններովը։ Անեազ Առատաթովը
ամենայն կերպ աշխատումէր անկեղծութեամբ, քաղց-
րաբարոյութեամբ և մարդասիրութեամբ հաւատարմուի
ներշնչել հաշտ բնակիչներին մէջ, որոց վերայ համա-
րեա թէ միշտ անմեղ տեղն է բնկնում պատերադմի

Տանկութիւնը։ Տաճկաց լեզուազիտութիւնը շատ էր օգնում Անեազին։ “Եա ինքն՝ դօրազնզի զիհաւոր լինելով, դարձարուած իւր գերազանց ծառայութեան համար ստացած բազմաթիւ նշաններով, բնակիչներին հետ Խօսութիւն նոցայատուկ լեզուաւը. արդեօք կարելի՞ էր, որ նորա խօսքերը համոզիչ ներգործութիւն չ'ունենային։ Այս յիտագայ հանգամանքները բոլորովին հաստատումէին Անեազին նոցա մէջ ներշնչած հաւատուրմութեան ճշմարտութիւնը. բնակիչների անշնչը և դշյըը մնացին բոլորովին անվնաս և ամբողջ, զիւղացիքն էլ այն կողմիցը Ոխուսաց բանակը բերած բոյսերին համար իւրեանց ուզած վարձը ստացան։ Այսպիսի վեհանձն վարփորութիւնը պետք էր, որ Տաճիկների մէջ բնակեցնէ ոչ թէ միայն յարգանք առ Ոխուսը այլ և զարմացումն — որովհետեւ այս այնպիսի կողմն էր, ուրանօր զիւղացիքը խաղաղ ժամանակնել, իւրեանց սրաշտպանողուն համար ժողովեալ գօրքերիցը՝ ենթարկվումէին ամենատեսակ նիդուների և բոնութիւնների։

Տաճիկները այս երկու դօրաց արարքների զանազանութիւնը առաջի աչաց զնելով, տեսան որ Ոխուսաց կողմն առաւել լաւէ։ Տաճկաց Գնդապետներն էլ էին զգում այս։ Երբ որ Ազգիանապօլիսը նուաճելից յետոյ, խաղաղութեան խօսակցութիւններ սկսուեցան և վերջացան Շումի պատերազմական գործողունները, Գլխաւոր Անգիր Հոռուսէյին Փաշան՝ որ Եշանիչարների երեելի խորատակիչներ, և “Եաշխդ-Բեյը՝ նորա հաւատարիմ” աստիաձանաւորը, Արասովսկիյ Գնեներալներ հետ այցելութիւն անելոյ ժամանակին, այսպէս էին ասում. “Աստուած Ոխուսաց առ յաղթեալներն ունեցած վեհանձնուն համար է Չ'ը գէնքին յաջողուի պարդեռում։ Եթէ մեք

լինէինք Զեր տեղը, երբէք չէինք կարող այդպէս փառուիլ, Ա՛ և նոյն ժամանակը նոքայացանեցին, որիրանք երախտապարտ են Կնեազ Սատաթովին՝ նորա բարեկամական վարդողութեանը համար բնակիչնորին հետ, որ ցոյց տուաւ նա թռիբնովի ճանապարհի էկ սպեղիցիայի ժամանակը:

Կնեազ Սատաթովը այս էկսպէզիցիան վերջացնելով, Օգոստոսի 29-ին յետ դառաւ և 31-ին հասաւ բանակը: Բայց նրան սահմանուած չ'էր տեսնել խաղաղութեան հանդէսները, որովհետեւ անցեալ ձմեռնիցն արդէն Կնեազը սաստիկ ցաւ էր զգում իւր ձախ կողքումը, որ ցրտահարութիւնից էր պատճառել և թէպէտ օր ըստ օրէ առաւել սաստիկանումէր, բայց վեհանձնութիւնմբ տանումէր նա այդ ցաւը, կամենալով մինչեւ ՚ի վերջը ծառայել այդ կամպանիումը: Կնեղութիւնները, հանգստութիւնից զրկուիլը, պատերազմական հոգսերը, նրան բոլորովին տկարացրել էին և զօրութիւննից քցել: Կարելի է հաստատ ասել, որ այս վերջին էկսպեղիցիան զրկեց նրան իւր վերջին ուժիցը: Կնեազը իւր մէջ մի դառն նախազգացութիւն ունենալով, շատ սրտեղած էր, նա՝ կարծես թէ, ակամայ էր դուրս գալիս իւր բանակիցը և այս պատերազմակնացութեան բոլոր ժամանակը, նա տրտում և շատ տխուր էր, որ ընդդէմ էր իւր սովորութեանն, եղանակն էլ խոնաւ էր և ամպօտ, զօրագունդը չափիցը դուրս երկար ճանապարհորդութիւններ էր անում, այնպէս որ նա միանգամ 24 ժամու ընթացքում 80 վերստ ճանապարհ գնաց: Ամսի 31-ին բանակին 5 վերստ մնացած հրացանութեան ձայն լունեց: Կնեազը պահեց զօրքը և մի պատգամատար (օրգանարեպէ) զինուորական ուղարկեց իմանալ, թէ այն ի՞նչ է նշանակում:

ԱՅթէ Տաճիկները յարձակմունք են արել, ասաց Ար-
նեազը, մեք սաստիկ հարուած կ'հասուցանենք նոցա-
դօրաց թեին և կ'հեռացնենք Շումիցը,,,: Բայց այս
տեղ սկսաւ նա զանգատել իւր ձախ կողքի անտանելի
ցաւին վերայ, վեր եկաւ ձիիցը և պառկից սփռեալ
եթի՛ Ճաղի (համունջի շնորհ) վերայ: Պատշաճաւոր
դինուորը յետ դառաւ և յայտնեց Անեազին՝ ասելով “Թէ
այն մեր հիտեակ զօրքն է, հրացանուի է անում,,,: “Այ
մեծ նելութեամբ նստեց ձիին վերայ և մտաւ բանտկը:
Անպատճերի 2 ին յանկարծ սկսաւ նորա թերանիցը
սաստիկ արիւն թափուիլ և երկու օրից յետոյ՝ Անպատճա-
րերի 4. ին, նա մեռաւ: Պատերազմը կարծես թէ պաշտ-
պան էր նորա նուազեալ զօրութեանը, բայց պատերազմը
մերջացնելից յետոյ, Անեազն ել փոխուեց մէւս առա-
ռել լաւ աշխարհ:

Անեազ Մատաթուիի մահը մեծ տրտմութիւն պատ-
ճառեց Ոտուսաց արմիային, սուգ արին նորա վերայ
իւր ամէն ստորագրեալ մարդիկը և այն թշնամիքն ան-
գամ՝ որոց վերայ նա միշտ յաղթող էր զանուել, ափ-
սոսումէին նորա համար: Այն կիանքը որ լի էր հրա-
շալի քաջագործութիւններով, պէտք է ամփոփուէր առ
նակնկալ հանդիսիւ, և Տաճիկներից քաջագուները,
այն է՝ Ռ. շիդը և անօւանի Հիւսէյինը, որ Անեազ
Մատաթուիին փոանգաւոր թշնամի էին համարում, ’ի
նշան տարօրինակ յարգանաց առ Հերոսի հոգը, բացին
նորա համար անառիկ Շումի դաները:

Անեազի մարմինը բանակիցը մինչեւ եկեղեցին Յ րդ հե-
տեւակ կօրպուսի բոլոր օֆիցերներն էին տանում փո-
փոխակիւ Շումի գաներին մօտ այս տիսուր գնացքը
կանգ առաւ: սկսուեց եկեղեցական երգեցողութիւնը,

դորքը իւսնարհեցրին նորա առաջին զրօշակները և զէնքը, թնդանօթաձիգ զօրքն շատ թնդանօթներ արձակելով քնծայիցին նորա գերեզմանին վերջին հողեղէն պատիւը, զաները բացուեցան և ալս ախուր կնացքը քաշաքը մտաւ: Տաճիկները բոլոր ձիւորներիցը թողեցին 'ի ներքո մտանել միսյն Օրանու գնդի Արքայորդւոյ Գառսարների խումբը (ՅԵՅՈՒ) հանդերձնոցա փողարներովը (ԵՐԱԿԱ):

«Քրիստոնէական փառաւոր թաղման տեսարանը՝ որ անսովոր էր Տաճիկներին համար և Ոռուսաց Շումին մէջ երևիլը՝ ուրանօր զեռ մտած չ'էր երբէք մի զինավառեալ թշնամի, այս ամէնն ՚ի միասին հիացնումէին բնտկիչներին և զրաւումնոցա սիրտը. ժողովուրդը խուռան բազմուրյաջ էր մատում, Տաճկաց զօրականները շտապումէին տեսնել, թէ որպիսի անձն էր նա՝ որ այնքան դարհուրելի էր երեւումառաջ նրանց: Պատուհանները, առանիքը, տների ցանկերը (ՅԱՅՈՒ) լցուածէին կանանցով, որք մուանալով իւրիանց կողմի այն խստուք պահպանուած սովորութիւնը և առ Ոռուսն ունեցած տաելութիւնը, վեր էին առնում իւրիանց ծածկոյթները, որ լաւ տեսնեն այդ սրտաշարժ և շքեզատեսիլ տեսարանը, — որ շատ անսովոր էր նոցա համար: Խորին հանդարսութիւնը և ընդհանուր լուսիլ երբեմն երբեմն ընդ միջաշատիւմէին փողերի տխուր ձայնովը:

Այս հանդիսաւոր յուղարիկաւութիւնը կամաց կամաց շարունակուելով Շումինեղ փողոցներովը մեծ զժուարութիւնամբ հասաւ և մինչև Ա. Յաղթական Գեօրգիի Քրիստոնէական եկեղեցւոյն շրջապարիսպը, ուրանօր և հողին յաձնուեց վստահ զօրականի մարմինը: (*)

(*) Վերջին ժամանակն երրումը նորա ամսասինը Կորին Շառձրութիւնից հրաման ստանալով բերել տուալ Վնեալ Վաստաթովի մարմինը Ոռուսաստան, որ ամիսիուած է Եւլուսանդը Վելսկու հովանու հովանու մենաստանում:

Անեաղ Մատաթովն այսպէս վերջացրուց իւր կեանքի ընթացքը և այն ոչ թէ պատերազմական դաշտի վերայ, ուրանօր վտանգը կարծես թէ խնայումներ նորա կեանքին, կեանքին՝ որ անդադար վտանգի էր ենթարկուած, այլ խաղաղ մահճի վերայ, երբ որ պատերազմի նեղութիւնն ներն արգեն վերջացել էին և յաղթեալ Օսմանեան Պառուն խոստովանումներ Ոչուսաց գէնքի յաղթողութիւնը: Բարդը այսպէս էր վճռել Անեաղին, որ հանգիստ վախճան ունենայ թշնամւոյ հողմումը (երկրումը), որն վկայ էր նորա երիտասարդական հասակումը ցոյց տուած քաջութիւններին և տղամարդութեան մէջ արած փայտ գործողութիւններին: «Եորա մարտակիցները անկեղծ տիրութեամբ և յաղթեալ թշնամիքը ՚ի խորոց սրտի յարգանքը ընծայելով յուղարկաւորեցին նրան զագաղը մինչեւ զերեզմանը:

Այս էլ զովասանական է և այս էլ մի վարձատրութիւններունց և պատերազմների մէջ անցկացրած կեանքի փոխարեն:

Մեր միտքը դարձնելով նորա զնացած ձանապարհներին վերայ, նորա արած պատերազմներին վերայ, նորա ունեցած բնաւորութեանը և յիշողութեանը վերայ, կարսող ննք համարձակ ասել այս յետապայ դատողութիւնն նորա համար. թէ ՚ի բնէ՞ էր նա զօրական ստեղծուածու չնայելով՝ որ լուսաւորութիւն քիչ ուներ, այսու անապնիւ պարզեատրեալ զոլով նա մի տարօրինակ պարզ և նուրբ խելքով, ազատ կամքով և վատահութենով, կարողացաւ փոխարինել իւր սրտմիտ և յստակ դատութիւններունքը այն զիտութիւնները, որ ուրիշ մարդիկը հազիւ թէ կարողանումնեն ուսմամբ ստանալ: «Եա մտերիմ նկատողութիւնն ունենալով՝ չնարուելիք, ոչ պատերազմական բանակավայրը ընտրելոյ ժամանակը, և ոչ էլ թշնամւոյ բանակավայրի զօրութիւնը

զիտելումը։ “Առամտադրեալխորհների պարզ կատարումը
գարմացնումէր շատ անգամ նա և նրանց, որոց նա ար-
գեն ծանօթ էր։” Առա համար բաւական էր չենց
միայն մի առ երեսս վերահայեցողութիւնն ունենալ մի
նոր կողմի, այնուհետեւ նա բոլորովին քաջ իմանումէր
այն տեղերն։ “Ա արդեն հասկանումէր հակառա-
կորդի բնաւորութիւնը, նորա հետ մի քանի անգամ
պատահելով։” Աս ամենեին չ'էր սխալվում նշանակե-
լով այն կետը, ուրանօր հարկաւոր էր թշնամւոյն գի-
մազրաւ լինիլ, կամ ուրանօր հարկաւոր էր սաստիկ
հարուած տալ նրան։ Այն վստահ շարժողութեան բու-
պէն, որ նա միշտ առաջուց էր իմանում, պատրաստ էր
գտնում նրան միշտ։

Դայց շատ գնդապեսների մէջ են պատահում երեւա-
կայութիւնների և հայեացքի անխար զիտաղութիւն,
մտաց և կարծեաց յստակութիւն և մնում անօգուտ։ Առա
բաւական են խորհրդականի համար, բայց անբաւական զու-
րավարի համար։ Մատաթովը նոցա հետ ուրիշ հար-
կաւոր որակութիւններ էլ ունէր միացրած, այսինք է՝
զիմաց անվրով քաջասրտուի, որ ոչ մի վտանգի ա-
ռաջ էլ գոյնը չ'էր կորցնում, սառնասիրա անտարբե-
րութիւն, որ ամենեին չ'էր շփոթփում ոչ մի անակ-
նունների զիպուածով և որ ամենիցը հազուագիւտն է՝
այն բարոյական արիութիւնը, որ ոչ մի համապատաս-
խանատութիւնից չ'էր վախում։” Աս վստահ էր իւր
վճիռների մէջ, նա բնականիցը գուրս սրութեամբ
կատարումէր իւր զիտաւորուիները և այդ սրութիւնն՝
որ պատերազմական գործերի մէջ զիտաւոր զօրուի ունի
և պատերազմի ճատարապետներին, այն է՝ Աստղօլուսիւմէր
(Ուուսաց) Առվորովի որոշել յատկուին է, Անեազ Մատա-
թովի ամ զործառնուիների յառաջադիմութեանց մէջ

Հաւաաարիմ երաշխաւորն էր: Յօշնամին անզամ հիսած նորա այդպիսի սրութեանն վերայ, չնայելով իւր բազմաթիւ և ուժեղ զօրքին, օգագաւէտ տեղերին կամ զենքերին, կորցնումէր լորանցով շահուելոյ կարողութիւնը, իւր զօրքը միաւորելոյ: Համար կարևորը միջոցը և այն անձնապատանութիւնը, առանց որոյ անկատելի է յառաջադիմութիւն ունենալ:

Այս եզրակացութիւնը (թէ և չուզենանք էլ), իրանք հենց երևումն մարդոյ մասց առաջին, երբ որ քննումնք Կնեազ Մասաթուիի ցոյց տուած յառաջազիմութիւնները՝ անհամեմատ բազմաթիւ զօրքի դէմ, կարեոր հետեւանքները՝ զորս հասցնումէր նա շատ հասարակ հնարքներով (միջոցներով), տարօրինակ փոքր կորուստը՝ որ նորա զօրքը կրումէին ամենազօրել սպատերագմների մէջ: Մատազահաս ժամանակը նորա ուրախամիւրա բարքը առ ինքը գրաւեց շուտով ընկերների սերը, իւր ստորագրեալների հետ քաղցրութեամբ էր վարփում նա, սաստիկ կարգապահութեան ժամանակը՝ սիրումէր դինուորներին, Ծիրմեռանդուր հոգացողոթիւն էր անումմիշտնոցա վերայ, վառումէր նոցա հոգին, իւր քաղցր վարփուրը ևս առաւել բազմացնումէր նոցա բարյական զօրութիւնը, և ահա այսպիսի քաղցրաբարոյ վարփուրներովը կարողացաւ նա բնակեցնել նոցա մէջ ապաւինութիյնքն, որ էյառաջադիմունց պատճառը: Իւր ամէն զործառնունց մէջ բազդաւոր լինելով, նա միշտ հաւատումէր իւր բազզին, որ երբէք նրան չէր խարում: Այսպիսի հաւատ իւր նշանակութումն (իւր տեղն) շատ անգամ են նկատել մեծ զօրավարների մէջ: արեանցի կերպով քննիչները ծիծաղումն սորա վերայ, բայց առաւել խորագիտները մեծ յարգանք են տալիս սրան, վասն զի սորա չետ միացած են թէ ճշմարիտ զօրութիւնը, թէ զօ-

բռւթեան զգացողութիւնը։ Յաւելացնենք և այս, որ
նա Ոտուաց զինուորի հոգւոյն վերայ և նորա դօրա-
վարի հետ ունեցած համակրութեանը վերայ հաւատ-
ուներ, և սորա համար էլ նորա առաջնորդութեան
ներըց եղիալ զօրքը ուրախութեամբ յառաջ էին զնում,
այսպէս ասելով։ “Անք իմանումնք, որ նորա հետ
մի մարդ անդամ ՚ի զուր չի կորչիլ,,”

Անեալ Ատաթօվքը իւր կապիտանութեան աստի-
ճանիցն սկսած, իւր կուրծքովն սատցաւ ամէն գերա-
դանցութիւնները, ամէն պարզեները. այսպէս էր ասում
նա ինքն, և այսպէս էլ կասեն այն ամէնքը՝ որ գիտեն
նորա պաշտօնը։

Աս ապրեց և մառաւ իրքե հաւատարիմ որդի իւր
այլրենիքն, իրքե անփոփոխ հպատակ իւր Ուա-
գաւորին և իրքե հաստատ հոգացող Ուուսասանի
փառաց համար։

Յպաղըուած է — — — Պէտք է կարդալ։

- | | | | |
|-----------|------|---------------------|---|
| Էջ | առաջ | | |
| 115 և 116 | — | ապար | — կամ թէ — Ահար: |
| 120 | — 10 | Կնեներալ-Ռուդզելիչի | — Լիակատար Գնեներալ- |
| | | Ռուդզելիչի։ | |
| 124 | — 10 | Կնիանորրիցը | Կնեներալ — Լիակատար Գնեներալ։ |
| 124 | — 18 | և ջումայ ժամանակը | ման եմ դալիս — և զնու-
մամ ջումայը Արքայական և այլն։ |

- Князь — — — **Արքայալուն իշխան**
Генералъ. — — — **Շնորհանուր կոչումն բարձրագոյն
զինաւորաց՝ի զօրու**
Майоръ — — — **Երկրորդ աստիճան շտաբ-օֆիցերի:**
Генералъ-майоръ — **Օվնուորական աստիճան է-րդ կար-
դի:**
Генералъ-лейтенантъ **Օվնուորական աստիճան 3-րդ
կարդի:**
Генералъ, отъ инфантъ **Օվնուորական աստիճան 2-րդ
տերին կարդի, լիակատար Գններալ:**
Капитанъ — — — **Ստափան աւագ (օբերъ) օֆիցերի
՚ի հետեւակ և ՚ի գրակուն-հեծելա-
զօրաց գունդս. զլաւաւոր ՚ի վերայ
նաւահանգստեան կամ Տովակնաց
նաւու, նաւապետ:**
Офицеръ — — — **Շնորհանուր կոչումն ՚ի Ոռուսաս-
տան՝ քաղաքական և զինուորական
աստիճաննաւորաց՝ի 14-րդին մինչև
շ5 կարգն. սպայ, պաշտօնատար
զօրաց:**
Драгунъ — — — **Զիաւոր կարգաւոր զօրաց, ուսու-
ցեալ այնպէս, զի ՚ի դէպս հար-
կաւորութեան կարասցէ հասուցա-
նել զօդնութիւն նա և հետեւակաց:**
Штабъ — — — **Ստափանք կառավարչութեան զի-
նուորական գործոց և զինուորաւա-
սուցական գործարանաց:**
Квартирмейстеръ — **Ստափաննաւոր կարգեալ ՚ի զօրս
առ ՚ի պատրաստել զինակարանս
վասն զօրաց:**

- Адъютантъ — — ОФիցеръ ор գտանի 'ի զինուուրական կառավարութիւնս և առանձինս օմանս վասն գրականութիւնն և զանազան յանձնարարուեց, հրամանատար գօրապետաց:
- Генералъ-адъютантъ Վզիւտանտъ ор գտանի առ թագաւորս յաստիճանի գեներալուեն:
- Кампанія — — Շամանակ դործադրեալ 'ի զօրաց 'ի պատերազմաղնացութիւնս կամ 'ի գործողուիս ընդդէմ թշնամեոյ:
- Корпусъ — — Վշանձին մասն արմիային, որ կարէ մտանիլ 'ի դործանկախ գայլոց մասնց արմիային.
- Армія — — Ընդհանրապէս կոչի զօրք տէրուեն կարեոր զօրագունդք բազկացեալք 'ի հետեւակաց, 'ի հեծելոց և 'ի թնդանօթաձիգ զինուորաց և.
- Гвардія — — Վաւագոյն զօրք 'ի տէրուեն, որք ունին զառանձին իմն նախապատութիւն:
- Лейбъ-Гвардія — — Գավարդիա՝ որ պաշտպանէ զանձն Վայսեր, թիկնապահ զօրք:
- Пропорщикъ — — Ունող զառաջին աստիճան 'ի զինուորականս:
- Поручикъ — — Օինուորական աստիճանաւոր 12 կարգի:
- Гренадеръ — — 'Ի հնուուն տուեալ էր այս անուն զօրացն այնոցիկ, որք պարտաւոր էին արձակել զգրանատո 'ի պատերազմի և ընտրեալ լինէին Ա'ի բարձրահասակէ 'ի հսկայազօր արանց իսկ այժմնշահակէ զընտրել մասն զօրաց:

Граната	—	—	Դատարկ գնդակ ըուզունեայ լցնող վառօղիւ, որ հաղորդակից լինի հրոյն միջնորդութեամբ առանձին իմն յօրինեալ խողովակի (трубка)
Чугунъ	—	—	Չուզուն (Թասունունին երկանէ ընդ ածխածնոյ):
Картеть	—	—	Ճեստեայ կամ կարտօնի զլան (պա- սուճ) լցուց եալ փոքրիկ գնդակօք, փշրեալ երկաթիւ, կապարաւ և՛ն, ի յարձակելն զլանն ճայթիւ կարտեչն ցրուեալ նախճիրս գործէ 'ի թըշ- նամիս:
Жесть	—	—	Կուրք թիթեղն կամ տախտակ եր- կաթի:
Картонь	—	—	Ստուարաթուղթ:
Постъ	—	—	Տեղի՝ ուրանօք կարդեալէ զինուո- րական պահակն, ևս՝ պահակն ինքն:
Форпостъ	—	—	Պահակ յառաջոյ արմեային:
Рота	—	—	Մասն բատալիոնի բաղկացեալ 'ի սահմանեալ թուոյ զինուորաց:
Баталіонъ	—	—	Մասն հետեւակ գնդի՝ բաղկացեալ 'ի քանի մի բատէ (1000 դիւնուց+)
Ротмистръ	—	—	Գլխաւոր էսկադրօնի, էսկադրօնա- պետ:
Экадронъ	—	—	Մասն հեծելագնդոյ:
Гусаръ	—	—	Թռեթելնթաց հեծելագունդ՝ զգես- տաւորեալ ըստ օրինակի Անգեր- յուց (Ունգարաց):
Колонна	—	—	Յայտնի իմն շարադասութիւն՝ յա-

- բռւթ՝ մասունք գօրաց դաշնին զկնի
միմեանց. քանի մի նաւք ուղղադին
դասաւորեալք:
- Փրոպտ — Յառաջակողմն, ձակատ. շարադաս
գաւնդք գօրաց:
- Գրաֆъ — Այսին, տիտղոս ինչ զիսաւոր ազ-
նուաւթեան՝ որ չունի կամ չըերէ
դառանձին իմն իրաւունս:
- Յանъ — Ձիաւոր գօրական սպասադնեալ
տիգաւ. ի հնումն կոչեին գօրականք՝
բաղկացեալք ի Տաճկաց Պօլշացի
(Ահապատանի). պատօւակալ կամ
բարձրաստիթեան ի Տաճիկս:
- Դիզերսիա — Սուտ տեղափոխութիւն գօրաց՝ դի-
տաւորութեամբ խանգարելոյ զմիաս
գօրուն թշնամոյն. այնպիսի գործու-
ղութիւն գօրաց, որ չունի ամենեին
զյարակցութիւն ընդ սպատերագմին:
- Էկսպեդиція — Վաքեն ի հեռաւոր տեղիս զմար-
դիկ կամ զծովային նաւակս ի պէտա
պատերազմական նպատակաց. կամ
յաղագս լրտեսելոյ և զծագրելոյ
զվայրս ինչ:
- Մագալъ — "Ահանգ:
- Ճիւնեա — Զօրագունդ բաղկացեալ ի քանի
մի բրիկազէ. նաւատարմիլ. յարում
գտանին ինն նաւք և քանի մի փոքր
նաւակք:
- Երգада — Զօրագունդ բաղկացեալ. յերկուց
չնդոց (ուռկ):

Дивизионъ	—	Օօրակունդ 'ի հեծելտգորս բաղ- կացնալյերկուց իսկաղընաց:
Маршалъ	—	Օ ինուորական աստիճան 'ի Գրադ- դիա, սպարապետ:
Фельдмаршалъ	—	Բարձր աստիճան 'ի զինուորականնե անդերձանք կամ պատրաստութք դորձեաց թնդանօթաձիգ զօրաց:
Инженеръ	—	Օ ինուորական՝ որ դիտէ զուսումն պաշարելոյ, պաշտպանելոյ և ամրա- ցուցանելոյ զբերդս:
Конгрессъ	—	Ժողով թագաւոր աց կամ 'ի նո- ցունց հաւատացեալ անձանց վասն վճռելոյ զքաղաքականութեան (поли- тическій) գործս:
Батарея	—	Յայտնի թիւ թնդանօթաց հան- դերձ նաւաստեօք, արկղօք հրացան նիւթից, սայլիւք և ձիովք, հողա- բլուր շինեալ 'ի պատերազմական պաշտի, յորոյ վերայ հաստատն դթնդանօթս:
Шахъ	—	Տիտղոս Պարսիկ թագաւորաց:
Ханъ	—	Տիտղոս Տաճիկ իշխանաց կամ թա- գաւորաց, կողմանակալ:
Сардаръ	—	Փոխարքայ:
Брешъ- Батарея	—	Բառարէա՝ նշանակեալ առ. 'ի գոր- ծել զիսրամատս ՚ի պարիսպս ամրո- ցաց:
Кара	—	Վառակուսի դումար հետեւել զօ- րաց:
Амфитеатръ	—	Ա յնպիսի շինութիւն, որ աստիճանե-

սստիճան բարձրանոյ ՚ի քանի մի
վայրս վասն հայեցող հանդիսակաւ-
նոց:

- Վրա! — Զայն երախուսական, կեցցի ուրա-
խութեան աղաղակ զօրաց կամամ-
բոխի ՚ի նշան ջերմեռանդութեան:
- Կոկերъ — Ծառույ:
- Մուլլա — Հոգեւորական անձն առ Արհմե-
տականս:
- Имамъ — Պարւս հաւատոյ Տաճկաց:
- Мортира — Դործիք վասն արձակելոյ զփառօ-
դալից ուռմբս, ոմբկէն:
- Дистанция — Հեռաւորութիւն ՚ի մեջ երկուց ա-
ռարկայից միջոց կամ տարածութ-
եական ՚ի զլսոյ միոյ մասին զօրաց
մինչեւ ցզլուկն միւսոյ, մասն տեղւոյ՝
որ գտանի ՚ի մերձակայ կառավա-
րութեան մրոյ անձին, վիճակ:
- Комиссаръ — Ենձն որում յանձնեալ է տեսչու-
թիւն ՚ի վերայ պատրաստութեան
ուտելեղին պաշտրաց, դանագան իւ-
րաց մա:
- Патронъ — Փամփուշտ, Թղթեայ ծրար հան-
դերձ քանակութ միանդամ լցուցա-
նելի նիւթոյ ՚ի հրացանս:
- Քետրաձ — Յետագարձութ զօրաց և հնչութեա-
նիքի որպէս նշան յետագարձութ:
- Փառկերъ — Օինուոր հեծելտպնդոյ, որ առա-
քի մերձ ՚ի կողմանս զօրաց առ ՚ի
դատանել դժշնամին:

- Фалконетъ — Фոքріկ Թնդանօթ նաւային:
- Манифестъ — Բնդհանրական յայտարարութիւն
վասն կտմաց ինքնակալին կամ վասն
երևելի իմն անցից:
- Оttоманская — Տաճկական:
- Бакчя — Պարտէղ:
- Эшевонъ — Առանձին մասն արմիայի՝ որ յարձաւ
կի յելև էջ տեղիս:
- Десятина — Տարածութիւն երկրի երկայնուր
80 և լայնուր 30 սաժէն:
- Паша — Գրեներալ Տաճկաց կամ կառավաշ-
րիչ նահանգի:
- Визирь — Վազուրի, փոխարքայ:
- Дисциплина — Ռիշտ պահպանողութիւն սահմանեալ
կանոնացն ծառայութեան, ստորա-
դրութիւն փորու առաջի մեծի:
- Демонстрація — Սոււտ տեղափոխութիւն իրիք մա-
սին գորաց առ ՚ի մոլորեցուցանել
դմիոս թշնամեոյն յիսկական Շանտ-
պարհէն կլիսաւոր զօրութիւնը. յայտ-
նելն զկամն մոտաց կամ զդացովութեց
տուաքելով զպագտմաւորս, ժողովեա-
լով՝ ի փողոց և այլիօք այսպիսեօք.
յայտարարութիւնք:
- Кавалеръ — Ասպետ:
- Камцлеръ — Առաջին նախարար. զվասաւոր կա-
ռավարիչ տանենին կայսերական և
արքունի ասպետական նշանաց:
- Капитуль — Առենական տեղի, Ըսդ որոյ տես-
չութեամբ են դործք ասպետական
նշանաց:

- Պարտիզան՝ — Հաւատարիմ. զլիաւոր ստկաւա-
թիւ գօրաց, որք յարմիայէն առան-
ձին սկսանին զգործողութիւնս։
Ապահովացն պատրաստութիւնը հան-
դերձից կամ զինուց դիմուորաց։
Ինստրուկցիա՝ — Յայտաբարեւի կամ հրաման, յո-
րում նշանակին պարտաւորութիք
կատարելոյ։
Քոչովարանկ կտմ թուղթ ստորա-
դրութեամբ արքայի յանուն հպա-
ռափի։
-

ՊՐԻՊԵԿՎ ՏՊԱԳՐՈՒԹԵՍՆ.

ԵԶ	ՏՀՂ	ԱԼԱԽ	ԱՆԴԻՂ
11	— 1 —	Դամբերա	Դամբերու
”	— 5 —	նոյնը	— նոյն օրը
12	— 17 —	Զարդից	մարդից
19	— 32 —	ԸՆԼԵՔՍԵՆ	ԸՆԼԵՔՍԵՆ
		ԴՐԸ	ԴՐԸ
24	— , , —	Դէրբննզից	Դերբենտից
37	— 30 —	Հինութիան	Հինութիւն
42	— 21 —	Հպականներիցը	Հպատակներիցը
45	— 30 —	բէ	եր
49	— 27 —	բերելով՝	բերելով
53	— 21 —	ցոյց է տալիս	պատմումի
54	— 16 —	թափուելով, սաւ-	թափուելով սաւ-
		բերիցը	բերիցը,
58	— 31 —	արաւ, սաւ,	արաւ սաւ
59	— 25 —	պարկագունդն	պարեկագունդն
63	— 21 —	հրացաններ	զէնքեր
64	— 10 —	հարռւած	հարռւածի
76	— 9 —	յանկուցիչ	յանկուցիչ
”	— 13 —	հաւաննեցան	հաւաննեցանք
78	— 9 —	անմիբան	անմիտբան
79	— 26 —	ոյց	ցոյց
81	— 3 —	ոչնչացող	ոչնչացնող
82, 90 և 92-18, 22 և 30	Ծամոտաղիլու	Ծամշաղիլու	
97	— 4 —	հոգեւորաններին	հոգեւորականներին
98	— 22 —	Շանապարհաւն:	Շանապարհաւն
101	— 21 —	եկել	եկել էր

102	—	2	—	Տերեկ	—	Թապթալ
107	—	1	—	Խաչաձեւ	—	Խաչաձեւ:
111	—	1	—	Դատաստան	—	Դատարան
112	—	5	—	Բուրկուրատ	—	Բերկուշատ
157	—	24	—	անվում.	—	տանվում:

— 176 —

ՀՀ Ազգային գրադարան



NL0249867

